



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2013 թվականի N 785 - Ա

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԵՐՄՄԳՀԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻ ՍՏԵՂԾԵԼՈՒ, «ՄԻՏՐՈՆԻԿԿՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՄԵԿՆԱՐԿԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՄԻՏՐՈՆԻԿԿՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մասնավոր նախաձեռնությամբ «ՌԱՕ ՄԱՐՍ» փակ բաժնետիրական ընկերության և «ԵՐՄՄԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության տարածքներում ազատ տնտեսական գոտի ստեղծելու և այդ գոտու կազմակերպիչ ճանաչվելու համար ներկայացված հայտը, մասնավոր նախաձեռնությամբ ազատ տնտեսական գոտի ստեղծելու համար հայտը գնահատող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը, «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Ստեղծել ազատ տնտեսական գոտի (այսուհետ՝ ԱՏԳ) «ՌԱՕ ՄԱՐՍ» փակ բաժնետիրական ընկերության (ՀՀ 0064, քաղ. Երևան, Բաֆֆու 111) և «ԵՐՄՄԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության (ՀՀ 0033, քաղ. Երևան, Հակոբ Հակոբյան 3) տարածքներ-

րում՝ համաձայն N 1 հավելվածում նշված սահմանագծի, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման, դրա արդյունքում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման միջոցով արտահանման ծավալների աճի, նոր աշխատատեղեր ստեղծելու և կայուն տնտեսական զարգացում խթանելու նպատակով:

2. Սահմանել՝

1) ԱՏԳ-ի գործառնական տեսակը որպես արտադրաարդյունաբերական և տեխնիկակիրառական էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի և հեռահաղորդակցության (տվյալների) ինֆորմացիայի փոխանցման համար տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի և նյութերի նախագծում և արտադրություն) ոլորտներում «ՌԱՕ ՄԱՐՍ» փակ բաժնետիրական ընկերության տարածքի համար, իսկ «ԵրՄՄԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության տարածքի համար՝ տեխնիկակիրառական էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի և հեռահաղորդակցության (տվյալների) ինֆորմացիայի փոխանցման համար տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի և նյութերի նախագծում և արտադրություն) ոլորտներն սպասարկող գիտական հետազոտություններ և մշակումներ, փորձարարակոնստրուկտորական աշխատանքների ոլորտում.

2) կազմակերպչին և շահագործողին ներկայացվող չափանիշները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N 1521-Ն որոշման N 1 հավելվածի 11-րդ և N 2 հավելվածի 18-րդ կետերի.

3) ԱՏԳ-ի գործունեության ժամկետը՝ 10 տարի:

3. Ճանաչել «ՄԻՏՐՈՆԻԿՍ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (պետական ռեգիստրի վկայական՝ 03 Ա 085957, գրանցման համար՝ 264.120.08766) որպես ԱՏԳ-ի կազմակերպիչ:

4. Հաստատել՝

1) ԱՏԳ-ի տարածքի սահմանագիծը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «ՄԻՏՐՈՆԻԿՍ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած՝ ԱՏԳ ստեղծելու գործարար ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ԱՏԳ-ի գործունեության վերաբերյալ կազմակերպչի կողմից Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ներկայացվող հաշվետվության ձևերը՝ համաձայն N 3 հավելվածի:

5. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում «ՄԻՏՐՈՆԻԿՍ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել պայմանագիր:

6. ԱՏԳ-ի գործունեության մեկնարկը համարել թույլատրված՝ 2013 թվականի օգոստոսի 1-ից՝ մասնավոր նախաձեռնությամբ ազատ տնտեսական գոտի ստեղծելու համար հայտը գնահատող միջգերատեսչական հանձնաժողովի՝ ազատ տնտեսական գոտին շահագործմանը պատրաստ լինելու վերաբերյալ եզրակացության հիման վրա:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2013 թ. հուլիսի 26
Երևան




Հավելված N 1
 ՀՀ կառավարության 2013 թվականի
 հուլիսի 18-ի N 785 - Ա որոշման



ք. Երևան, Ռաֆֆուի 111

Հողամասի չափը 17,83364 հա



Ազատ տնտեսական զոնի

1

8534,5 մ²

2

8790,7 մ²

3

9735,2 մ²

Հապտ	Երկ. շառի	Գրկ անբարձրաց
1-2	12.0	2 և Բ. Տասնամյակի
2-3	68.5	Բ և Գ
3-4	32.0	— և —
4-5	18.75	— և —
5-6	32.0	— և —
6-7	2.25	— և —
7-8	18.0	— և —
8-9	64.0	Մ. Մարտի 1-ին օրը
9-10	6.0	— և —
10-1	24.0	— և —



Ե. համար	Ե. անբարձրաց
1	12 և Բ. Տասնամյակի 2 և Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԲԻԶՆԵՍ ԾՐԱԳԻՐ

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի հիմքի վրա ազատ տնտեսական գոտիներ ստեղծելու



ԵՐԵՎԱՆ 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռեգումե.....	4
Նախաբան	4
Ծրագրի Նախաձեռնողները	5
Ծրագրի էությունը և համառոտ նկարագիրը.....	8
Հայաստանում ԱՏԳ ստեղծելու նախադրյալները	9
Ազատ տնտեսական գոտիներն աշխարհում.....	12
Աշխարհում ԱՏԳ-ների ստեղծման ծրագրերի հաջողության առանցքային գործոնները	15
ԱՏԳ նպատակները, խնդիրները և ուղղվածությունը.....	18
«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում ԱՏԳ ստեղծման հիմնական նպատակները և խնդիրները	18
«Մարս» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում ստեղծվող ԱՏԳ-ների ուղղվածությունը	20
Մարկետինգային ռազմավարություն	24
ԱՏԳ միջազգային ճանաչմանն ուղղված միջոցառումներ.....	24
ԱՏԳ-ի առաջնային ուղղվածություններին համապատասխան հիմնական շահագործողների ներգրավմանն ուղղված միջոցառումներ.....	26
Աջակցություն ԱՏԳ շահագործողներին արտադրության/ ծառայությունների արտահանման ավելացման գործում.....	30
Ծրագրի իրականացման գործառնական պլան.....	31
ԱՏԳ պոտենցիալ (ենթադրվող) շահագործողների՝ինֆրաստրուկտուրայի հիմնական պահանջները.....	31
Ընդհանուր տեղեկություններ ծրագրվող ԱՏԳ-ների տեղակայվածության մասին.....	33
ԱՏԳ-ի ենթակառուցվածքը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ում.....	35
«ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ հիմքի վրա ԱՏԳ-ի ենթակառուցվածքը.....	41
Ներդրումային ծրագիրը և հիմնական ֆինանսական ցուցիչները	46
Կազմակերպչի կողմից ԱՏԳ գործարկմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների ընդհանրացված պլան-գրաֆիկ	52
ԱՏԳ տարածքում Կազմակերպչի կողմից տրամադրվող ծառայությունների ցանկը և դրանց բազային արժեքը.....	56
ԱՏԳ պոտենցիալ շահագործողներին ներկայացվող պահանջները	64
ԱՏԳ շահագործողի կարգավիճակի ձեռքբերում.....	65
Համագործակցությունը ԱՏԳ շրջանակներում	68
ԱՏԳ շրջանակներում հարաբերությունների հիմնական մասնակիցները և նրանց գործառույթները	68

Պետության մասնակցությունը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում ԱՏԳ ստեղծման և արդյունավետ գործունեության գործընթացում.....	73
<i>Տեղային խնդիրներ.....</i>	<i>73</i>
<i>Գլոբալ խնդիրներ և առաջարկներ.....</i>	<i>73</i>
«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի հիմքի վրա ԱՏԳ ստեղծման առավելությունները և շահերը.....	81
Ակնկալվող առավելությունները և շահերը ՀՀ համար.....	81
Այլ երկրների ԱՏԳ ստեղծման հաջող փորձի օրինակներ.....	82
Պոտենցիալ ռեզիդենտների և ներդրողների համար կանխատեսվող առավելություններն ու օգուտները.....	92
<i>Հնարավոր ռեզիդենտի համար ԱՏԳ գրավչությունը.....</i>	<i>94</i>
ԱՏԳ ստեղծման ակնկալվող արդյունավետությունը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ -ի համար	98
Ծրագրի SWOT վերլուծություն.....	100
Հիմնական եզրահանգումներ.....	102



Ռեզյումե

Նախաբան

2011թ. հուլիսի ութին Դոնի Ռոստով քաղաքում ՀՀ վարչապետ Տ.Ս.Սարգսյանի (Հանձնաժողովի հայկական կողմի նախագահ) և ՌԴ տրանսպորտի նախարար Ի.Ե. Լեվիտինի (Հանձնաժողովի ռուսական կողմի նախագահ) նախագահությամբ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության Միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նստաշրջանին քննարկվեց «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում «ՍԻՏՐՈՆԻԿՍ Արմենիա» ՓԲԸ-ի կառավարմամբ ազատ տնտեսական գոտիների ստեղծման հարցը:

Այս գոտիների ստեղծման նպատակով և հաշվի առնելով 2011թ-ի մայիսի 25-ին ընդունված «Ազատ տնտեսական գոտիների մասին» № ՀՕ-193-Ն ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) (ստորագրվել է 18.06.2011թ., ուժի մեջ է մտել 04.07.2011թ.)՝ կողմերը պայմանավորվել են, որ «ՍԻՏՐՈՆԻԿՍ Արմենիա» ՓԲԸ-ն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն կներկայացնի անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ՝ ՀՀ Կառավարության կողմից «ՍԻՏՐՈՆԻԿՍ Արմենիա» ՓԲԸ-ին՝ որպես «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում ստեղծվող ազատ տնտեսական գոտիների կազմակերպիչ հաստատելու համար:

Հետագայում, 2011թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ Կառավարության կողմից ընդունվեց N 1521-Ն Որոշումը (ուժի մեջ է մտել 19.11.2011թ.), որը լրացնում է Օրենքը և նրա հետ միասին կարգավորում է ՀՀ տարածքում ազատ տնտեսական գոտիների (այսուհետ՝ ԱՏԳ) ստեղծումը (Կառավարության որոշմամբ):

Վերոնշյալ պայմանավորվածություններին, ինչպես նաև «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքին և նորմատիվ իրավական ակտերին համապատասխան՝ «ՍԻՏՐՈՆԻԿՍ Արմենիա» ՓԲԸ-ն պատրաստել է սույն Բիզնես-ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որպես անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի բաղկացուցիչ մաս՝ «ՍԻՏՐՈՆԻԿՍ Արմենիա» ՓԲԸ-ին որպես «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում ազատ տնտեսական գոտիների կազմակերպիչ հաստատելու համար:

Ծրագրի Նախաձեռնողները

«Սիտրոնիկա Արմենիա» ՓԲԸ-ն՝ որպես կազմակերպիչ (այսուհետ՝ կազմակերպիչ կամ Օպերատոր. սույն Ծրագրի շրջանակներում կազմակերպիչ և Օպերատոր հասկացությունները հավասարազոր են) ծրագրում է վերոնշյալ ԱՏԳ-ների ստեղծումը՝ համագործակցելով «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի հետ (այսուհետ՝ բոլոր կազմակերպությունները միասին Նախաձեռնողներ):

«Սիտրոնիկա Հայաստան» ՓԲԸ-ն (իրավաբանական անձ, գրանցված և գործող ՀՀ օրենսդրությանը համապատասխան) հանդիսանում է «Սիտրոնիկա» ԲԲԸ-ի հարյուր տոկոսանոց դուստր կազմակերպությունը և ստեղծվել է 2009թ. ծրագրվող ԱՏԳ-ների կառավարման համար:

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ն և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ն 2008թ-ից գտնվում են «Սիտրոնիկա» ԲԲԸ-ի կառավարման ներքո: Կազմակերպությունների սեփականատերը հանդիսանում է ՌԴ-ն՝ ի դեմս Պետական գույքի կառավարման դաշնային գործակալության (Росимущество):

ՍԻՏՐՈՆԻԿԱ

«Սիտրոնիկա» ԲԲԸ-ն (ԱՖԿ «Սիստեմա»-ի կազմի մեջ մտնող) Արևելյան Եվրոպայում բարձրտեխնոլոգիական նորարարական Արևելյան Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի զարգացող շուկաներում լուրջ ներկայացվածությամբ խոշորագույն կազմակերպություն է՝ գործող տելեկոմունիկացիոն լուծումների, ինֆորմացիոն տեխնոլոգիաների և միկրոէլեկտրոնային արտադրանքի ոլորտում:

Ունենալով ցանկացած մաշտաբի բարձր տեխնոլոգիական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսները՝ կազմակերպությունը մշակում, արտադրում, ներդնում և ինտեգրում է ինչպես սեփական, այնպես էլ գործընկերների հետ միասին արտադրվող ապրանքներ:

Ռուսական և համաշխարհային շուկաներում կազմակերպության զարգացման առանցքային գործոն են հանդիսանում նորարարությունները: Կոնցեռնը իրականացնում է ակտիվ գիտահետազոտական և փորձարարական-ստրուկտուրական աշխատանքներ (Աթենքում R&D կենտրոններում, Պրահայում, Նյու-Դելիում, Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում և Զելենոգրադում):

«Սիտրոնիկս» ԲԲԸ-ն առաջատար դիրք է գրավում ինֆորմացիոն-կոմունիկացիոն տեխնոլոգիաների ռուսական շուկայում: 2009 և 2010թթ. ՌԱ «Էկսպերտ»-ի ցուցանիշներով կազմակերպությունը զբաղեցրել է 2-րդ տեղը ինֆորմացիոն-կոմունիկացիոն տեխնոլոգիաների առաջատար ռուսական շուկաներում, ինչպես նաև, ըստ Cnews-ի ընդգրկվել է 2009 և 2010թթ. Ռուսաստանի խոշորագույն ԻՏ կազմակերպությունների TOP 5-ի կազմում:


Կոնցեռնը դարձավ ռուսական երեք կազմակերպություններից մեկը, որն ընդգրկվեց European Commission-ի կողմից պատրաստված Monitoring Industrial research-ի TOP-1000 R&D կազմակերպությունների ցուցակում, որն իր մեջ ներառում է հետազոտությունների և մշակումների ոլորտում համաշխարհային առաջատար կազմակերպություններին:

«Սիտրոնիկս»-ն ունի ներկայացուցչություններ և մասնաճյուղեր աշխարհի 30 երկրներում, իրականացնում է արտահանում ավելի քան 60 երկիր: Կազմակերպության պաշտոնական գրասենյակը գտնվում է Մոսկվայում:

Աշխատակիցների ընդհանուր թիվը կազմում է մոտ 8000 մարդ, որոնցից ավելի քան 1000-ը աշխատում են հետազոտությունների և մշակումների ոլորտում:

Կազմակերպության հասույթը 2010թ-ին կազմել է 1, 167 միլիարդ ԱՄՆ դոլար:

Նկ. 1 Աշխարհում «Սիտրոնիկս»-ի տեղակայվածության աշխարհագրություն



«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ն հիմնադրվել 1988թ., որպես էլեկտրոնիկայի և ռոբոտատեխնիկայի գործարան, բարձրտեխնոլոգիական սարքավորումների, մասնավորապես՝ արտադրական արդյունաբերության տարբեր ոլորտներում օգտագործվող ղեկավարման սարքավորումների, կոմպլեքսային արտադրության համար: Գործարանը ստեղծվել էր որպես պետական ձեռնարկություն և հիմնադրման ժամանակ համալրված էր ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Իտալիայից և Շվեյցարիայից ներկրված, տվյալ ժամանակի համար առաջատար տեխնոլոգիաներով:

ԽՍՀՄ փլուզման, Հայաստանում և տարածաշրջանում դժվար, քաղաքական և սոցիալ-տնտեսական անկայուն իրավիճակի հետևանքով՝ պլանավորված արտադրությունն այդպես էլ չթողարկվեց: Հաջորդող 20 տարիների ընթացքում ձեռնարկությունը փաստացի չի թողարկել բարձրտեխնոլոգիական արտադրանք և հիմնականում վարձակալությամբ էր տրամադրում արտադրական տարածքները:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված «Գույք պարտքի դիմաց» համաձայնագրի համաձայն 2002թ. ընկերությունը փոխանցվել է Ռուսաստանի սեփականությանը:

2008թ-ից (երբ ընկերության կառավարումն անցավ «Սիտրոնիկս» ԲԲԸ-ին) ընկերությանը միացավ բարձրորակ մասնագետ-ինժեներների մի խումբ, ինչը հնարավորություն տվեց սկսելու հաստատուն մագնիսով համընթաց (սինխրոն) գծային շարժիչների, մագնիսային հաղորդակով ֆրեզերային վերմշակող հաստոցների, ինչպես նաև լազերային մետաղամշակող հաստոցների արտադրության տեխնոլոգիայի մշակումները: Վերջին երկու մշակումները հանդիսանում են բարձրտեխնոլոգիական սարքավորումներ և գործարանի նուս-հաուն:

Ներկայումս ընկերությունը արդեն սկսել է վաճառել բարձրտեխնոլոգիական արտադրանքի առաջին օրինակները և զարգացնում է իր երկարաժամկետ ռազմավարությունը այդ ուղղությամբ:

«ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ

Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը (ԵրՄՄԳՀԻ) հիմնադրվել է 1956թ-ին: Նրա գործունեության հիմնական ուղղություններ են եղել ժողովրդական տնտեսության մեջ էլեկտրոնային հաշվիչ

մեքենաների, ինչպես նաև ԽՍՀՄ ՊՆ-ի պատվերով ընդհանուր և հատուկ նշանակության ավտոմատ կառավարմամբ համալիրների և համակարգերի մշակումը և ներդրումը:

«ԵրԱԿՀԳԻ» ավտոմատ կառավարման համակարգերի Երևանի գիտահետազոտական ինստիտուտը հիմնադրվել է 1992 թ-ին «ԵրՄՄԳՀԻ» մի շարք ստորաբաժանումների հիման վրա, որոնց հիմնական ուղղությունն էր բարձր հուսալիության հաշվողական համալիրների և գլոբալ (տարածաշրջանային) կառավարման համակարգերի մշակումը:

«Նյութագիտություն գիտաարտադրական ձեռնարկություն»-ը ստեղծվել է 1970թ-ին ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության շրջանակներում՝ նպատակ ունենալով մշակել հատուկ նշանակության ոչ ավանդական նյութերի բաղադրությունը, ստեղծման տեխնոլոգիան և արտադրության կազմակերպումը: 2010թ-ին ինստիտուտները կոնսոլիդացվել են՝ «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ին միանալու միջոցով: Ինստիտուտը շարունակում է իր պրոֆիլային գործունեությունը, ավելի ակտիվորեն զարգանում է հատուկ նյութերի մշակման և արտադրության հետ կապված ուղղությունը:

Ներկայումս «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում վերակառուցվում է Անդրկովկասի մասշտաբներով առավել ժամանակակից էքսպոկենտրոն՝ 4700 քմ տարածքով, խոհրդակցությունների և կոնֆերանսների համար սարքավորումներով վերազինված սրահներով:

Ծրագրի էությունը և համառոտ նկարագիրը

Ծրագիրն առաջարկում է Հայաստանում՝ «ՌԱՕ ՄԱՐՍ» և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ների տարածքներում, ստեղծել երկու ազատ տնտեսական գոտի՝ համապատասխանաբար արդյունաբերաարտադրական և տեխնիկակիրառական, , «ՍԻՏՐՈՆԻԿՍ Արմենիա» ՓԲԸ-ի (Կազմակերպիչ) ընդհանուր ղեկավարման ներքո: «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի հիմքի վրա ստեղծվող ԱՏԳ-ի համար առաջարկվող գլոբալ ուղղվածություն է հանդիսանում բարձր-գիտատար տեխնոլոգիաների և արտադրության (High Tech) զարգացումը, իսկ «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի հիմքի վրա ստեղծվող ԱՏԳ-ի համար՝ նորարարությունների, գիտահետազոտական և փորձարարական ստրուկտուրական աշխատանքների (R&D) և ԻՏ (IT) զարգացումը:

Քննարկվող ԱՏԳ-ների գլոբալ մասնագիտացվածության նշված տիպերն ու ուղղությունները առաջարկվում են՝ հաշվի առնելով ձեռնարկությունների

նյութատեխնիկական, գիտատեխնիկական, արդյունաբերաարտադրական բազաները, Հայաստանի Կառավարության կողմից սահմանված տնտեսության զարգացման առաջնահերթ ուղղությունները, ինչպես նաև սույն Ծրագրում ստորև ուսումնասիրվող այլ փաստեր:

Ծրագիրն իրականացնելու համար Նախաձեռնողների կողմից նախատեսվող ներդրումների ընդհանուր ծավալը 2014թ-ի վերջին կգերազանցի 10 մլն. դոլարը, որից 1.7մլն-ը արդեն իսկ ներդրված է: Տվյալ ներդրումները կուղղվեն ինչպես ԱՏԳ-ների ենթակառուցվածքների ստեղծմանն ու բարելավմանը, այնպես էլ՝ ԱՏԳ-ների միջազգային ճանաչմանն ուղղված միջոցառումների իրականացմանը և ԱՏԳ-ներում պրոֆիլային շահագործողների ներգրավմանը:

ԱՏԳ-ների գործունեության սկսման և դրա գործարկման անհրաժեշտ պայմանների ապահովման համար միջոցառումների ու աշխատանքների համալիրի առաջին էտապը նախատեսվում է ՀՀ Կառավարության կողմից ԱՏԳ-ների ստեղծման մասին որոշում ընդունելուց հետո 6 ամսվա ընթացքում, ինչպես նաև «ՌԱՕ ՄԱՐՍ» և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ների տարածքում «ՍԻՏՐՈՆԻԿՍ Արմենիա» ՓԲԸ-ին ԱՏԳ-ի «Կազմակերպչի» կարգավիճակ շնորհելուց հետո:

Բացի օրենքով պահանջվող ԱՏԳ-ի ենթակառուցվածքային բաղադրիչներից, նախատեսվող ԱՏԳ-ներում կապահովվի նաև շահագործողների արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ ենթակառուցվածք՝ տրանսպորտային, ինժեներակոմունալ, գործարար, սպասարկման և այլն:

Մանրամասն տեղեկատվությունը Ծրագրի և դրա իրականացման մասին ներկայացված է հաջորդիվ սույն փաստաթղթում:

Հայաստանում ԱՏԳ ստեղծելու նախադրյալները

Խորհրդային Միության փլուզումից հետո ՀՀ-ն, ինչպես և հետխորհրդային պետությունների մեծամասնությունը, բախվեց տնտեսական օբյեկտիվ բարդությունների. փլուզվում էին ձեռքբերված տնտեսական կապերը և իրացման շուկաները, բազմաթիվ կադրեր դառնում էին ոչ պահանջված և հեռանում երկրից և այլն: Հայաստանի դեպքում այս խնդիրները տարաբնույթ կոնֆլիկտների հետևանքով լրացվեցին փաստացի տրանսպորտային շրջափակմամբ, էներգետիկ ռեսուրսների պակասով, բազմաթիվ արտադրությունների փակմամբ: Այս ամենի

արդյունքում Հայաստանը, որը խորհրդային ժամանակաշրջանում հանդիսանում էր գիտատար և բարձր տեխնոլոգիաների արտադրության կենտրոններից մեկը, զրկվեց իր հսկայական ներուժի մեծ մասից:

Համաշխարհային բանկի տվյալներով գիտատար և բարձր տեխնոլոգիաների արտահանումը Հայաստանից 2009թ. կազմել է ամբողջ արտահանվող արտադրանքի ընդամենը 3,7%-ը: Տարածքով համեմատելի այլ երկրների նման ցուցանիշները կազմել են. Սինգապուր-49%, Իսրայել-23%, Լիբանան-7,2%, Դոմինիկյան Հանրապետություն-5,4%, Սլովակիա-5,3%, Սլովենիա-6,5%, Էստոնիա-10%, Վրաստան-2,68% (այս երկրի վերաբերյալ՝ ըստ 2008 թ. տվյալների):

Անխոս, Հայաստանն ունի օբյեկտիվ մի շարք էական մրցակցային սահմանափակումներ, այդ թվում, օրինակ՝ նավահանգիստների բացակայությունը, փակ սահմանները հարևան երկրների հետ, բարձր տրանսպորտային ծախսերը: Սակայն, առանձին դեպքերում, այդ սահմանափակումները կարելի է օգտագործել սեփական մրցունակության բարձրացման համար: Այս դեպքերում ապրանքների/ծառայությունների բարձրարժեք արտադրությունը հանդիսանում է այն ռազմավարական առաջնայնությունը, որին անհրաժեշտ է հետևել: Մասնավորապես, սա վերաբերում է բարձր (գիտատար) տեխնոլոգիաների ոլորտի ապրանք/ծառայություններին, նորարարական լուծումներին: Երկրի մրցակցային առավելությունների շարքում կարելի է նշել նաև հարմար աշխարհաքաղաքական դիրքը Ռուսաստանի, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Ասիայի միջև, որակավորված աշխատանքային ռեսուրսների առկայությունը, տրադիցիոն ուժեղ գիտական հիմքը:

Շատ կարևոր է թույլ չտալ բարձր տեխնոլոգիաների, արտադրությունում գիտության և տեխնիկայի ձեռքբերումների ներդրման, ինովացիոն զարգացման, ինտելեկտուալ ներուժի բարձրացման ոլորտում ՀՀ-ի կրիտիկական չափով ետ ընկնելը: Կարևոր է պահպանել գոյություն ունեցող որակյալ ռեսուրսները, կրճատել այսպես կոչված «ուղեղների արտահոսքը»՝ նոր բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծմամբ: Կարևոր է նաև կրթության և նոր կադրերի պատրաստման այն համակարգերի օպտիմալիզացումը, որոնք թերի են բավարարում բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության պահանջները:

Մեր ժամանակներում տնտեսության զարգացման և սոցիալական առաջընթացի առանցքային գործոններ են հանդիսանում նորարարությունը, գիտությունը, կրթությունը: Գիտատեխնիկական բուռն առաջընթացի, գլոբալիզացիայի և միջպետական ու միջտարածաշրջանային մրցակցության սրման պայմաններում, ինչպես առաջատար, այնպես էլ՝ զարգացող պետությունների

(հատկապես զարգացող) առաջնային խնդիրներից մեկն է հանդիսանում տնտեսության մրցունակության և արտադրվող ապրանքների և ծառայությունների պահանջարկի բարձրացումը համաշխարհային տնտեսական համակարգում: Նաև անհրաժեշտ է ակտիվացնել երկրի մասնակցությունը աշխատանքի միջազգային բաժանմանը, զարգացնել տնտեսության արտահանման ուղղությունները: Ներկայումս էկսպորտային ուղղվածությունը դառնում է դոմինանտ դոկտրինա երկրիների մեծամասնության տնտեսական ռազմավարություններում:

Այս հարցը առավել սրվեց գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում: Ճգնաժամի հետևանքների մեղմման համար ամենաառանցքային խնդիրներից մեկը բազմաթիվ երկրների հակաճգնաժամային ծրագրերում հանդիսանում է արտահանման ավելացումը, նորարարական տնտեսության ստեղծումը/պահպանումը, հեռանկարային ուղղություններում օտարերկրյա ներդրումների ներգրավումը:

Ներդրումների ներգրավմանը նպաստող միջոցառումների լայն շրջանակներում հատուկ տեղ է հատկացվում տարածքային կառույցներին, որոնք ստացել են ընդհանրացնող «Ազատ տնտեսական գոտի» (ԱՏԳ) անվանումը:

Սակայն, ներկայումս համաշխարհային տնտեսությունում պետությունների միջև նկատվում է նաև սուր մրցակցություն այլ երկրներից կապիտալ ներդրումների ներգրավման համար տրամադրվող հարկային և այլ արտոնությունների ոլորտում: Արտոնությունների և պրեֆրենցիաների տրամադրումը պետք է դիտել որպես հաջողության համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման: Հարկային արտոնությունների տրամադրումը դա միայն առաջին քայլն է գոտու գրավչության ապահովման և օտարերկրյա կապիտալի ներհոսքի համար: Այս ուղղությամբ հաջողության հասնելու համար անհրաժեշտ է լուծել նաև համատնտեսական, սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական, գիտատեխնոլոգիական և այլ խնդիրներ:

Ելնելով այս նախադրյալներից, ՀՀ Կառավարությունը մտադիր է իրականացնել ակտիվ արդյունաբերական քաղաքականություն՝ տնտեսության էկսպորտային սեկտորի ընդլայնման համար: Այս քաղաքականության նպատակն է հանդիսանում Հայաստանում բարձրտեխնոլոգիական արտադրության և ծառայությունների աճը, աստիճանաբար անցումը ռեսուրսային արտադրությունից գիտատար արտադրության:

ՀՀ տնտեսական ռազմավարության առաջնահերթ ուղղություններից մեկը տնտեսության արդյունաբերական սեկտորի զարգացումն է հետևյալ շեշտադրությամբ՝

- ✓ հայկական արտադրանքի մրցունակության մեծացումը համաշխարհային շուկայում,
- ✓ արտահանման դիվերսիֆիկացիան,
- ✓ ՀՆԱ-ում արտահանման չափաբաժնի մեծացումը,
- ✓ գիտատար արտադրության զարգացումը:

Սույն Ծրագրով առաջարկվող համապատասխան տիպի և գլոբալ ուղղվածությամբ ԱՏԳ-ների ստեղծումը «ՌԱՕ ՄԱՐՍ» և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ների տարածքում ամբողջությամբ համապատասխանում է նշված պարամետրերին:

Ազատ տնտեսական գոտիներն աշխարհում

Ազատ տնտեսական գոտիները իրենցից ներկայացնում են ազգային տնտեսական տարածության մի մասը, որտեղ կիրառվում է արտոնությունների և խրախուսումների հատուկ համակարգ, որը չի կիրառվում երկրի մնացած մասերում:

ԱՏԳ զարգացման միջազգային ասոցիացիայի սահմանմամբ դրանք ,որպես կանոն, հանդիսանում են տնտեսական, գիտատեխնիկական, էկոլոգիական և սոցիալական զարգացմանը նպաստող տարածքային-տնտեսական կազմավորումներ, որոնք բաց են յուրաքանչյուր երկրի ֆինանսատնտեսական գործունեության համար:

Ներկայումս արտասահմանում առավել լայն տարածում ունի ԱՏԳ-ների սահմանումը՝ որպես այնպիսի տարածքների , որոնցում տնտեսական և կազմակերպչական կարգավորիչների օգնությամբ և առանց մաքստուրքի ռեժիմի ներդրման շնորհիվ խթանվում է օտարերկրյա ներդրումների ներգրավմամբ արտաքին տնտեսական գործունեությունը:

Սակայն պաշտոնապես ընդունվում է 1973թ. Կիոտոյի կոնվենցիայի Հավելված VII-ով տրված սահմանումը, համաձայն որի՝ ազատ գոտի ասելով՝ հասկացվում է երկրի տարածքի մաս, որում ապրանքները դիտարկվում են որպես ազգային մաքսային տարածքից դուրս գտնվող օբյեկտներ («մաքսային էքստերիտորիալության» սկզբունք), որի պատճառով էլ չեն ենթակվում ընդհանուր մաքսային հսկողության և հարկման:

ԱՏԳ տեսակները կարելի տարանջատել տարբեր չափանիշներով: Օրինակ՝ տնտեսական ուղղվածությունից կախված առանձնացվում են.

Աղ. 1 ԱՏԳ դասակարգումը տնտեսական ուղղվածության համապատասխան

Առևտրային	Արդյունաբերաարտադրական	Տեխնիկակիրառական	Սպասարկման	Կոմպլեքսային
1. Ազատ մաքսային	1. ներմուծումը փոխարինող	1. Տեխնոպոլիսներ	1. Օֆշորային	1. Ազատ ձեռնարկատիրության գոտիներ
2. Անմաքս պահեստներ	2. Արտահանման ուղղվածությամբ	2. Տեխնոպարկեր	2. Բանկային և ապահովագրական ծառայությունների	2. Մասնագիտացված տնտեսական գոտիներ
3. Ազատ նավահանգիստներ	3. Արդյունաբերական պարկեր	3. Նորարարական կենտրոններ	3. Տուրիստական ծառայությունների	3. Հատուկ ռեժիմի տարածքներ
4. Առևտրաարտադրական	4. Գիտաարդյունաբերական պարկեր 5. Արտահանման և ներմուծումը փոխարինող			4. Հատուկ տնտեսական գոտիներ

- **Առևտրի գոտիներ**- հիմնված են մաքսատարիֆային ռեժիմի և արտաքին առևտրի գործառնություններում արտահանման-ներմուծման նկատմամբ հսկողության մեղմման վրա:
- **Արդյունաբերաարտադրական գոտիներ** - տեղակայվում են այն տարածքներում, որտեղ արտահանվող կամ ներմուծման փոխարինող արտադրանք արտադրող կազմակերպություններին տրամադրվում են հարկային և մաքսային արտոնություններ:
- **Տեխնիկակիրառական** (տեխնոլոգիական գոտիներ) - այսպիսի գոտիների տարածքում կոնցենտրացված են նորարարական, գիտահետազոտական և փորձարարական ստրուկտուրական աշխատանքներ ծավալող, ԻՏ (ինֆորմացիոն տեխնոլոգիաների) ոլորտում գործող ազգային և օտարերկրյա կազմակերպություններ:
- **Սպասարկման** գոտիներ – առանձնանում են ֆինանսական, բանկային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար նախատեսված արտոնյալ ռեժիմով («հարկային թաքստոցներ»):
- **Համալիր գոտիներ** – տարբեր գոտիների տարրեր համադրող ազատ կամ «բաց» քաղաքներ, հատուկ տարածքներ:

Հատկապես զարգացող երկրներում լայն տարածում են ստացել արտահանման ուղղվածությամբ արտադրական գոտիները:

Տեխնիկակիրառական գոտիները ձևավորվում են ինքնաբերաբար (ԱՄՆ) կամ ստեղծվում են հատուկ՝ պետության աջակցությամբ խոշոր գիտական կենտրոնների շրջակայքում (Ճապոնիա, Չինաստան): Դրանցում կենտրոնացված են միասնական հարկային և ֆինանսական արտոնությունների համակարգից օգտվող

ազգային և արտասահմանյան հետազոտական, նախագծային, գիտաարտադրական կազմակերպություններ:

Տեխնիկակիրառական գոտիների ավելի մեծ քանակություն գործում է ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Չինաստանում: ԱՄՆ-ում դրանք անվանվում են տեխնոպարկեր, Ճապոնիայում՝ տեխնոպոլիսներ, Չինաստանում՝նոր, բարձր տեխնոլոգիաների զարգացման գոտիներ: Աշխարհում ամենահայտնի և ԱՄՆ-ում ամենախոշոր տեխնոպարկը՝ Silicon Valley-ը, տալիս է հաշվողական տեխնիկայի և համակարգիչների համաշխարհային արտադրության 20%-ը:

80-ական թթ-ից գիտական պարկերի ստեղծմանը միացան Հնդկաստանը, Մալազիան, Թայլանդը և այլք: Արդյունքում 90-ականներին աշխարհում գործում էին ավելի քան 7 հազար գիտական պարկեր՝ ընդգրկող հենց գիտական պարկերը, գիտական ռեզիդենտները, տեխնոպոլիսները և «բիզնես ինկուբատորները»:

Տնտեսապես զարգացած երկրներում ԱՏԳ-ները ներկայացված են բոլոր տեսակներով: Սակայն լայն տարածում են ստացել հատկապես ազատ առևտրի և գիտատեխնիկական գոտիները: Ինչպես վերը նշվեց զարգացող երկրներում առավել տարածված են արտահանման ուղղվածությամբ արտադրական գոտիները:

Այս փաստի պատճառները կապված են այդ երկրներում ԱՏԳ-ների կողմից իրականացվող հիմնական գործառույթների հետ: Դրանք են՝ երկրի տնտեսական աճի ապահովումը, երկրի տնտեսության ավելի բարձր մակարդակի ինդուստրալիզացիայի ձեռքբերումը, երկրի ներգրավումը աշխատանքի համաշխարհային բաժանմանը և միջազգային առևտրին կամ նրա տեղի փոփոխությունը՝ հաշվի առնելով առանձին ոլորտների կամ ամբողջ տնտեսության տրանսֆորմացիան:

Արտահանման ուղղվածությամբ արտադրական գոտիների ձևավորման տրամաբանությունը կանխորոշված էր զարգացող պետությունների ռազմավարությամբ, երբ 60-ականների կեսերին առաջացավ ի հաշիվ օտարերկրյա կապիտալի արդյունաբերական արտահանման և զբաղվածության խթանման անհրաժեշտություն:

ԱՏԳ-ն բազմաթիվ զարգացող երկրներում հաճախ հանդիսանում է տնտեսական աճի հիմնական կոնցեպցիան՝ նախատեսված երկարաժամկետ ժամանակահատվածի համար (20–30 տարի):

ԱՏԳ-ները զարգացող երկրներում առանձնանում են նաև ներգրավվող կապիտալի աղբյուրների համակարգով: Զարգացած շուկայական տնտեսությամբ

երկրներում դա հիմնականում ազգային մասնավոր կապիտալն է, իսկ զարգացողներում՝ հիմնականում օտարերկրյա մասնավոր կապիտալը: Այստեղից բխում է զարգացող երկրների ԱՏԳ-ների առանձնահատկությունը՝ պայմանավորված օտարերկրյա ներդրողների ներգրավման համար պետության կողմից սահմանված առավել բարենպաստ ներդրումային կլիմայով:

Չնայած առաջին ազատ տնտեսական գոտիները հայտնվել են Արևմտյան Եվրոպայում՝ ներկայումս դրանք բավականին տարածվել են ամբողջ աշարհում: Համաշխարհային բանկի գնահատականի համաձայն՝ աշխարհում հաշվվում է ավելի քան երեք հազար հատուկ տնտեսական գոտիներ 130 երկրներում, որը վկայում է նման տնտեսական կազմավորումների հսկայական հանրաճանաչության մասին:

Աշխարհում ԱՏԳ-ների ստեղծման ծրագրերի հաջողության առանցքային գործոնները

Ինչպես նշվեց, ներկայումս աշխարհում սուր մրցակցություն է ընթանում շատ երկրների միջև (հատկապես զարգացող) ֆինանսական ռեսուրսների և ներդրողների, նոր տեխնոլոգիաների և նորարարությունների ներգրավման համար: Նման պայմաններում հարկային արտոնությունների տրամադրումը հանդիսանում է անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման ԱՏԳ-ի արդյունավետ գործունեության համար:

Ավելին, համաշխարհային տնտեսությունում ազատ գոտիների տարածման ներկայիս մասշտաբներում հարկային արտոնությունները դա միայն առաջին քայլն է գոտու գրավչության ապահովման և օտարերկրյա կապիտալի ներհոսքի համար: Այդ առումով ոչ պակաս կարևոր կարող են թվալ այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ քաղաքական կայունությունը, ներդրումային երաշխիքները, ենթակառուցվածքի որակը, աշխատուժի որակավորումը, վարչական ընթացակարգերի պարզեցումը և այլն:

ԱՏԳ-ի ստեղծման և գործունեության համաշխարհային փորձը շատ հաջողությունների կողքին ունի նաև մի շարք անհաջող փորձեր: Հիմնականում անհաջողության պատճառ հանդիսանում են որոշակի սխալ հաշվարկները, որոնք թույլ են տրվում դեռևս նախագծման փուլում, և ԱՏԳ-ի վերաբերյալ կառավարության կողմից որդեգրված թերի քաղաքականությունը: Ամենատարածված սխալները և թերություններն են.

- ոչ բավարար ուշադրությունը բազային ենթակառուցվածքին (անհրաժեշտ մակարդակի հաղորդակցման ուղիների բացակայությունը, ավտոմոբիլային ճանապարհներ, օդային հաղորդակցություն, հեռահաղորդակցման և էլեկտրամատակարարման զարգացվածության ոչ բավարար մակարդակը),
- արտոնյալ ռեժիմների ստեղծման հետ կապված պետական կառույցների (ֆինանսների նախարարության, մաքսային մարմինների, էկոնոմիկայի նախարարության և այլն) և գոտու վարչակազմի միջև ոչ բավարար ինստիտուցիոնալ կապերը,
- գոտու տեղակայվածության անհաջող ընտրությունը (բնական և աշխատանքային ռեսուրսների փոքր ծավալ, շուկայի ոչ բավարար տարողունակություն),
- գոտու ոչ ռացիոնալ չափերի որոշումը: Առաջին անգամ ԱՏԳ ստեղծող և այդ գործում փորձ չունեցող երկրների համար բավականին դժվար է կազմակերպել մեծ գոտու կառավարումը: Բացի այդ, մեծ ԱՏԳ-ները՝ հատկապես մասնավոր բիզնեսի հետ համագործակցությամբ ստեղծվող, պահանջում են սկզբնական մեծ կապիտալ ներդրումներ, որոնք դժվար է ներգրավել,
- ԱՏԳ-ների ռազմավարական ուղղվածության հստակ պահանջների բացակայությունը,
- ԱՏԳ-ների գործունեության օրենսդրական կարգավորվածության անկայունությունը և ոչ թափանցիկությունը, ինչը, որպես կանոն, բերում է ներդրումների ցածր մակարդակի, կոռուպցիայի, արտոնությունների չարաշահման և այլն:

Միևնույն ժամանակ, ընդհանրացնելով համաշխարհային մաշտաբով ԱՏԳ-ների զարգացման հաջողակ փորձը (օրինակ՝ այնպիսի երկրների, ինչպիսիք են՝ ԱՄՆ, Իռլանդիան, Չինաստանը, Հնդկաստանը, Իսրայելը, Թայվանը, Ֆինլանդիան, Թայլանդը և այլն), կարելի անել հետևություններ ԱՏԳ-ների ստեղծման ծրագրերի հաջողության հետևյալ առանցքային գործոնների վերաբերյալ.

- Պոտենցիալ ներդրողների երկրային, ԱՏԳ-ի ճյուղային և նրա մասնակիցների առանձանահատկությունները հաշվի առնող պետական քաղաքականության հստակ կողմնորոշվածությունը ԱՏԳ-ների նկատմամբ, որոնք ձևակերպվում են ԱՏԳ-ների զարգացման երկարաժամկետ ծրագրերում, հայեցակարգերում (ընդգրկումը երկրի ռազմավարությունում),
- ԱՏԳ-ի հիմնական մասնակիցների՝ մասնավոր ձեռնարկությունների, պետական մարմինների, գիտակրթական համակարգերի, ֆինանսական ինստիտուտների և այլոց միջև տնտեսական կապերի (այդ թվում արտադրական, տեխնոլոգիական, ինովացիոն և այլն) զարգացումը,
- պետության կողմից ԱՏԳ-ի ձեռնարկությունների (ներդրողների)՝ տնտեսական զարգացման հետ կապված նախաձեռնություններին աջակցումը , մասնավորապես՝ հարկային և մաքսային արտոնությունների, պետական ներդրումների կամ վարկերի (արտոնյալ) ակտիվ օգտագործումը, վենչուրային ֆինանսավորման ինստիտուտի զարգացումը՝ որպես ԱՏԳ-ների աջակցության գործիքներ,

- գիտակրթական բազայի զարգացումը, օտարերկրյա գիտահետազոտական և փորձարարական ստրուկտորական աշխատանքներին ինտեգրման հնարավորության մեծացումը, այս ոլորտում միջազգային համագործակցության խթանումը,
- մարկետինգային քաղաքականության իրականացումը և ԱՏԳ-ի ներկայացումը արտաքին շուկաներում (ազգային և միջազգային)
- նորարարական տրանսֆերտը արտերկրից ստացված կամ գոտու սահմաններից դուրս ԱՏԳ ձեռնարկությունների կողմից մշակված տեխնոլոգիաների
- երկրի քաղաքական կայունությունը,
- ներդրումային երաշխիքները,
- ենթակառուցվածքի որակը,
- աշխատուժի որակավորումը,
- վարչարարական համակարգի պարզեցումը (բիզնեսի վարման համար վարչարարական խոչընդոտների բացակայություն),
- զարգացած բազային և հատուկ ծառայությունները ԱՏԳ շահագործողների համար,
- ԱՏԳ-ի մասնագիտացված կառավարումը (կառավարող կազմակերպություն, կազմակերպիչ):

Այսպիսով, ԱՏԳ հաջող գործունեության հիմքում ընկած է համազգային և ներգոտիային շահերի,ինչպես նաև ԱՏԳ տարածքում տեղակայված տնտեսական գործունեության սուբյեկտների առևտրային շահերի հավասարակշռության ձևավորումը և ԱՏԳ տարածքում զարգացող կազմակերպությունների, տարաբնույթ ԱՏԳ-ների ձեռնարկությունների, ԱՏԳ-ից դուրս՝ ազգային տնտեսությունում և արտասահմանում ձեռնարկությունների փոխհամագործակցության համակարգի կառուցումը՝ հաշվի առնելով այդ հավասարակշռությունը:

Հաշվի առնելով վերը նշված փաստերը՝ Հայաստանի տարածքում ԱՏԳ ստեղծման դեպքում կարելի է հուսալ ապագա հաջողության և այն դրական արդյունքների ձեռքբերման վրա, որոնք ակնկալվում են ԱՏԳ գործարկումից թե՛ պետության, և թե՛ ԱՏԳ Կազմակերպչի կողմից:

Մեր կարծիքով, պետության համար՝ որպես ԱՏԳ հաջող գործունեության ցուցանիշներ, կարող են ծառայել հետևալ հիմնական չափանիշները՝

- ներգրավված ներդրումների ծավալը,
- բնակչության զբաղվածության մակարդակի փոփոխությունը,
- արտահանման ծավալների և համակարգի փոփոխությունը,
- բնաչության կենսամակարդակի բարձրացումը,
- ԱՏԳ-ում արտադրվող արտադրանքի մրցունակության և արտադրության ծավալների աճը,
- բիզնեսի մրցունակությունը համեմատած այլ տարածքի համանման գործունեության հետ՝ ի հաշիվ կազմակերպման նոր ձևերի և մեթոդների օգտագործման,

- նպատակներին հասնելը ինչպես կարճաժամկետ, այնպես էլ՝ երկարաժամկետ ժամանակահատվածում,
- բարձր տեխնոլոգիաների օգտագործման մակարդակը և այլն:

ԱՏԳ նպատակները, խնդիրները և ուղղվածությունը

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում ԱՏԳ ստեղծման հիմնական նպատակները և խնդիրները

Ազատ տնտեսական գոտիների ստեղծումը շատ երկրների կողմից դիտարկվում և կիրառվում է որպես միջոց՝ ունակ ներգրավելու զգալի ներդրումներ, ընդլայնելու արտադրության (աշխատանք, ծառայություն) արտահանումը, փոփոխելու արտահանման համակարգը, ձեռք բերելու հասանելիություն նոր տեխնոլոգիաներին, ավելացնելու բնակչության զբաղվածությունը, նոր հնարավորություններ ձեռք բերելու կադրերի պատրաստման և վերապատրաստման համար, ներմուծելու համաշխարհային առաջավոր փորձը կազմակերպման և ղեկավարման ոլորտ և այլն:

Ելնելով Հայաստանի զարգացման ռազմավարական առաջնահերթություններից՝ ՀՀ Կառավարության համար ԱՏԳ-ի ստեղծման հիմնական խնդիրներն ու նպատակներն են հանդիսանում.

Տնտեսությունում՝

- մրցունակ արտադրանքի թողարկման նպատակով արտադրական հզորությունների ստեղծման համար ներդրումների ներգրավումը՝ հատուկ, արտոնյալ տնտեսական մեխանիզմների, կայուն օրենսդրական հիմքի, տարբեր կազմակերպչական ընթացակարգերի պարզեցման միջոցով,
- ազգային տնտեսության գլոբալ մրցունակության բարձրացումը,
- արտահանման ուղղվածություն ունեցող արտադրանքի ստեղծումը,
- արտահանման համակարգի դիվերսիֆիկացիան՝ բարձր տեխնոլոգիաների արտադրանքի մասնաբաժնի ավելացմամբ, բարձր մակարդակի վերամշակմամբ և բարձրարժեք արտադրանքով,
- բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումը, երկրի ներդրումային գրավչության բարձրացումը:

Սոցիալական ոլորտում՝

- նոր աշխատատեղերի ստեղծումը և բնակչության զբաղվածության բարձրացումը,
- աշխատուժի որակավորման բարձրացումը՝ կազմակերպման, կառավարման, ֆինանսների ոլորտներում համաշխարհային փորձի հետազոտման և ներդրման հաշվին,
- աշխատանքային և մտավոր ներուժի պահպանումը և զարգացումը,
- մենեջմենտի մշակույթի ձևավորումը՝ ուղղված կառավարման տեխնոլոգիայի համաշխարհային պահանջներին,
- բնակչության եկամուտների ավելացումը,

Գիտատեխնիկական ոլորտում՝

- առաջատար տեխնոլոգիաների ներգրավումը,
- նորարական պրոցեսների արագացումը:

ԱՏԳ-ի ստեղծումը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի հիմքի վրա թույլ կտա մաքսիմալ օգտագործել տվյալ կազմակերպությունների գիտատեխնիկական և արտադրական պոտ պոտենցիալը, որոնք իրենց ոլորտում ՀՀ-ում հանդիսանում են լավագույններից մեկը :

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի հիմքի վրա ԱՏԳ-ի ստեղծման հիմնական նպատակները Ծրագրի Նախաձեռնողների համար հանդիսանում են՝

- ԱՏԳ-ում գործունեության համար շահագործողների ներգրավումը և ձեռնարկությունների եկամտի ավելացումը,
- ձեռնարկությունների տարածքի և ենթակառուցվածքների արդյունավետ օգտագործումը,
- ձեռնարկությունների արտադրատեխնիկական բազայի արդյունավետ օգտագործումը,
- ձեռնարկությունների ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի զարգացումը:

ԱՏԳ Կազմակերպչի հիմնական խնդիրներն են հանդիսանում՝

- ԱՏԳ-ի օպերատիվ արդյունավետ կառավարումը,
- Անհրաժեշտ ենթակառուցվածքի և աշխատանքային պայմանների ապահովումը,
- Շահագործողների ներգրավումը,
- Արգասաբեր համագործակցությունը պետության հետ՝ ԱՏԳ զարգացման համար:

«Մարս» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում ստեղծվող ԱՏԳ-ների ուղղվածությունը

Այս կամ այն մասնագիտացմամբ ԱՏԳ ստեղծելիս պետք է հաշվի առնել ոչ միայն պետական գերակա ուղղությունները, այլև լոկալ գործոնները, օբյեկտիվ սահմանափակումները, տարածքի(օբյեկտների) բազան և ռեսուրսները, որոնց վրա պլանավորվում է ստեղծել ԱՏԳ-ն, աշխարհաքաղաքական դիրքը և այլն:

Այսպես, օրինակ, տրանսպորտային ԱՏԳ-ների համար անհրաժեշտ է տրանսպորտային խոշոր հանգույցի առկայություն: Դրանք, որպես կանոն, տեղակայվում են առափնյա քաղաքներում, որոնք ունեն ծովային նավահանգիստներ, երկաթուղային հաղորդակցություն, օդանավակայան: Այս պայմանները ցանկալի են նաև առևտրային, բանկային և այլ գոտիների համար: Զբոսաշրջության և ռեկրեացիոն գոտիների կազմակերպումը պահանջում է մշակութային և պատմական կենտրոնների, զբոսաշրջության համար գրավիչ լանդշաֆտների, զարգացած համապատասխան ենթակարուցվածքի և այլնի առկայություն:

ԱՏԳ-ի ռազմավարական ուղղվածությունն ընտրելիս ոչ պակաս կարևոր գործոն է հանդիսանում Կազմակերպչի (ԱՏԳ-ի կառավարող կազմակերպության) փորձը և իրավասությունը գործունեության այն ուղղություններում, որոնք պետք է ստեղծվող ԱՏԳ-ների համար հանդիսանան ռազմավարական: Հակառակ դեպքում ԱՏԳ-ի հետագա հաջող գործունեության հարցում ԱՏԳ-ի Կազմակերպչի աշխատանքի էֆեկտիվության գործոնը դժվար է գնահատել:

Այսպիսով՝ ԱՏԳ-ի ռազմավարական ուղղվածության (մասնագիտացման) ընտրությունը մեր կողմից հանգել է հետևյալ հիմնական չափանիշներին.

1. Հայաստանի Հանրապետության Կառավարության ռազմավարական առաջնահերթությունները՝ տնտեսական զարգացման ոլորտում,
2. «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի գիտաարտադրական, տեխնիկական, ենթակառուցվածքային բազան, տվյալ ձեռնարկությունների ներուժը, ինչպես նաև ՀՀ աշխարհագրական և ռեսուրսային հնարավորությունները և սահմանափակումները,
3. ԱՏԳ-ի Կազմակերպչի իրավասությունները և մասնագիտացումը (Արևելյան Եվրոպայի խոշորագույն բարձրտեխնոլոգիական ներդրումային ընկերություն հանդիսացող «ՍԻՏՐՈՆԻԿՍ» ԲԲԸ-ի հիմնական պրոֆիլը, որը հանդիսանում է «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքներում ստեղծվող

ԱՏԳ-ների Կազմակերպիչ «ՍԻՏՐՈՆԻԿՍ Արմենիա » ՓԲԸ-ի մայր ընկերությունը):

Մեր օրերում տնտեսական զարգացման և սոցիալական առաջընթացի հիմնական գործոնները հանդիսանում են նորամուծությունները, գիտությունը, կրթությունը: Հենց գիտության նորագույն ձեռքբերումների, տեխնոլոգիաների, նուս-հաուի մշտական արագ ներմուծումը կյանք ունակ է ապահովելու պետության մրցակցային առավելությունը ժամանակակից գլոբալ տնտեսությունում: Միևնույն ժամանակ, խոսքը վերաբերում է տնտեսության տարբեր ոլորտներում նորամուծությունների մշտական ներմուծմանը և օգտագործմանը:

Չնայած նրան որ գլոբալ տնտեսական ճգնաժամն ազդեցություն չի թողել աշխարհի սակավաթիվ մասերում միայն՝ այն ընդգծել է ոչ խոշոր խումբ կազմող երկրների երկարատև ճկունությունը և աճը, որոնք կարողացան տարբերվել՝ ի շնորհիվ առողջ նորամուծական համակարգերի օգտագործման: Այս կապակցությամբ, ինչպես նաև գլոբալիզացիայի, աշխարհի փոխկապակցվածության աճի հետևանքով՝ երկրները և տարածաշրջանները բախվում են ինչպես էական խոչընդոտների, այնպես էլ՝ հանդիպում հաջողության համար աճող հնարավորությունների հետ: Ապագայում այնքանով, որքանով գլոբալ տնտեսությունը կհաղթահարի հերթական անկման փուլը, նորամուծությունները կշարունակեն կարևոր դեր խաղալ, քանի որ երկրները ձգտում են ապահովել իրենց մրցակցային առավելությունը համաշխարհային շուկայում:

ՀՀ Կառավարության ռազմավարական առաջնայնությունների վրա իրենց անդրադարձն են ունեցել նաև վերոնշյալ արդիական համաշխարհային տենդենցները: Պատահական չէ, որ մինչև 2020թ-ը երկրի արտահանման ներուժի իրացման հեռանկարային ուղղությունների շարքում դերակատարում ունեն բիոտեխնոլոգիաները, դեղագործությունը, ճշգրիտ ճարտարագիտությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները: Այս ճյուղերը ուղղակիորեն կապված են «բարձր» և «գիտատար» տեխնոլոգիաների հասկացության հետ, ինչը ևս մեկ անգամ հաստատում է ավելի վաղ բերված փաստարկները՝ կապված երկրի գլոբալ մրցունակությունը հենց այդպիսի տեխնոլոգիաների և արտադրության ճանապարհով մեծացնելու հետ:

Բարձրարժեք արտադրանքի (ինչի թվին են դասվում գիտատար,բարձրտեխնոլոգիական սեկտորի ապրանքները) արտադրության շեշտադրման գործում իր դերն է խաղում նաև հայկական ապրանքների

արտահանման գրավչությունը էականորեն նվազեցնող տրանսպորտային բարձր ծախսերի գործոնը:

Հիմնվելով վերոնշյալ չափանիշների և փաստարկների վրա՝ Նախաձեռնողները առաջարկում են ստեղծել.

- ✓ «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի տարածքում- արդյունաբերա-արտադրական տիպի ԱՏԳ՝ բարձր, գիտատար տեխնոլոգիաների և արտադրության (High Tech) զարգացման ռազմավարական ուղղվածությամբ,
- ✓ «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում- տեխնիկա-կիրառական տիպի ԱՏԳ՝ high-tech ոլորտի նորարարությունների², գիտահետազոտական և փորձարարական ստրուկտուրական աշխատանքների (R&D) և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ռազմավարական ուղղվածությամբ:

ԱՏԳ-ում գործունեության ուղղվածությունների շարքում կլինեն.

¹ **Բարձր տեխնոլոգիաներ** (անգլ. *high technology, high tech, hi-tech*) — ներկայիս իրականությունում հնարավորինս նորագույն և պրոգրեսիվ տեխնոլոգիաներ: Բարձր տեխնոլոգիաների շարքում դասում են արդյունաբերության ամենագիտատար ոլորտները: Այս ծրագրի շրջանակներում ի նկատի են ունեցվող՝

- Էլեկտրոնիկա;
- Ծրագրային ապահովում, այդ թվում՝
 - Արհեստական ինտելեկտ;
- Անլար տեխնոլոգիաներ;
- Ռոբոտատեխնիկա;
- Նանոտեխնոլոգիաներ;
- Էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներ, էներգոխնայողական և այլընտրանքային էներգետիկա, այդ թվում՝
 - Թափոնների վերամշակում,
 - Ատոմային էներգետիկա,
 - Արևային էներգետիկա,
 - Ջրածնային էներգետիկա;
- Անվտանգության համակարգեր, այդ թվում՝
 - Բիոմետրիա,
 - Ցուցիչներ (датчики), դետեկտորներ, էլեկտրոնային անալիզատորներ;
 - Գաղտնի վերահսկողության համակարգեր;
- Նավիգացիոն տեխնոլոգիաներ;
- Բիոտեխնոլոգիաներ, այդ թվում՝
 - Գենետիկ ինժեներիա և գենոթերապիա,
 - Միկրոբիոլոգիական արդյունաբերություն.

² **Նորարարությունը դա**- ներդրված նորույթ է, որն ապահովում է շուկայում պահանջվող պրոցեսների և արտադրանքի արդյունավետության որակական աճը: Այն հանդիսանում է մարդու մտավոր գործունեության, երևակայության, ստեղծագործական գործընթացի, հայտնագործությունների, գյուտերի և ռացիոնալիզացիաների վերջնական արդյունք:

- էլեկտրոնիկա (էլեկտրոնային սարքեր և սարքավորումներ, միկրոէլեկտրոնիկա, թվային տեխնոլոգիաներ),
- Ճշգրիտ ճարտարագիտություն (այդ թվում ճշգրիտ մեքենաշինություն),
- դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- այլընտրանքային էներգետիկա (այդ թվում էներգոխնայողական տեխնոլոգիաներ),
- արդյունաբերական դիզայն,
- հեռահաղորդակցություններ (տվյալների/ինֆորմացիայի փոխանցման համար տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի և նյութերի նախագծում և արտադրություն),
- և այլ ուղղություններ բարձր և գիտատար տեխնոլոգիաների ոլորտում:

ԱՏԳ գործունեության և զարգացման գործընթացում (ԱՏԳ-ն ռեզիդենտներով համալրելը, կոնկրետ խոշոր շահագործողների ներգրավումը՝ ունակ իրենց շուրջ հավաքելու գործունեության հարակից ուղղություններից շահագործող ընկերությունների (հեռանկարային կլաստերների առաջացման ներուժ), ԱՏԳ գործունեության կոնկրետ ուղղություններում ներդրումային հոսքերիի ռեգուլյար վերլուծությունը, շահագործողների միջև կապերի առաջացումը, դրանց փոխլրացումը, սիներգիան, Կառավարության կողմից ռազմավարական առաջնահերթությունների սահմանումը և այլն), հեռանկարում համապատասխան նպատակահարմարության առաջացման դեպքում ՀՀ Կառավարության հետ համատեղ Կազմակերպչի կողմից կարող է սահմանվել վերոնշյալ ԱՏԳ-ների առավել նեղ մասնագիտացում, ուղղվածություն:

ԱՀԿ-ի տվյալներով 2010թ-ին համաշխարհային առևտրի ծավալը հասել է ավելի քան 15 տրիլիոն ԱՄՆ դոլարի: Միևնույն ժամանակ, համաձայն European Information Technology Observatory (EITO) գնահատականի՝ գիտատար և բարձր տեխնոլոգիական արտադրանքի շուկայի ծավալը 2010 թ-ին գերակշռել է 2 տրիլիոն եվրոն, իսկ բրիտանական կառավարության Department for Business, Innovation & Skills -ի տվյալներով R&D-ում առավել ակտիվ հազար ընկերություններ 2010-ին ծախսել են 344 միլիարդ ֆունտ ստերլինգ:

Հայաստանին անհրաժեշտ է փորձել զբաղեցնել իր տեղը այս աճող և երկրի ռազմավարական զարգացման համար ամենահեռանկարային դրածող շուկաներում:

Մարկետինգային ռազմավարություն

ԱՏԳ միջազգային ճանաչմանն ուղղված միջոցառումներ

Ծրագրվող ԱՏԳ-ներին անհրաժեշտ է նպատակային լսարանի սեգմենտների՝ պոտենցիալ ճյուղային և այլ վարձակալների, ներդրողների, ներգրավված պետական վարչությունների և գերատեսչությունների ներկայացուցիչների և այլնի, հետ մարկետինգային հաղորդակցության, կոմունիկացիաների դիվերսիֆիկացված կազմավորումը:

Երկրի արդյունաբերական և տնտեսական զարգացման պետական ռազմավարության շրջանակներում ԱՏԳ մեխանիզմների ստեղծման բացառիկության տեսակետից նպատակահարմար է պետության և ԱՏԳ Կազմակերպչի միջև առավելագույն սերտ համագործակցությունը ԱՏԳ բրենդի և շահագործող-կազմակերպությունների ապրանքների, ծառայությունների առաջխաղացման շրջանակներում:

Նախևառաջ անհրաժեշտ է պետական պաշտոնական կապերի (տեղեկատվական, դիվանագիտական և այլն) լիակատար օգտագործումը գործընկեր պետությունների արդյունաբերական միություններին ԱՏԳ-ի մասին (մասնագիտացման ոլորտը, առավելությունները, պայմանները և այլն) տեղեկացնելու համար:

Պետության տեղեկատվական օժանդակությունը կարող է նաև ներառել.

- օտարերկրյա պետությունների գործարար համագործակցության գործակալությունների հետ աշխատանքը,
- Պոտենցիալ շահագործողների համար Հայաստանի երկրային պրոֆիլի պատրաստումը,
- ԱՏԳ-ի վերաբերյալ տեղեկատվություն հասցնելու նպատակով դեսպանությունների առևտրային (կոմերցիոն) բաժինների մասնակցությամբ շնորհանդեսները,
- Ճյուղային նախարարությունների պաշտոնական նամակները օտարերկրյա գործընկերներին,
- Կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ հանդիպումները տեղական և արտասահմանյան գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ,

- ԶԼՄ-ների հաղորդագրությունները,
- ԱՏԳ-ի մասին գործընկերների տեղեկացումը պաշտոնական այցերի գործընթացում,
- աշխատանքը սուվերենֆոնդերի հետ,
- սփյուռքի ներգրավումը:

ԱՏԳ Կազմակերպիչն իր հերթին սերտորեն կհամագործակցի պետական մարմինների հետ ԱՏԳ բրենդի առաջխաղացման գործընթացում՝ լրացուցիչ իրականացնելով հետևյալ միջոցառումները.

- մասնագիտացված, պրոֆեսիոնալ ԶԼՄ-ների հետ համագործակցություն(ներառյալ ինտերնետային հրապարակումները),
- պրոֆեսիոնալ ճյուղային համաժողովներին և ցուցադրումներին մասնակցություն,
- հանրային հաղորդակցության ուղիղ ալիքի բացում (web կայք + ԱՏԳ մամուլի ծառայություն + ԱՏԳ տեղեկատվական ծառայություն),
- մասնակցություն տարբեր միջոցառումների, ֆորումների, համաժողովների, ցուցահանդեսների, պրեզենտացիաների և այլն,
- հայկական և արտասահմանյան ճյուղային միավորումների և արդյունաբերական միությունների հետ փոխգործակցություն:

ԱՏԳ հանրային տեղեկատվական պատկերը պետք է ներկայացնի նրանց որպես շուկայական և վճարովի ենթակառուցվածքներ, որոնք թույլ են տալիս բարձրտեխնոլոգիական և R&D կազմակերպություններին Հայաստանում ստանալ մրցակից պետություններին չզիջող աշխատանքի պայմաններ: Բացի այդ, մարկետինգային մարտավարությունից առավելագույն արդյունքի ստացման համար մարկետինգային նպատակները կհարմարեցվեն յուրաքանչյուր ԱՏԳ-ի կոնկրետ առանձնահատկություններին: Ընդ որում հստակ ուշադրություն կհատկացվի ԱՏԳ առաքելության ձևավորմանը, նպատակային լսարանին, գնագոյացման հիմնական սկզբունքներին և մրցակցային առավելություններին, ԱՏԳ արդյունավետ դիրքորոշմանը՝ որպես շահագործողին գրավող հարթակի՝ նախատեսող հարկային և մաքսային արտոնություններ և գործունեության հարմարավետ պայմաններ նաև լրացուցիչ ծառայությունների լայն համալիր ինչպես կազմակերպությունների, այնպես էլ՝ դրա աշխատակիցների համար:

Անհատական մարկետինգային մարտավարության ձևավորման համար կներգրավվեն որակավորված մասնագետներ և ԱՏԳ կոնկրետ սեկտորի աշխատանքներում որակավորված բարձրակարգ մարկետինգային և գովազդային կազմակերպություններ:

Այս ամենը թույլ կտա «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում ստեղծելու ԱՏԳ-ի ճանաչելի բրենդ, միջազգային աուդիտորիայի մոտ ձևավորելու հստակ ճանաչելի երկրային ասոցիացիա, խթանելու «ԱՏԳ շահագործող»-ի կարգավիճակ ձեռք բերելու պահանջարկին՝ հայկական սփյուռքի և բարձր տեխնոլոգիաների և գիտատար արտադրության ոլորտում գիտահետազոտական և գործարարական գործունեության մասնակիցների ներգրավմամբ:

ԱՏԳ-ի առաջնային ուղղվածություններին համապատասխան հիմնական շահագործողների ներգրավմանն ուղղված միջոցառումներ

ԱՏԳ բազային շահագործողների ներգրավմանն ուղղված մարկետինգային ռազմավարության առաջին մակարդակի առաջնահերթությունները կլինեն բարձր տեխնոլոգիաների և R&D սեգմենտում համաշխարհային առաջատարների ներգրավմանն ուղղված ջանքերը(անդրազգային կորպորացիաների, որոնք պատրաստ են ոչ միայն դառնալ ԱՏԳ շահագործող, այլև ի վիճակի են իրենց ետևից ներգրավելու արտասահմանյան և հայկական կազմակերպություններ հարակից ոլորտներից): ԱՏԳ-ներից յուրաքանչյուրում առաջին տարիներին համաշխարհային մասշտաբի երկու-երեք հայտնի (բրենդային) կորպորացիաների առկայությունը հնարավորություն կտա ստեղծվելիք ԱՏԳ-ներին պոտենցիալ պրոֆիլային շահագործողների (ներդրողների) աչքերում ձեռք բերել վարկունակ այնպիսի հիմք, որը հետագայում հնարավորություն կստեղծի Հայաստանում համապատասխան կլաստերների հաջող զարգացման համար:

Բարձր տեխնոլոգիաների և R&D ոլորտի հայտնի բրենդների հաջող ներգրավման համար անհրաժեշտ է պետության և ԱՏԳ Կազմակերպչի սերտ համագործակցությունը: Հենց նրանց համաձայնեցված աշխատանքը կտա ցանկալի արդյունք:

Մասնավորապես, նպատակահարմար են համարվում և կիրականացվեն հետևյալ քայլերը.

- Կազմակերպությունների և դրանց հիմնական պրոֆիլի ուսումնասիրությունը,
- Հայկական սփյուռքի ներկայացուցիչների (այդ թվում՝ այդպիսի կորպորացիաների բարձրաստիճան ղեկավարների) միջոցով ճյուղային կազմակերպությունների հետ աշխատանքի հնարավորությունների ուսումնասիրությունը,

- Բանակցություններում հետաքրքրված կազմակերպությունների short-list-ի կազմումը,
- Roadshow-ի անցկացումը Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի առանցքային երկրներում,
- Կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անմիջականորեն և պրոֆիլային ներդրումային ֆորումներում մասնակցության ընթացքում և այլ միջոցներով կապերի հաստատում,
- Բանակցությունների անցկացումը և ԱՏԳ-ում կազմակերպությունների մասնակցության պայմանների սահմանումը:

Քննարկվող կազմակերպությունների ցանկում առաջին հերթին կմտնեն հետևյալ առաջին էշելոնի համաշխարհային բրենդները:

Աղ. 2 Բարձր տեխնոլոգիաների և ԻՏ ոլորտում կազմակերպությունների ցանկ

Կազմակերպություն	Ոլորտ	Երկիր
LG	կենցաղային էլեկտրոնիկա	Հարավային Կորեա
Motorola	կենցաղային էլեկտրոնիկա	ԱՄՆ
Panasonic	կենցաղային էլեկտրոնիկա	Ճապոնիա
Philips	կենցաղային էլեկտրոնիկա	Նիդեռլանդներ
Sony	կենցաղային էլեկտրոնիկա	Ճապոնիա
Toshiba	կենցաղային էլեկտրոնիկա	Ճապոնիա
Acer	համակարգչային տեխնիկա	Թայվան
Dell Inc.	համակարգչային տեխնիկա	ԱՄՆ
Fujitsu	համակարգչային տեխնիկա, ծրագրային ապահովում	Ճապոնիա
IBM	համակարգչային տեխնիկա, ծրագրային ապահովում	ԱՄՆ
Sun Microsystems	համակարգչային տեխնիկա, ծրագրային ապահովում	ԱՄՆ
Apple Inc.	համակարգչային տեխնիկա, ծրագրային ապահովում, կենցաղային էլեկտրոնիկա	ԱՄՆ
Hewlett-Packard Company	համակարգչային տեխնիկա, ծրագրային ապահովում, կենցաղային էլեկտրոնիկա	ԱՄՆ
Microsoft	համակարգչային տեխնիկա, ծրագրային ապահովում, կենցաղային էլեկտրոնիկա	ԱՄՆ
AMD	Կիսահաղորդիչներ	ԱՄՆ
Intel Corporation	կիսահաղորդիչներ, համակարգչային տեխնիկա	ԱՄՆ
Adobe	ծրագրային ապահովում	ԱՄՆ
Oracle Corporation	ծրագրային ապահովում	ԱՄՆ
SAP AG	ծրագրային ապահովում	Գերմանիա

Կազմակերպություն	Ոլորտ	Երկիր
Symantec	ծրագրային ապահովում	ԱՄՆ
Google	ծրագրային ապահովում	ԱՄՆ
Yahoo	ծրագրային ապահովում	ԱՄՆ
Veritas Software	ծրագրային ապահովում	ԱՄՆ
Computer Associates	ծրագրային ապահովում	ԱՄՆ
Borland	ծրագրային ապահովում	ԱՄՆ
Samsung	ծրագրային ապահովում, կենցաղային էլեկտրոնիկա	Հարավային Կորեա
Hitachi Global Storage Technologies	տեղեկատվության պահպանում	ԱՄՆ

Աղ. 3 Կազմակերպությունների ցանկը R&D ոլորտում

Կազմակերպություն	Ոլորտ	Երկիր
Toyota	ավտոմեքենաներ և պահեստամասեր	Ճապոնիա
Daimler	ավտոմեքենաներ և պահեստամասեր	Գերմանիա
Robert Bosch	ավտոմեքենաներ և պահեստամասեր	Գերմանիա
Roche	դեղագործություն և բիոտեխնիկա	Շվեյցարիա
Pfizer	դեղագործություն և բիոտեխնիկա	ԱՄՆ
Novartis	դեղագործություն և բիոտեխնիկա	Շվեյցարիա
Johnson&Johnson	դեղագործություն և բիոտեխնիկա	ԱՄՆ
Sanofi-Aventis	դեղագործություն և բիոտեխնիկա	Ֆրանսիա
GlaxoSmithKline	դեղագործություն և բիոտեխնիկա	Մեծ Բրիտանիա
Merck	դեղագործություն և բիոտեխնիկա	ԱՄՆ
Tekeda Pharmaceutical	դեղագործություն և բիոտեխնիկա	Ճապոնիա
Siemens	էլեկտրոնային և էլեկտրական սարքավորումներ	Գերմանիա

Սակայն աշխատանքներ կտարվեն նաև ոլորտի այլ առաջատար կազմակերպությունների հետ:

Կազմակերպչի և պետության ներդաշնակ համատեղ աշխատանքը հիմքեր կտա կանխորոշելու ԱՏԳ պրոֆիլային վարձակալների ներգրավման հետևյալ նպատակային ուղենիշները.

Աղ. 4 ԱՏԳ վարձակալների ներգրավման առաջարկվող նպատակային ուղենիշները

	ԱՏԳ սշխատանքների ժամանակահատվածը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ում «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ում		
	2012-2015 թթ.	2016-2017 թթ.	2018-2020 թթ.
Հիմնական վարձակալների ներգրավում			
Ներգրավված առաջին և երկրորդ էջելոնի բարձր տեխնոլոգիական և ԻՏ կազմակերպությունների քանակը	1	1	1
Ներգրավված խոշոր R&D կազմակերպությունների քանակը	1	2	1
Պրոֆիլային վարձակալներով ԱՏԳ զբաղեցման մակարդակը			
ԱՏԳ «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ում	40%	70%	90%
ԱՏԳ «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ում	40%	60%	90%

ԱՏԳ-ների շահագործողներով աստիճանաբար զբաղեցման բերված կանխատեսումը հիմանավորված է նրանով, որ Կազմակերպչի առաջնահերթությունը շահագործողների ներգրավման գործընթացում կլինի ուղղվածությունը դեպի առավել որակյալ պրոֆիլային շահագործողներ: Սա հատկապես կարևոր է Հայաստանում բարձր տեխնոլոգիաների ոլորտում ստեղծվող ԱՏԳ-ների «պիլոտային» բնույթով պայմանավորված , երբ կարևոր է հաջողության պատմությունը՝ ունակ երկրի բարենպաստ վարկ ստեղծելու ընդհանրապես և բազա, ոլորտի հետագա զարգացման համար մասնավորապես:

«Սիտրոնիկա Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչները արդեն սկսել են նախնական բանակցությունները մի քանի միջազգային խոշոր ընկերությունների հետ ծրագրավորվող ԱՏԳ-ներում նրանց աշխատելու կապակցությամբ: Այժմ նախնական բանակցությունների արդյունքում որպես գործընկեր ներկայանում են՝

- GlaxoSmithKline (բրիտանական դեղագործական կազմակերպություն, աշխարհում խոշորներից մեկը),
- PARAVAN կազմակերպությունների խումբ (ռուսական շուկայում առաջատարներից մեկը անվտանգության համակարգերի, արդյունաբերական ավտոմատիզացման և համակարգային ինտեգրացիայի ոլորտում),
- CargoMatrix, Inc. (ամերիկյան կազմակերպություն, բեռնափոխադրումների և լոգիստիկայի ոլորտում ԻՏ լուծումների և ծրագրերի մշակման առաջատարներից մեկը),

- Fabtech (միջազգային կազմակերպություն. բիոտեխնոլոգիական և դեղագործական, բարձր տեխնոլոգիական կազմակերպությունների նախագծման, ինժեներիայի և հազեցման ծառայություններ մատուցող),
- Bystronic Laser (կազմակերպություն, շերտային մետաղի և այլ հարթ նյութերի լազերային մշակման ոլորտում լուծումներ առաջարկող) և այլն:

Պոտենցիալ շահագործողների հետ բանակցության գործընթացն ավելի արդյունավետ և առարկայական կլինի «Սիտրոնիկս Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ԱՏԳ Կազմակերպչի կարգավիճակ ստանալուց հետո, քանի որ Կազմակերպչի իրավասությունների իրական հավաստումը շատ կարևոր է առաջատար միջազգային ընկերությունների հետ բանակցությունների ընթացքում:

Ներկայումս դժվար է կանխատեսումներ անել ԱՏԳ պոտենցիալ շահագործողների ներդրումների ծավալի մասին, դրանք կհամապատասխանեն նրանց զարգացման ռազմավարական ծրագրերին:

Նախնական կանխատեսումներով զբաղեցման վերոնշյալ տեմպերի դեպքում, «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում գտնվող ԱՏԳ-ները կապահովեն նոր աշխատատեղերի զգալի ծավալ:

Աղ. 5 ԱՏԳ-ում նոր աշխատատեղերի ստեղծման կանխատեսում

	ԱՏԳ սշխատանքների ժամանակահատվածը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ում «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ում		
	2012-2015 թթ.	2016-2017 թթ.	2018-2020 թթ.
Աշխատատեղեր (մարդ)			
Ստեղծվելիք նոր աշխատատեղերի կանխատեսելի քանակ	1500	3500	5000

Աջակցություն ԱՏԳ շահագործողներին արտադրության/ ծառայությունների արտահանման ավելացման գործում

ԱՏԳ գործունեության ընթացքում Կազմակերպիչը պետության հետ համատեղ անհրաժեշտ ջանքեր կգործադրի աջակցելու ԱՏԳ շահագործող կազմակերպություններին արտադրության/ծառայությունների իրացման և արտահանման պոտենցիալ շուկաներ գտնելու գործում:

Ի թիվս այլ բաների, շահագրգիռ պետական նախարարությունների և գերատեսչությունների հետ համատեղ շահագործողներին կտրամադրվեն հետևյալ ծառայությունները.

- պոտենցիալ հետաքրքրություն ներկայացնող արտահանման շուկաների մասին տեղեկացում, այդ թվում՝ արտահանման պայմաններ,
- կոնկրետ ապրանքների շուկաների մասնագիտացված հետազոտություն,
- միջազգային սերտիֆիկացման հայկական կազմակերպությունների ծախսերի պետական սուբսիդավորման հնարավորության սահմանում,
- հիմնական միջազգային ցուցահանդեսներում հայկական շահագործող-կազմակերպությունների մասնակցության ապահովում,
- հայկական շահագործող-կազմակերպությունների արտադրանքի և ծառայությունների առաջխաղացում արտասահմանյան առևտրային ներկայացուցչությունների միջոցով,
- լայնամաշտաբ PR ակցիայի անցկացում օտարերկրյան ՋԼՄ-ներում և այլն:

Ծրագրի իրականացման գործառնական պլան

ԱՏԳ պոտենցիալ (ենթադրվող) շահագործողների՝ինֆրաստրուկտուրայի հիմնական պահանջները

Այլ երկրների փորձից ելնելով, հիմնական գործոնները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ԱՏԳ-ի ստեղծման ժամանակ նախևառաջ, բացի հարկային և այլ արտոնություններից, կարելի է բաժանել 4 խոշոր խմբի՝

- 1. Բարենպաստ գործարար միջավայր ԱՏԳ գործունեության համար, այդ թվում՝**
 - հարմարավետ գրասենյակային տարածքներ,
 - տրանսպորտային հասանելիություն և տրանսպորտային ցանցերի բարձրորակ մակարդակ՝

- ✓ ընդունելի հեռավորության վրա միջազգային օդանավակայանի առկայություն (20-80կմ),
- ✓ որակյալ ամտոմոբիլային ճանապարհների առկայություն (նաև նախընտրելի է միջազգային մայրուղիների առկայությունը):
- տարածքայի մոտիկությունը խոշոր բնակավայրի,
- որակյալ կոմունալ ենթակառուցվածքի առկայությունը (այդ թվում՝անխափան էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, աղբահանություն և այլն),
- կրթական (ԲՈՒՀ, համալսարան) և տեխնոլոգիական (ԳՀԻ) կենտրոնների որպես ինտելեկտուալ ռեսուրսի մատակարարների առկայությունը (համատեղ արտադրական ծրագրեր, որակավորված կադրերի պատրաստում ը և այլն),
- իշխանությունների պատրաստակամությունը ակտիվորեն աջակցել ԱՏԳ գործունեությանը,
- ԱՏԳ տարածքի ընդլայնման հնարավորությանը ճկուն արձագանքումը:

2. ԱՏԳ որակյալ ենթակառուցվածքը, այդ թվում՝

- գործարար ենթակառուցվածք (գրասենյակային տարածքներ, կոնֆերանս-կենտրոններ և այլն),
- պահեստային և լոգիստիկ ենթակառուցվածք (պահեստներ, պահեստային և լոգիստիկ ծառայություններ),
- «մեկ պատուհանի» ծառայություններ (պետական մարմինների կողմից գրանցման, թույլատվական և այլ փաստաթղթերի արագացված ձևակերպում),
- մաքսային ենթակառուցվածք (մաքսային ձևակերպումների և ընթացակարգի անցկացում տեղում),
- արդյունաբերական ենթակառուցվածք (արդյունաբերական տարածքներ, ինժեներական ցանցեր և այլն);

3. Աշխատուժի ապահովում (ինչպես ԱՏԳ պրոֆիլային ճյուղերի, այնպես էլ օժանդակ ծառայությունների աշխատուժով ապահովում)

4. Հանրային ծառայությունների ենթակառուցվածքի ապահովում (սոցիալական և կոմունալ)

- բժշական ծառայությունները,
- ճաշարաններ, սրճարաններ, ռեստորաններ,
- դեղատներ,
- սպասարկման կետեր,
- խանութներ,
- բանկեր, ապահովագրական կազմակերպություններ,
- հսկվող ավտոկանգառ մարդատար ավտոմեքենաների համար,
- հակահրդեհային ծառայություն,
- անվտանգության ծառայություն, տարածքի և շինությունների տեսահսկողություն.

Հիմնվելով վերոնշյալ չափանիշների վրա և հաշվի առնելով տարածքի առանձնահատկությունները, ռազմավարական ուղղվածությունը, օբյեկտների բնույթը և այլ գործոններ, սահմանել ենք «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում ԱՏԳ ենթակառուցվածքի ապահովման անհրաժեշտությունը:

Ընդհանուր տեղեկություններ ծրագրվող ԱՏԳ-ների տեղակայվածության մասին

Նախևառաջ անհրաժեշտ է նշել «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում ԱՏԳ-ի շահեկան տեղակայվածությունը Հայաստանի մայրաքաղաք Երևանում գտնվելու տեսանկյունից: Երևանը հանդիսանում է երկրի քաղաքական, տնտեսական, ֆինանսական, կրթական և մշակութային կենտրոնը:

Այս ամենը ապահովում է զարգացած սոցիալ-կենցաղային, գործարար, ֆինանսական, սպասարկման և այլ ենթակառուցվածքների առկայությունը, անհրաժեշտ ինչպես պոտենցիալ շահագործողների արդյունավետ գործունեության համար, այնպես էլ դրանց աշխատակիցների բազմազան ժամանցի համար:

Երևանը նաև հանդիսանում է Հայաստանի մեծագույն տրանսպորտային հանգույցը: Բացի Երևանով անցնող ռեզիոնալ և պետական նշանակության ավտոմայրուղիներից, քաղաքի կենտրոնից 20 կմ հեռավորության վրա է տեղակայված ժամանակակից միջազգային «Զվարթնոց» օդանավակայանը, որը

լավագույնն է Հարավային Կովկասում: 2011թ. սեպտեմբերին բացվել է օդանավակայանի նոր տերմինալը 34 քառ.մ ընդհանուր մակերեսով: Նոր տերմինալի շահագործման արդյունքում «Զվարթնոց» օդանավակայանը կարող է սպասարկել տարեկան 3,5 միլիոն ուղևոր (նախկին 1,6 միլիոնի փոխարեն): Ավելին, մոտ ժամանակներս օդանավակայանում կկազմավորվի ԱՏԳ, որը հնարավորություն կտա օգտագործելու լոգիստիկայի լրացուցիչ սիներգետիկ հնարավորություններ:

Հայաստանի համար հիմնական նավահանգիստները, որոնցով իրականացվում է ապրանքաշրջանառությունը դեպի երկիր և երկրից դուրս, վրացական Փոթիի (մոտ 560 կմ) և Բաթումի (մոտ 700 կմ) նավահանգիստներն են: Բեռնափոխադրումը իրականացվում է բեռնատար մեքենաների և երկաթուղային տրանսպորտի միջոցով:

Հայաստանի համար տրանսպորտային ևս մեկ միջանցք հանդիսանում է բեռների տրանզիտը Իրանով:

Շեռանկարում, մի շարք առկա խնդիրների կարգավորումից և երկաթուղու վրաց-աբխազական հատվածի բացումից հետո, հնարավոր է նաև Հայաստանից Ռուսաստան, Ուկրաինա, ԱՊՀ և Եվրասիայի այլ պետություններ երկաթուղու վերաբացում, որն իրականացվում էր նախկինում խորհրդային ժամանակներում:

Գոյություն ունեցող տրանզիտ միջանցքների բարելավման նպատակով գործընկերների հետ համատեղ Հայաստանի Կառավարության կողմից նախատեսվում է բեռափոխադրման իրավիճակը զգալիորեն բարելավվող մի շարք ռազավարական նախագծերի իրականացում:

Մասնավորապես, Հայաստանի Կառավարության մոտակա պլաններում նախատեսված է միջազգային նշանակություն ունեցող «Հյուսիս-Հարավ» մայրուղու կառուցման հաստատված ծրագրի իրականացման սկիզբը: Ըստ էության դա կլինի տրանսպորտային միջանցք, որը կապահովի Հայաստանի Վրաստանի տարածքով դեպի Սև ծով ելքը (սևծովյան և միջերկրածովյան տարածաշրջանի հետագա ելքով). կծգվի Հայաստանի հարավից՝ Մեղրիի շրջանից մինչև Սև ծովում վրացական նավահանգիստներ: Պլանավորվում է կառուցել Հայաստանի հյուսիսից հարավ ժամանակակից բազմուղի, արագընթաց մայրուղի, որը թույլ կտա բառացիորեն հաշված ժամերի ընթացքում անցնելու երկրի ամբողջ տարածքը:

Հայկական մայրաքաղաքից մինչև Բաթումի ճանապարհի երկարությունը, որն այժմ կազմում է 700 կմ, նոր ճանապարհի կառուցումից հետո կկրճատվի մինչև 450 կմ: Ապագա մայրուղու երկարությունը գործողից 35%-ով կարճ կլինի: Բացի վառելիքի տնտեսումից, նոր ավտոճանապարհը հնարավորություն կտա նաև տնտեսելու ժամանակ: Մասնավորապես, Բաթումից Երևան երկաթուղային փոխադրումները այսօր երկու-երեք օր են տևում, իսկ ավտոմոբիլային փոխադրումները կտևեն հինգից վեց ժամ: Դա շատ կարևոր առավելություն է, քանի որ Հայաստանի արտաքին առևտրի 70%-ը բաժին է հասնում Վրաստանի տարացքով փոխադրմանը: Իսկ հարավում մայրուղին հասնում է Իրանի հետ սահմանին: Իր դիրքի ուժով այսպիսի արագության մայրուղին կարող է դառնալ տարածաշրջանում կարևորագույն տարանցիկ ուղիներից մեկը: Ավտոմայրուղին կձառայի որպես Եվրոպա-Ասիա միջանցքի շարունակություն՝ Իրանով դեպի Մերձավոր Արևելք, Հնդկաստան, Միջին Ասիա և այլուր: Մայրուղու մեծամասշտաբ կառուցումը նախատեսվում է 2012թ. գարնանը:

Քննարկվող մեծ տրանսպորտային նախագծերից կարելի է առանձնացնել նաև Իրան-Հայաստան երկաթուղու կառուցման նախագիծը, որը Հայաստանին այլընտրանքային ճանապարհով էներգառեսուրսների և այլ ապրանքների փոխադրման հնարավորություն կտա:

Բոլոր այս միջոցառումները ընդունակ են բարելավվելու Հայաստանի տարանցիկ հնարավորությունները և օգտագործելու նրա աշխարհագրական դիրքը:

ԱՏԳ-ի ենթակառուցվածքը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ում

Կազմակերպությունը գտնվում է ք. Երևան, Րաֆֆու 111 հասցեում:

Նկ. 2 «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի տեղակայվածությունը Երևանի քարտեզի վրա



Տրանսպորտային ենթակառուցվածք

Ձեռնարկությունը քաղաքի հետ կապվում է երկու ճանապարհներով, մասնավորապես՝ Րաֆֆու փողոցով և 9 մետր լայնության այլընտրանքային ճանապարհով, որն անցնում է մասնավոր հատվածով: ԱՏԳ զարգացման շրջանակներում նախատեսվում է ճանապարհի որակի բարելավում: Տվյալ հարցում նաև նախատեսվում է քաղաքի վարչակազմի հետ համագործակցություն (ճանապարհային ենթակառուցվածքի զարգացում և բարելավում):

Մինչ 90-ականների սկիզբը դեպի գործարան գցվել է երկաթուղի, սակայն հետագայում դրանք ապամոնտաժվել են: Ներկայումս երկաթգիծը բացակայում է ոչ միայն գործարանի տարածքի հատվածում, այլ նաև բացակայում է այդ ուղղությամբ ընդհանուր ճյուղը: Ավելին, գցված գծերի նախկին տեղերի երկայնքով ներկայումս իրականացվել են մասնավոր կառուցումներ (հիմնականում առանց համապատասխան թույլտվությունների): ԱՏԳ զարգացման և երկաթուղային տրանսպորտի գործարկման անհրաժեշտության դեպքում Հայաստանի կառավարության կողմից, «Հարավկովկասյան երկաթուղի»ՓԲԸ-ի հետ համատեղ, անհրաժեշտ կլինի ջանքեր գործադրել դեպի գործարան երկաթգծի անցկացման համար: Անհրաժեշտ կլինի նաև լուծել ապօրինի կառույցների հարցը՝ իրավասու պետական գերատեսչությունների և մարմինների ներգրավմամբ:

ԱՏԳ տարածքում նախատեսվելու են բեռնատար տրանսպորտի համար համապատասխան տեխնիկական պայմաններով հատուկ ավտոկանգառներ: Նաև կապահովվեն բավարար քանակությամբ կանգառային տեղեր թեթև ավտոմոբիլային տրանսպորտի համար:

Ինժեներակոնունալ ենթակառուցվածք

Ձեռնարկությունն ապահովված է էլեկտրաէներգիայի 24 մՎտ հզորությամբ: Նախատեսվում է լրացուցիչ մալուխների անցկացումը անխափան էլեկտրասնուցման ապահովման համար՝ հիմնական գծի խափանման դեպքում: ԱՏԳ զարգացման ընթացքում անհրաժեշտության դեպքում կապահովվի լրացուցիչ հզորությունների անցկացումը:

Անցկացված է գազատար: Անհրաժեշտության դեպքում կանցկացվի նոր գազատար՝ գազի լրացուցիչ ծավալի ապահովման համար:

Ապահովված է ջրամատակարարումը և ջրահեռացումը:

Ձեռնարկության տարածքում նաև առկա է մուտք դեպի մաքրող կայանքներ (արտադրական ընկերությունների համար):

ԱՏԳ-ի ստեղծման գործընթացում կիրականացվեն աշխատանքներ գոյություն ունեցող ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ (շինության վերանորոգում, ներքին ցանցերի, մագիստրալային ջրատարների և կոյուղիների բարելավում և այլն):

Կապ

ԱՏԳ-ի գրասենյակային և արտադրական տարածքները կհագեցվեն ֆիքսված հեռախոսային կապով և գերարագ ինտերնետով:

Բջջային կապի հիմնական օպերատորների ազդանշանների հասանելիության որակը գրասենյակային տարածքներում գնահատվում է լավ, ձեռնարկության տարածքի մյուս հատվածումներում՝ նորմալ : Անհրաժեշտության դեպքում հնարավոր կլինի օպերատորների լրացուցիչ բազային կայանների տեղադրումը:

Գործարար ենթակառուցվածք

Ժամանակակից գործարար ենթակառուցվածքի առկայությունը հանդիսանում է անհրաժեշտ պայման բիզնեսի բարեհաջող զարգացման համար:

Վարձակալությամբ տրվող տարածքներ

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի տարածքում ԱՏԳ-ն պոտենցիալ վարձակալներին պատրաստ կլինի տրամադրելու.

- **55 799 քմ արտադրատնտեսական տարածքներ,**
- **10 908 քմ գրասենյակային տարածքներ:**


ԱՏԳ տարածքի մեջ մտնող 20920 քմ արտադրական տարածքների վրա տեղակայված են «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի սեփական արտադրական հզորությունները: Քանի որ ձեռնարկության արտադրությունը հիմնականում հանդիսանում է բարձրտեխնոլոգիական, ընկերությունը հույս ունի ստանալ ԱՏԳ շահագործողի կարգավիճակ:

Հաշվի առնելով ձեռնարկության տարածքից ոչ պրոֆիլային վարձակալներին հեռացնելու անհրաժեշտությունը (կնքված են երկարաժամկետ պայմանագրեր և ժամանակ կպահանջվի կոնտրագենտների արտադրությունների/պահեստների այլ տարածքներ տեղափոխման համար)՝ կկազմակերպվի ազատ (ազատված) տարածքների ընդգրկումը ԱՏԳ-ի մեջ՝ պահպանելով պետության կողմից ԱՏԳ-ի տարածքի վերաբերյալ ներկայացվող բոլոր պահանջները:

Շահագործողները հնարավորություն կունենան կնքելու վարձակալության պայմանագրեր մինչև 10 տարի ժամկետով՝ երկարաձգման նախապատվության իրավունքով:

Հանրային սննդի կազմակերպման ծառայություններ տրամադրող վարձակալների համար առկա է ձեռնարկության արտադրական շինության երկրորդ հարկում գտնվող տարածքները օգտագործելու հնարավորություն՝ ճաշարանի կազմակերպման համար (որը նախկինում ենթադրվում էր):

Նկ. 3 «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի ակտուալ սխեմատիկ պլանը



ԱՏԳ «Կենտրոնացված ընդունելության» ծառայություն

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ տարածքի ԱՏԳ-ում կգործի «Կենտրոնացված ընդունելության» ծառայությունը: Տվյալ ծառայության գործառույթների մեջ կմտնի հյուրերի ընդունումը, ԱՏԳ-ի և շահագործողների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և այլն:

Լոգիստիկ ծառայություններ

Կազմակերպիչը կոմերցիոն հիմունքներով կտրամադրի մաքսային ձևակերպում անցած բեռների պահեստավորման լոգիստիկ ծառայություններ, մասնավորապես.

- Կոնտեյներների պահպանման հնարավորություն հատուկ կոնտեյներային տարածքներում(շինություններում),
- Բեռների պահպանման հնարավորություն հաստատված(սահմանված) ջերմաստիճանի ռեժիմներով և բաց տարածքներում,

- Բեռների, կոնտեյներների ընդունման և բեռնաթափման հնարավորություն ավտոմոբիլային տրանսպորտի մեջ,
- Ապրանքի վերամշակման, հսկողության, հաշվառման և ներպահեստային տեղաշարժման հնարավորություն,
- Բեռների մեկ տրանսպորտից մեկ այլ տրանսպորտ վերաբարձման հնարավորություն:

“Մեկ պատուհանի” ծառայություններ

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ տարածքի ԱՏԳ-ում ներդրողների(շահագործողների) հարցերի լուծման նպատակով պետական մարմինների հետ համագործակցությամբ կստեղծվի պետական ծառայությունների մատուցման համակարգ «Մեկ պատուհանի» սկզբունքով:

“Մեկ պատուհանի” համակարգի նպատակը կայանում է նրանում, որպեսզի արագացնի թույլատրություն տրամադրող փաստաթղթերի ձևակերպման գործընթացը, միաժամանակ պակասեցնելով հոգնեցուցիչ բյուրոկրատական և վարչարարական գործընթացները, տրամադրելով պետական մարմինների և կազմակերպությունների հետ միասնական շփման կետ բոլոր գործարար հարաբերությունների համար:

Մաքսային ենթակառուցվածք

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ տարածքի ԱՏԳ-ում կսարքավորվի ՀՀ մաքսային մարմինների պահանջներին համապատասխանող և ժամանակակից սարքավորումներով հագեցված մաքսային տերմինալ, որը թույլ կտա հնարավորինս պակասեցնել մաքսային զննության և ընթացակարգերի ժամանակը:

Մաքսային ենթակառուցվածքը իր մեջ կընդգրկի հետևյալ օբյեկտները.

- Մաքսային կետ, որը ժամանակին կապահովի ԱՏԳ շահագործողների ապրանքների մաքսային ձևակերպումները,
- Ավտոմեքենաների հսկիչ-անցագրային կետեր,
- Բեռնատար և թեթև ավտոտրանսպորտի խորացված զննության խցիկ,
- Տրանսպորտային միջոցների զննության համար ծածկ,
- Կոնտեյներային հրապարակ,
- Մաքսային պահեստ (ժամանակավոր պահպանման պահեստ),
- Ավտոկանգառ:

Անվտանգություն և էկոլոգիա

Կազմակերպիչը կապահովի ԱՏԳ ամբողջ տարածքի անվտանգությունը: ԱՏԳ տարածքը կպարսպապատվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ամբողջ տարածքը կհագեցվի տեսահսկողության միջոցներով: Բացի այդ, կապահովվի մուտքի-ելքի անցագրային ռեժիմ, կապահովվի շուրջօրյա պահպանություն: Կապահովվի լուսավորությունը ԱՏԳ ամբողջ տարածքում:

ԱՏԳ-ում կապահովվի հակահրդեհային համակարգը, ինչպես նաև տեղակայված կլինի ամբողջությամբ սարքավորված հակահրդեհային անվտանգության կետ: Կկազմակերպվի առաջին բուժօգնության կետ:

ԱՏԳ բոլոր շահագործողներից, նրանց աշխատակիցներից, ինչպես նաև բոլոր այլ անձանցից կպահանջվի տեխնիկական անվտանգության սահմանված նորմերի պահպանում, կանցկացվի կանոնավոր հրահանգավորում և այլն:

Բոլոր օբյեկտները, որոնք գտնվում են ԱՏԳ տարածքում, պետք է բավարարեն սանիտարական, հակահրդեհային, էկոլոգիական և այլ սահմանված նորմերին: Կմշակվի արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման պլան՝ շահագործողներին համապատասխան տեղեկատվության տրամադրմամբ (տեղեկատվական ստենդեր և այլն):

ԱՏԳ-ում անվճար կհատկացվի տարածք (50մ² ոչ պակաս) բնապահպանական նորմերի և պահանջների ապահովման նպատակով՝ անհրաժեշտ ստուգաչափիչ սարքավորումների տեղադրման համար:

Ներկայացուցչական ենթակառուցվածք

ԱՏԳ շահագործողները կկարողանան օգտվել 4700քմ տարածքով ժամանակակից էքսպոկենտրոնի ծառայություններից (տեղակայված «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում) ցուցահանդեսների, բանակցությունների և կոնֆերանսների անցկացման համար ամբողջությամբ սարքավորված սրահներով, որը բաց կլինի 2012թ. ցուցահանդեսների շրջանի սկզբին:

Հասարակական սպասարկման ենթակառուցվածք

Ք.Երևանում ԱՏԳ-ի գտնվելը լայն հնարավորություններ է տալիս ԱՏԳ շահագործողների աշխատակիցների համար ապրելու և հանգիստը կազմակերպելու համար: Սակայն, շահագործող ընկերությունների աշխատակիցների աշխատանքի համար լրացուցիչ հարմարավետ պայմաններ ստեղծելու համար նախատեսվում է ԱՏԳ տարածքում տեղակայել հասարակական սպասարկման բնույթի օբյեկտների համալիր:


Մասնակիորեն, այդպիսի օբյեկտների աշխատանքի ապահովման համար Կազմակերպչի կողմից մրցութային կարգով կներգրավվեն առևտրային

կազմակերպություններ (Կազմակերպիչը նրանց վարձակալությամբ կտրամադրի տարածքներ/շինություններ և կվերահսկի աշխատանքը):

Այդպիսի օբյեկտների շարքում նախատեսվում է ունենալ, մասնավորապես.

- Հանրային սննդի օբյեկտ (ճաշարան, սրճարան),
- Առաջին բուժօգնության կետ,
- Շահագործողների (արտոնյալ) և հյուրերի (վճարովի) թեթև ավտոմեքենաների կայանատեղի,
- Պատճենահանման կենտրոն (լուսապատճենահանման, տպագրելու և այլ ծառայություններ),
- Նոտարական գրասենյակ և թարգմանությունների բյուրո,
- Բանկային և ապահովագրական ծառայություններ,
- Իրավաբանական ծառայություններ (խորհրդատվություն),
- Խորհրդատվական ծառայություններ (բիզնես-խորհրդատվություն, կառավարչական խորհրդատվություն, ֆինանսական խորհրդատվություն և այլն),
- Վիզային կենտրոն (վիզաների և գրանցման ձևակերպման կենտրոն):


Նկ. 4 «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ տարածքում նախատեսվող ԱՏԳ-ի մակերը



«ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ հիմքի վրա ԱՏԳ-ի ենթակառուցվածքը

Ձեռնարկությունը գտնվում է ք.Երևան, Հակոբ Հակոբյան 3 հասցեում:

Նկ. 5 «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տեղակայվածությունը Երևանի քարտեզի վրա



Տրանսպորտային ենթակառուցվածք

Ձեռնարկությունը գտնվում է քաղաքի գլխավոր մայրուղիների անմիջական հարևանությամբ (մասնավորապես՝ Կիլյան, Կոմիտաս, Քոչար, Բաղրամյան փողոցների) ճանապարհների համապատասխան որակով:

ԱՏԳ տարածքում կնախատեսվեն են հատուկ մուտքեր բեռնատար և թեթև ավտոտրանսպորտի համար: Նաև կապահովվեն բավարար քանակությամբ կանգառային տեղեր թեթև ավտոմոբիլային տրանսպորտի համար:

Ինժեներական հնթակառուցվածք

Ձեռնարկությունը ապահովված է էլեկտրաէներգիայի 6.3 մՎտ հզորությամբ:: Նախատեսվում է լրացուցիչ մալուխների անցկացումը հիմնական գծի վթարի ժամանակ անխափան էլեկտասնուցման ապահովման համար: Անհրաժեշտության դեպքում ԱՏԳ զարգացման ընթացքում կապահովվի լրացուցիչ հզորությունների անցկացում:

Անցկացված է գազատար 150 խմ ծավալով: Անհրաժեշտության դեպքում կանցկացվի նոր գազատար՝ գազի լրացվուցիչ ծավալի ապահովման համար:

Ապահովված է ջրամատակարարում և ջրահեռացում:

ԱՏԳ ստեղծման գործընթացում աշխատանքներ կիրականացվեն առկա ենթակառուցվածքների էական բարելավման ուղղությամբ (շինությունների վերանորոգում, ներքին ցանցերի, մագիստրալային ջրագծերի և կոյուղիների բարելավում և այլն):

Կապ

ԱՏԳ-ի գրասենյակային և արտադրական շինությունները կհամալրվեն ֆիքսված հեռախոսային կապով և գերարագ ինտերնետով:

Բջջային կապի հիմնական օպերատորների ազդանշանի որակը գերազանց է:

Գործարար ենթակառուցվածք

Ժամանակակից գործարար ենթակառուցվածքի առկայությունը հանդիսանում է անհրաժեշտ պայման բիզնեսի բարեհաջող զարգացման համար:

Վարձակալությանը տրվող տարածքներ

«ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում ԱՏԳ-ն հնարավորություն կունենա պոտենցիալ վարձակալներին տրամադրելու 27060,4 քմ գրասենյակային տարածքներ, որտեղ հնարավոր է կազմակերպել նաև R&D լաբորատորիաներ:

Շահագործողները հնարավորություն կունենան կնքելու վարձակալության պայմանագրեր մինչև 10 տարի ժամկետով՝ երկարաձգման նախապատվության իրավունքով:

“Մեկ պատուհանի” ծառայություններ

«ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքի ԱՏԳ-ում ներդրողների(շահագործողների) հարցերի լուծման նպատակով պետական մարմինների հետ համագործակցությամբ կստեղծվի պետական ծառայությունների մատուցման համակարգ «Մեկ պատուհանի» սկզբունքով:

ԱՏԳ «Կենտրոնացված ընդունելության» ծառայությունը

«ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքի ԱՏԳ-ում կգործի «Կենտրոնացված ընդունելության» ծառայությունը: Տվյալ ծառայության գործառույթների մեջ կմտնի հյուրերի ընդունումը, ԱՏԳ-ի և շահագործողների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և այլն:

Մաքսային և պահեստային ենթակառուցվածք

«ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում ստեղծվող ԱՏԳ-ում կտեղակայվի ժամանակակից սարքավորումներով հագեցված մաքսային կետ, որը թույլ կտա հնարավորինս պակասեցնել մաքսային զննության և ընթացակարգերի ժամանակը:

Անհրաժեշտության դեպքում ԱՏԳ շահագործողները կարող են օգտվել «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ տարածքում տեղակայված պահեստների ծառայություններից:

Անվտանգություն և էկոլոգիա

Կազմակերպիչը կապահովի ԱՏԳ ամբողջ տարածքի անվտանգությունը: ԱՏԳ տարածքը կպարսպապատվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ամբողջ տարածքը կհագեցվի տեսահսկողության միջոցներով: Բացի այդ, կապահովվի մուտքի-ելքի անցագրային ռեժիմ, կապահովվի շուրջօրյա պահպանություն: Կապահովվի լուսավորությունը ԱՏԳ ամբողջ տարածքում:

ԱՏԳ-ում կապահովվի հակիրդեհային համակարգը, ինչպես նաև տեղակայված կլինի ամբողջությամբ սարքավորված հակահրդեհային անվտանգության կետ: Կկազմակերպվի առաջին բուժօգնության կետ:

ԱՏԳ բոլոր շահագործողներից, նրանց աշխատակիցներից, ինչպես նաև բոլոր այլ անձանցից կպահանջվի տեխնիկական անվտանգության սահմանված նորմերի պահպանում, կանցկացվի կանոնավոր հրահանգավորում և այլն:


Բոլոր օբյեկտները, որոնք գտնվում են ԱՏԳ տարածքում, պետք է բավարարեն սանիտարական, հակահրդեհային, էկոլոգիական և այլ սահմանված նորմերին: Կմշակվի արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման պլան՝ շահագործողներին համապատասխան տեղեկատվության տրամադրմամբ (տեղեկատվական ստենդեր և այլն):

ԱՏԳ-ում անվճար կհատկացվի տարածք (մոտ 50մ²) բնապահպանական նորմերի և պահանջների ապահովման նպատակով՝անհրաժեշտ ստուգաչափիչ սարքավորումների տեղադրման համար:

Ներկայացուցչական ենթակառուցվածք

Կարևոր դրական գործոն է նաև այն, որ «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում կառուցվում է և 2012թ. ցուցահանդեսների շրջանի բացման սկզբին շահագործման կհանձնվի Անդրկովկասի տարածքում առավել ժամանակակից էքսպոկենտրոն՝ 4 700 քմ տարածքով ցուցահանդեսների, բանակցությունների և կոնֆերանսների անցկացման համար ամբողջությամբ սարքավորված սրահներով:

Նկ. 6 «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում կառուցվող էքսպոկենտրոնը






Հասարակական սպասարկման ենթակառուցվածք

ԱՏԳ-ի տեղակայվածությունը «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում, փաստացի ք. Երևանի կենտրոնում, պրակտիկորեն տալիս է բոլոր անհրաժեշտ հնարավորությունները շահագործող ընկերությունների և նրանց աշխատակիցների արդյունավետ աշխատանքի համար: Ելնելով ԱՏԳ-ի տվյալ տեղակայվածությունից, չեն ծագի էական դժվարություններ շահագործող ընկերությունների աշխատակիցների բնակության և հանգստի կազմակերպման հետ կապված: Եվ, իհարկե, այստեղ առկա չէ նույն քանակի հասարակական սպասարկման օբյեկտներ կազմակերպելու անհրաժեշտություն, ինչպես «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ տարածքի ԱՏԳ-ում, քանի որ նմանօրինակ օբյեկտների մեծամասնությունը առկա է մոտակայքում բավարար քանակությամբ: Սակայն, որոշ օբյեկտներ, շահագործող ընկերությունների աշխատակիցների աշխատանքի լրացուցիչ հարմարավետությունն ապահովելու համար, այնուամենայնիվ նախատեսվում է տեղակայել:

Այդպիսի օբյեկտների շարքում նախատեսվում է ունենալ, մասնավորապես.

- Հանրային սննդի օբյեկտ (ճաշարան, սրճարան),
- Առաջին բուժօգնության կետ,
- Շահագործողների (արտոնյալ) և հյուրերի թեթև ավտոմեքենաների կայանատեղի,
- Պատճենահանման կենտրոն (լուսապատճենահանման, տպագրելու և այլ ծառայություններ);
- Շահագործողների կողմից պահանջվող այլ ծառայություններ:

Նկ. 7 «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում նախատեսվող ԱՏԳ-ի մակետը



Ներդրումային ծրագիրը և հիմնական ֆինանսական ցուցիչները

Ծրագրի նախաձեռնողները նախատեսում են իրականացնել ներդրումներ «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքներում ԱՏԳ-ների գործարկման, զարգացման և առաջխաղացման համար ընդհանուր ծավալով մոտ 8,6 մլն ԱՄՆ դոլլար 2012-2014թթ. ընթացքում (3 տարի), որոնցից մոտ 5,1 մլն-ը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ բազայի ԱՏԳ-ի, իսկ 3,5 մլն-ը՝ «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի ԱՏԳ-ի համար:

Շատ կարևոր է նաև նշել, որ Նախաձեռնողները վերջին մի քանի տարիների ընթացքում պլանավորված ներդրումներ են կատարել ձեռնարկությունների ենթակառուցվածքները բարելավելու համար: Այսպես, այսօր «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ում համապատասխան վերանորոգման-վերականգնման աշխատանքների վրա ծախսվել է մոտ 500 000 ԱՄՆ դոլար, իսկ «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ում կատարված ներդրումները գերազանցել են 1,2 մլն ԱՄՆ դոլարը:

Այսպիսով, հաշվի առնելով արդեն կատարված ծախսերը և նախատեսվող ներդրումները, Նախաձեռնողների ներդրումների ընդհանուր ծավալը 2014թ. վերջին կգերազանցի 10 մլն. ԱՄՆ դոլարը:

Ներդրումների հիմնական ուղղությունները և նախնական ծավալները 2012-2014թթ. համար ներկայացված են աղյուսակում.

Ներդրումային ծրագիր	Նախատեսվող ներդրումներ որոշակի ժամանակաշրջանում, \$						Ընդամենը
Ներդրումների ուղղվածությունը	I կիս. 2012	II կիս. 2012	III կիս. 2012	IV կիս. 2012	2013թ.	2014թ.	2012-2014թթ. ընթ.
ԱՏԳ անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծումը և բարելավումը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ում, այդ թվում. <i>Վերանորոգման և շինարարական աշխատանքներ, ներքին ենթակառուցվածքի բարելավում,</i> <i>Սարքավորումներ, մեխանիզմներ և տեխնիկական լուծումներ,</i> <i>Արտաքին ցանցերի, կոմունիկացիաների, ներքին ենթակառուցվածքի վերանորոգում և տեղակայում,</i> <i>Բարեկարգում և կանաչապատում</i>	334 446 <i>196 231</i> <i>102 381</i> <i>35 833</i> <i>0</i>	2 375 246 <i>1 373 616</i> <i>716 669</i> <i>250 834</i> <i>34 127</i>	1 177 385 <i>654 103</i> <i>341 271</i> <i>119 445</i> <i>62 566</i>	574 473 <i>327 051</i> <i>170 636</i> <i>59 722</i> <i>17 064</i>	836 114 <i>490 577</i> <i>255 953</i> <i>89 584</i> <i>0</i>	390 187 <i>228 936</i> <i>119 445</i> <i>41 806</i> <i>0</i>	5 687 850 <i>3 270 514</i> <i>1 706 355</i> <i>597 224</i> <i>113 757</i>
ԱՏԳ անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծումը և բարելավումը «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ում, այդ թվում. <i>Վերանորոգման և շինարարական աշխատանքներ, ներքին ենթակառուցվածքի բարելավում,</i> <i>Սարքավորումներ, մեխանիզմներ և տեխնիկական լուծումներ,</i> <i>Արտաքին ցանցերի, կոմունիկացիաների, ներքին ենթակառուցվածքի վերանորոգում և տեղակայում,</i> <i>Բարեկարգում և կանաչապատում</i>	143 334 <i>84 099</i> <i>43 878</i> <i>15 357</i> <i>0</i>	1 017 963 <i>588 692</i> <i>307 144</i> <i>107 500</i> <i>14 626</i>	504 594 <i>280 330</i> <i>146 259</i> <i>51 191</i> <i>26 814</i>	246 203 <i>140 165</i> <i>73 130</i> <i>25 595</i> <i>7 313</i>	358 335 <i>210 247</i> <i>109 694</i> <i>38 393</i> <i>0</i>	167 223 <i>98 115</i> <i>51 191</i> <i>17 917</i> <i>0</i>	2 437 650 <i>1 401 649</i> <i>731 295</i> <i>255 953</i> <i>48 753</i>
ՌԱՕ ՄԱՐՍ-ի և «ԵՐՄՄԳՀԻ» -ի տարածքում ԱՏԳ վերաբերյալ մասնագիտացված մշտապես թարմացվող կայքի ստեղծում		3 000	2 000				5 000
PR և մարկետինգային միջոցառումներ (կոնֆերանսներ, պրեզենտացիաներ, ֆորումներ, ցուցահանդեսներ, համագործակցություն մասնագիտացված պրոֆեսիոնալ ՋԼՄ-ների հետ)		30 000	70 000	50 000	50 000	50 000	250 000

Ներդրումային ծրագիր	Նախատեսվող ներդրումներ որոշակի ժամանակաշրջանում, \$						Ընդամենը
Ներդրումների ուղղվածությունը	I կիս. 2012	II կիս. 2012	III կիս. 2012	IV կիս. 2012	2013թ.	2014թ.	2012-2014թթ. ընթ.
Գործարար կապերի հաստատում, պոտենցիալ շահագործողների ներգրավում	10 000	20 000	40 000	30 000	50 000	50 000	200 000
<i>Ընդհանուրը ժամանակաշրջանում</i>	<i>487 779</i>	<i>3 446 209</i>	<i>1 793 979</i>	<i>900 676</i>	<i>1 294 449</i>	<i>657 409</i>	<i>8 580 500</i>

Բացի զգալի կապիտալ ներդրումներից, աշխատանքի ընթացքում, Կազմակերպիչը պետք է կատարի նաև զգալի գործառնական ծախսեր: Դրանց կանխատեսումը 2012-2020թթ. տրվում է ստորև.

Գործառնական ծախսեր, \$ + ԱԱՀ	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
ՄԱՐՄԻ տարածքների վարձակալությունից ծախսեր	300 182	1 921 162	2 161 307	3 025 830	3 441 881	4 169 971	4 962 266	5 516 872	6 114 533
ԵրՄՄԳՀԻ տարածքների վարձակալությունից ծախսեր	182 655	1 168 992	1 461 240	1 687 732	1 836 559	2 131 376	2 841 834	3 356 917	3 916 403
ՄԱՐՄԻ տարածքում ԱՏԳ-ի շահագործման ծախսեր, այդ թվում՝ շահագործման ծախսեր, PR և մարկետինգ, աշխատանքի վարձատրություն և այլն	320 782	1 150 956	1 342 254	1 808 537	2 041 176	2 435 406	2 866 578	3 177 515	3 496 708
ԵրՄՄԳՀԻ տարածքում ԱՏԳ-ի շահագործման ծախսեր, այդ թվում՝ շահագործման ծախսեր, PR և մարկետինգ, աշխատանքի վարձատրություն և այլն	237 523	586 129	719 777	811 925	878 433	993 948	1 258 035	1 458 220	1 659 609
Ընդամենը	1 041 141	4 827 238	5 684 578	7 334 024	8 198 050	9 730 701	11 928 713	13 509 524	15 187 253

Այս աղյուսակում Կազմակերպչի կանխատեսվող ֆինանսական մոդելի համապատասխան բերված են հիմնական ֆինանսական ցուցանիշները՝

Ցուցանիշ, \$	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Համախառն եկամուտ	818 728	5 554 417	6 836 022	8 897 358	9 964 084	11 896 179	14 730 510	16 748 274	18 930 630

Ցուցանիշ, \$	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Ծառայությունների ինքնարժեք	882 884	4 062 053	4 778 241	6 154 724	6 876 605	8 155 901	9 989 904	11 309 528	12 710 043
այդ թվում՝									
ՄԱՐՍԻ տարածքների վարձակալությունից ծախսեր	250 151	1 600 968	1 801 089	2 521 525	2 868 234	3 474 976	4 135 222	4 597 393	5 095 444
ԵրՄՄԳՀ տարածքների վարձակալությունից ծախսեր	152 213	974 160	1 217 700	1 406 444	1 530 466	1 776 146	2 368 195	2 797 431	3 263 669
ՄԱՐՍԻ տարածքում ԱՏԳ-ի շահագործման ծախսեր, այդ թվում՝ շահագործման ծախսեր, PR և մարկետինգ, աշխատանքի վարձատրություն և այլն	116 737	791 946	944 395	1 322 153	1 503 949	1 822 092	2 168 290	2 410 628	2 671 779
ԵրՄՄԳՀ տարածքում ԱՏԳ-ի շահագործման ծախսեր, այդ թվում՝ շահագործման ծախսեր, PR և մարկետինգ, աշխատանքի վարձատրություն և այլն	47 355	321 256	425 665	491 643	534 997	620 878	827 837	977 882	1 140 863
EBITDA	(64 157)	1 492 364	2 057 781	2 742 634	3 087 480	3 740 278	4 740 607	5 438 745	6 220 587
Շահութահարկ	-	298 473	411 556	548 527	617 496	748 056	948 121	1 087 749	1 244 117
Մաքուր շահույթ	(64 157)	1 193 891	1 646 225	2 194 107	2 469 984	2 992 223	3 792 485	4 350 996	4 976 469
CF գործառնական գործունեությունից	(171 688)	940 813	1 735 126	2 108 890	2 419 808	2 907 164	3 669 817	4 257 605	4 874 144
CF ներդրումային գործունեությունից	(6 753 702)	(995 374)	(464 508)	-	-	-	-	-	-
CF ֆինանսական գործունեությունից	6 950 000	270 000	-	-	-	-	-	-	-
CF ժամանակահատվածում	24 610	215 439	1 270 619	2 108 890	2 419 808	2 907 164	3 669 817	4 257 605	4 874 144
Մաքուր դրամային ներհոսք	(6 899 731)	(275 051)	1 053 556	1 987 973	2 363 311	2 799 013	3 509 052	4 149 220	4 758 234
Դիսկոնտային մաքուր դրամական հոսք*	(6 899 731)	(239 175)	796 640	1 307 125	1 351 231	1 391 604	1 517 060	1 559 845	1 555 475
Դիսկոնտային մաքուր դրամական հոսք կուտակված արդյունքով*	-6 899 731	-7 138 906	-6 342 266	-5 035 142	-3 683 911	-2 292 307	-775 247	784 599	2 340 074

* հաշվարկները բերված է փարեկան 15% ԱՄՆ դոլարով դիսկոնտային դրույքի (WACC) հիման վրա

Ինչպես տեսնում ենք վերը նշված աղյուսակից՝ չնայած դրական շահույթ կանխատեսվում է 2013 թ-ից , սակայն կուտակված դիսկոնտացված մաքուր դրամական հոսքը դառնում է դրական միայն 2019 թ-ի արդյունքներով, ինչը նշանակում է, որ Կազմակերպիչը սկսում է ստանալ մաքուր եկամուտ միայն ԱՏԳ աշխատանքը սկսելու պահից յոթերորդ տարում:

Դիտարկվում են հատկապես դիսկոնտացված ցուցանիշները, որոնք արտացոլում են դրամի արժեքի էֆեկտը ժամանակի ընթացքում, ինչը թույլ է տալիս առավելագույնս ադեկվատ գնահատել ստացվող արդյունքները:

Հաշվի առնելով դիսկոնտացումը համաձայն վերը նշված WACC տոկոսադրույքի Կազմակերպչի համար ստանում ենք հետևյալ ընդհանրացված էֆեկտիվության ցուցանիշները.

Ցուցանիշներ	Նշանակություն
NPV, \$	2 340 074
IRR, %	21,5%
փոխհատուցելիության դիսկոնտային ժամանակահատված, տարի	7

Այստեղ կարելի է նշել, որ կանխատեսվող էֆեկտիվության ցուցանիշները ինվեստիցիոն նախագծի տեսանկյունից Կազմակերպչի համար հանդիսանում են բավարար, բայց ոչ չափազանց գրավիչ. մոնիտորագրման ժամկետը 7 տարի է, որը նաև է համեմատել

նախագծերի միջին ցուցանիշներին, նույնը վերաբերում է շահութաբերության ներքին նորմայի ցուցանիշին (IRR)՝ կազմող ընդամենը 21,5%:

Սակայն ինվեստիցիոն Ծրագրի իրականացման համար լրացուցիչ շարժառիթ են հանդիսանում եկամուտները, որոնք կստանան հենց կազմակերպությունները («ՌԱՕ ՄԱՐՍ» և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ները) տարածքների վարձակալությունից (նրանց կփոխանցվի վարձակալներից ստացվող ընդհանուր եկամուտների էական մասը՝ վերը նշված որպես Կազմակերպչի ծախս՝ կապված տարածքների վարձակալության հետ), որոնք թույլ կտան կազմակերպություններին էֆեկտիվորեն զարգացնել իրենց ենթակառուցվածքը և գիտատեխնիկական բազան:

Կազմակերպչի հաստիքները կկազմվեն համապատասխան փորձով և բարձր որակավորում ունեցող աշխատակազմով, որի համար կառաջարկվի մրցունակ աշխատավարձ (նվազագույնը 15% ավելի քան շուկայում) և լրացուցիչ արտոնություններ: Ծրագրավորվում է մինչև 20 հիմնական հաստիքային աշխատակիցների ներգրավում:

Կազմակերպչի կողմից ԱՏԳ գործարկմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների ընդհանրացված պլան-գրաֆիկ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ԱՏԳ գործունեության գործարկման և զարգացման վերաբերյալ Նախաձեռնողի կողմից իրականացվելիք միջոցառումների նախագիծ-ժամանակացույցը.

ԱՏԳ ստեղծման և զարգացման հիմնական միջոցառումները	Ծրագրի իրագործման ժամանակաշրջանը																
	2012 թ.							2013	2014	2015	2016						
	1	2	3	4	5	6	7	8	9	0	1	1	1	տարի	տարի	տարի	տարի
«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքներում ԱՏԳ ստեղծելու վերաբերյալ կառավարության որոշումը, ԱՏԳ Կազմակերպչի կարգավիճակի ստացում																	
Կազմակերպչի և Կառավարության միջև պայմանագրի ստորագրում																	
ԱՏԳ շրջանակներում պետության (իրավասու պետական մարմինների) հետ համագործակցության գործընթացի հաստատում																	
Հաստատված գործընթացների համաձայն փաստաթղթերի մշակում																	
ԱՏԳ ներքին կանոնակարգող փաստաթղթերի կազմում և հաստատում (գործունեության կանոններ, անվտանգության պահանջներ և այլն)																	

ՆՊՎՄԻՊՁՍԵ

ԱՏԳ տարածքում Կազմակերպչի կողմից տրամադրվող ծառայությունների ցանկը և դրանց բազային արժեքը

Կազմակերպչի հիմնական ծառայությունները «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ բազայի վրա ստեղծված ԱՏԳ-ի շահագործողների համար

Հաշվի առնելով պոտենցիալ շահագործողների և պլանավորվող «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ բազայի վրա ստեղծված ԱՏԳ ենթակառուցվածքները՝ Կազմակերպչի կողմից կտրամադրվեն հետևյալ հիմնական ծառայությունները.

Աղ. 6 Կազմակերպչի հիմնական ծառայությունների ցանկը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ բազայի վրա ստեղծված ԱՏԳ-ի շահագործողների համար

Ծառայության անվանումը	Արժեքը (ԱԱՀ-ի հաշվառմամբ) *	Մեկնաբանություններ
Արտադրա-տնտեսական տարածքների վարձակալությամբ տրամադրում	\$10/քմ/ամս.	Կախված վարձակալվող տարածքի/հրապարակի չափից և վարձակալության ժամկետից՝ վարձակալության գինը կարող է ցածր լինել (պայմանագրային): Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ ՀՀ-ում իրական արժեզրկմանը համապատասխան:

Ծառայության անվանումը	Արժեքը (ԱԱՀ-ի հաշվառմամբ) *	Մեկնաբանություններ
Գրասենյակային տարածքների վարձակալությամբ տրամադրում	\$10/քմ/ամս.	Կախված վարձակալվող տարածքի/հրապարակի ծավալից/չափից և վարձակալության ժամկետից վարձակալության գինը կարող է ցածր լինել (պայմանագրային): Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ ՀՀ-ում իրական արժեզրկմանը համապատասխան:
Ժամանակավոր պահպանության պահեստի վարձակալությամբ տրամադրում	Ըստ պայմանագրի/գործարքի	
Ավտոկոնտեյներների հրապարակների (բաց հրապարակ) վարձակալությամբ տրամադրում	\$1,5/քմ/ամս.	Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ ՀՀ-ում իրական արժեզրկմանը համապատասխան:

Ծառայության անվանումը	Արժեքը (ԱԱՀ-ի հաշվառմամբ) *	Մեկնաբանություններ
<p>Լոգիստիկ-պահեստային ծառայություններ.</p> <ul style="list-style-type: none"> - բեռների, կոնտեյներների ընդունման և բեռնաթափման հնարավորություն ավտոմոբիլային տրանսպորտի մեջ; - ապրանքի հսկողության, հաշվառման և ներպահեստային տեղաշարժում; - Բեռների մեկ տրանսպորտից մեկ այլ տրանսպորտ վերաբարձում: 	<p>Ըստ պայմանագրի/գործարքի</p>	<p>Այս ծառայությունների գնային քաղաքականությունը կորոշարկիացվի ԱՏԳ գործարկման սկզբին</p>
<p>Կոմունալ ծառայություններ (էլեկտրաէներգիա, ջուր, ջրահեռացում (կոյուղի), գազամատակարարում)</p>	<p>Ծառայության մատակարարների տարիֆներին համապատասխան</p>	
<p>Գերարագ ինտերներ, հեռախոսաֆիկացում</p>	<p>Ծառայության մատակարարների տարիֆներին համապատասխան</p>	
<p>Տարածքի մաքրում և բարեկարգում</p>	<p>Ընդգրկված է վարձակալության գնի մեջ</p>	
<p>Տարածքի ընդհանուր մաքրում</p>	<p>Ըստ պայմանավորվածության</p>	
<p>Տարածքի շուրջօրյա պահպանություն</p>	<p>Ընդգրկված է վարձակալության գնի մեջ</p>	

Ծառայության անվանումը	Արժեքը (ԱԱՀ-ի հաշվառմամբ) *	Մեկնաբանություններ
Ավտոկանգառ (պահպանվող) ԱՏԳ շահագործողների աշխատակիցների թեթև մեքենաների համար 1 մեքենատեղ (արտոնյալ տարիՖ)	\$20/ամիս	Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ ՀՀ-ում իրական արժեզրկմանը համապատասխան:
Ավտոկանգառ (պահպանվող) հյուրերի թեթև մեքենաների համար 1 մեքենատեղ (ԱՏԳ տարածքի սահմաններից դուրս)	\$0,5/ժամ	Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ ՀՀ-ում իրական արժեզրկմանը համապատասխան:
Վճարովի մուտք կոմերցիոն/առևտրային տրանսպորտի համար մեկ մեքենայի հաշվով	\$2/մեկանգամյա մուտքի համար	Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ ՀՀ-ում իրական արժեզրկմանը համապատասխան:
Շահագործողների տրանսպորտի մուտքը (ինչպես սեփական, այնպես էլ պատվիրված)	Անվճար	

*Նշված է ծառայությունների ամբողջ արժեքը այն հաշվարկով, որ ԱՏԳ շահագործողները ԱԱՀ չեն վճարում

Կազմակերպչի հիմնական ծառայությունները «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ բազայի վրա ստեղծված ԱՏԳ-ի շահագործողների համար

Աղ. 7 Կազմակերպչի հիմնական ծառայությունների ցանկը «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ բազայի վրա ստեղծված ԱՏԳ-ի շահագործողների համար

Ծառայության անվանումը	Արժեքը (ԱԱՀ-ի հաշվառմամբ)*	Մեկնաբանություններ
Տարածքների, այդ թվում՝ գրասենյակային, հետզոտական (գիտահետազոտական և փորձարարական ստրուկտորական լաբորատորիաներ և այլն)	\$15/քմ/ամս.	Կախված վարձակալվող տարածքի/հրապարակի չափից և վարձակալության ժամկետից վարձակալության գինը կարող է ցածր լինել (պայմանագրային): Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ ՀՀ-ում իրական արժեզրկմանը համապատասխան:
Պահեստային տարածքներ	Ըստ պայմանագրի/գործարքային	Այս ծառայությունների գնային քաղաքականությունը կորոշարկիացվի ԱՏԳ գործարկման սկզբին:

Ծառայության անվանումը	Արժեքը (ԱԱՀ-ի հաշվառմամբ)*	Մեկնաբանություններ
<p>Լոգիստիկ-պահեստային ծառայություններ.</p> <ul style="list-style-type: none"> - բեռների, կոնտեյներների ընդունման և բեռնաթափման հնարավորություն ավտոմոբիլային տրանսպորտի մեջ; - ապրանքի հսկողության, հաշվառման և ներպահեստային տեղաշարժում; - Բեռների մեկ տրանսպորտից մեկ այլ տրանսպորտ վերաբարձում: 	<p>Ըստ պայմանագրի/ գործարքային</p>	<p>Այս ծառայությունների գնային քաղաքականությունը կորոշարկիացվի ԱՏԳ գործարկման սկզբին</p>
<p>Ավտոկոնտեյներների հրապարակների (բաց հրապարակ) վարձակալությամբ տրամադրում</p>		<p>Ծառայությունը կարող է իրականացվել “ՌԱՕ ՄԱՐՍ” ՓԲԸ տարածքում ըստ հաստատված տարիֆների/սակագների</p>
<p>Կոմունալ ծառայություններ (էլեկտրաէներգիա, ջուր, ջրահեռացում (կոյուղի), գազամատակարարում)</p>	<p>Ծառայության մատակարարների տարիֆներին համապատասխան</p>	

Ծառայության անվանումը	Արժեքը (ԱԱՀ-ի հաշվառմամբ)*	Մեկնաբանություններ
Գերարագ ինտերներ, հեռախոսաֆիկացում	Ծառայության մատակարարների տարիքներին համապատասխան	
“Կենտրոնացված ընդունելության” ծառայություններ	Ընդգրկված է վարձակալության գնի մեջ	
Տարածքի մաքրում և բարեկարգում	Ընդգրկված է վարձակալության գնի մեջ	
Շինության/տարածքի ընդհանուր մաքրում	Ըստ պայմանավորվածության	
Տարածքի շուրջօրյա պահպանություն	Ընդգրկված է վարձակալության գնի մեջ	
Ավտոկանգառ (պահպանվող) ԱՏԳ շահագործողների աշխատակիցների թեթև մեքենաների համար 1 մեքենատեղ (արտոնյալ տարիք)	\$20/ամիս	Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ ՀՀ-ում իրական արժեզրկմանը համապատասխան:
Ավտոկանգառ (պահպանվող) հյուրերի թեթև մեքենաների համար 1 մեքենատեղ (ԱՏԳ տարածքի սահմաններից դուրս)	\$0,5/ժամ	Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ ՀՀ-ում իրական արժեզրկմանը համապատասխան:

Ծառայության անվանումը	Արժեքը (ԱԱՀ-ի հաշվառմամբ)*	Մեկնաբանություններ
Վճարովի մուտք կոմերցիոն/առևտրային տրանսպորտի համար մեկ մեքենայի հաշվով	\$2/մեկանգամյա մուտքի համար	Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ ՀՀ-ում իրական արժեզրկմանը համապատասխան:

* Նշված է ծառայությունների ամբողջ արժեքը այն հաշվարկով, որ ԱՏԳ շահագործողները ԱԱՀ չեն վճարում

Նախաձեռնողները մտադրված են ապահովել վարձակալությամբ տրամադրվող ԱՏԳ տարածքների համապատասխանությունը “B” դասին: Անհրաժեշտ է նշել, որ ԱՏԳ շահագործողներին «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ տարածքում վարձակալության կտրամադրվեն ինչպես արտադրական, այնպես էլ գրասենյակային բնույթի համարժեք տարածքներ. գրասենյակային տարածքի զբաղեցման համար գնի ավելացում չի լինի: Այսպիսի արտոնյալ պայմանը հատուկ նախատեսված է արտադրական ուղղվածությամբ պոստենցիալ շահագործողների պահանջների բավարարման համար, այն դեպքում, երբ ի հավելումն արտադրական տարածքների շահագործողներին պետք կգան տարբեր բյուրոներ, գրասենյակներ, կառավարչական գրասենյակներ և այլն:

Տվյալ պահին ք.Երևանում առկա է “B” դասին ամբողջությամբ համապատասխանող տարածքների սահմանափակ առաջարկ: Գրեթե բոլորը տեղակայված են քաղաքի կենտրոնական մասում և առաջարկվում են 8000-ից 12000 ՀՀ դրամ մեկ քառակուսի մետրի համար (մոտավորապես \$20-ից \$30): Միևնույն ժամանակ, “C” դասի տարածքները առաջարկվում են ավելի շատ, հետևյալ միջին արժեքներով՝ քաղաքի շրջաններին համապատասխան.

Աղ. 8 ք. Երևանում “C” դասի տարածքների վարձակալության միջին արժեքները

“C” դասի տարածքների վարձակալության միջին արժեքը ըստ քաղաքի շրջանների(\$/1մ²/ամս.ԱԱՀ հետ)								
Մայրաթի								
Շինության տեսակը	Աջափ նյակ	Արաբկիր	ա-Սեբաստիա	Կենտրոն	Շենգավիթ	Դավիթբաշեն	Ավա ն	Էրեբունի
գրասենյակայի	7,8	7,8	5,2	13,0	7,8	5,2	5,2	n/a

ն

արտադրական 3,4 2,6 n/a n/a 2,6 3,9 3,9 3,2

Աղբյուր. RCF վերլուծություն

Ինչպես երևում է վերը բերված տվյալներից, ԱՏԳ շահագործողներին առաջարկվող տարածքների վարձակալության արժեքը մոտ է “C” դասի տարածքների առկա շուկայական արժեքին, դրա հետ մեկտեղ, համապատասխանում են “B” դասին (որոկյալ ենթակառուցվածքի, անվտանգության, կանգառային տեղերի նման այլ բաների/ և այլ ապահովմամբ):

Նաև հաշվի առնելով ԱՏԳ շահագործողներին տրամադրվող հարկային արտոնությունները և պրեֆերենցիաների՝ Կազմակերպչի կողմից ԱՏԳ-ում տարածքների վարձակալության համար առաջարկվող արժեքը հանդիսանում է բացառապես գրավիչ պոտենցիալ շահագործողների համար:

ԱՏԳ պոտենցիալ շահագործողներին ներկայացվող պահանջները

Հնարավոր շահագործողներին ուղղված պահանջները կարելի է բաժանել ԱՏԳ Կազմակերպչի կողմից ներկայացվող պահանջների և ԱՏԳ շահագործողի կարգավիճակ տալու համար պետության պահանջների (շահագործողի կարգավիճակ տրամադրում է ՀՀ Կառավարությունը):

ԱՏԳ Կազմակերպչի առանցքային պահանջն է հնարավոր շահագործողի պրոֆիլի և գործունեության համապատասխանությունը ԱՏԳ ռազմավարական ուղղվածությանը և ԱՏԳ-ում գործառնության վերաբերյալ հնարավոր շահագործողի մոտ բիզնես պլանի առկայությունը: Հնարավոր շահագործողը նաև տվյալներ է ներկայացնում ենթադրվող գործունեության, գործունեության իրականացման համար անհրաժեշտ մաշտաբի տարածքի/հողամասի մասին:

Կազմակերպչի կողմից շահագործողին ուղղված մյուս պահանջները, վերջինիս, Կառավարության կողմից համապատասխան կարգավիճակ (թույլտվություն) ստանալու պայմանով, կլինեն Կազմակերպչի հետ կնքված պայմանագրի պահանջների և ԱՏԳ-ում աշխատանքների սահմանված

կանոնների պահպանումը, ինչպես նաև էկոլոգիական անձնագրի ստացումը և սահմանված էկոլոգիական նորմերի խստագույնս պահպանումը:

Հաջորդիվ նկարագրվում են ԱՏԳ «շահագործողի» կարգավիճակ տրամադրելու համար պետության պահանջները:

ԱՏԳ շահագործողի կարգավիճակի ձեռքբերում

ԱՏԳ տարածքում բոլոր նախապատվություններով և արտոնություններով արդյունաբերական-արտադրական գործունեություն իրականացնելու համար իրավաբանական անձը պետք է ստանա շահագործողի կարգավիճակ: ԱՏԳ շահագործողի կարգավիճակը տրվում է 04.07.2011թ. «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի համաձայն: Շահագործողի կարգավիճակը նաև շահագործողի համար երաշխիք է նրա իրավաբանական դիրքի, իրավունքների և պարտականությունների համար, ներառյալ՝ ԱՏԳ տարածքում աշխատանքը:

ԱՏԳ շահագործող է ճանաչվում այն առևտրային կազմակերպությունը (իրավաբանական անձը, անհատ ձեռնարկատերը կամ արտասահմանյան իրավաբանական անձի ներկայացուցչությունը), որը ՀՀ օրենսդրությանը համապատասխան գրանցված է տվյալ համայնքի տարածքում, որի սահմաններում տեղակայված է ԱՏԳ-ն և որը ստացել է ՀՀ կառավարության՝ ԱՏԳ տարածում որպես շահագործող գործունեություն իրականացնելու թույլտվությունը, և ԱՏԳ կազմակերպչի հետ կնքել է պատշաճ կերպով տնտեսական գործունեություն իրականացնելու և որոշակի պայմանների (սահմանվում է պայմանագրով) պահպանման մասին պայմանագիր:

Օրենքի համաձայն՝ ԱՏԳ շահագործողի կարգավիճակ է տրամադրվում ՀՀ Կառավարության որոշմամբ՝ հայտատուի կողմից ներկայացված դիմումի վերաբերյալ լիազորված պետական միջգերատեսչական Հանձնաճողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) եզրակացության հիման վրա:

Հայտատուի դիմումը պետք է պարունակի.

- համապատասխան ձևի դիմում (սահմանված է Կառավարության որոշմամբ),
- հետևյալ թեմաները բացահայտող բիզնես պլան՝

1. արտահանման քաղաքականություն. ուղղությունները և ծավալները,

2. ծրագրի համապատասխանությունը ԱՏԳ նպատակներին և նրա ուղղվածությանը,
3. տեխնոլոգիական նորարարությունների կիրառումը,
4. աշխատակիցների քանակը և այլ սոցիալական միջոցառումներ,
5. ներդրումների ծավալները,
6. ռազմավարական գործընկերների առկայության մասին տվյալներ (առկայության դեպքում):

Լիազորված Հանձնաժողովը 15 օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված նյութերը և իր եզրակացությունների հետ միասին բիզնես պլանը ուղարկում է Կառավարության քննությանը:

Կառավարությունը, իր հերթին, 21 օրվա ընթացքում ներկայացնում է կամ ԱՏԳ տարածքում որպես շահագործողի գործունեության իրականացման թույլտվություն, կամ պատճառաբանված մերժում:

Կառավարության թույլտվությունը ուժի մեջ է 3 ամիս, որի ընթացքում թեկնածուն պարտավոր է կնքել համապատասխան պայմանագիր Կազմակերպչի հետ:

Կազմակերպչի և թեկնածուի միջև պայմանագրի ստորագրումից հետո (Կառավարության կողմից համապատասխան թույլտվության ստացման դեպքում) լիազորված պետական մարմնի կողմից տրվում է ԱՏԳ շահագործողի կարգավիճակը հավաստող վկայական:

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում ԱՏԳ շահագործողի կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելու ընթացակարգը

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում ԱՏԳ շահագործողի կարգավիճակ ստանալու դիմում ներկայացնելու համար սույն Ծրագրով առաջարկվում է հայտատուի գործողությունների հետևյալ հաջորդականությունը.

1. Հայտատուն «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում ԱՏԳ Կազմակերպչի կողմից ստանում է տվյալ ԱՏԳ-ներում աշխատանքի պայմանների վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝
 - ա. ԱՏԳ մասնագիտացման(ուղղվածության) ոլորտի,
 - բ. ԱՏԳ շահագործողին ներկայացվող հիմնական պահանջների,

գ. ԱՏԳ շահագործողների համար ծառայությունների ցանկի և արժեքի,

դ. Վարձակալական տարածքների տրամադրման հնարավորությունների,

ե. ԱՏԳ շահագործողի կարգավիճակի տրամադրման ընթացակարգի մասին:

2. Այն դեպքում, եթե Կազմակերպչի կողմից տրամադրված վերոգրյալ տեղեկատվության ուսումնասիրությունից հետո, հայտատուն հաստատում է իր՝ ԱՏԳ շահագործողի կարգավիճակ ստանալու մտադրությունը, ապա նա Կազմակերպչին է ներկայացնում ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման բիզնես(ներդրումային) ծրագրի/ պատճենը:
3. Կազմակերպիչը 10 օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված նյութերի՝ կոնկրետ ԱՏԳ նպատակներին և խնդիրներին համապատասխանության հարցը և պատրաստում է կրճատ տեղեկանք՝ հայտատուներին շահագործողի կարգավիճակ տալու հնարավորության և նպատակահարմարության վերաբերյալ:
4. Կազմակերպիչը տվյալ տեղեկանքը հանձնում է հայտատուին:
5. Կազմակերպչի կողմից տեղեկանքը տրամադրելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն լիազորված պետական մարմին է ներկայացնում օրենքի պահանջներին համապատասխան դիմում, ինչպես նաև տեղեկանք Կազմակերպչից. հայտի քննարկման ընթացքում Կազմակերպչի կարծիքի հաշվի առնման նպատակով: Որից հետո դիմումի քննարկումը տեղի է ունենում Օրենքին համապատասխան (տե՛ս վերը):
6. Կոնկրետ հայտատուի վերաբերյալ Կազմակերպչի տեղեկանքը ուժի մեջ է տրման պահից 3 ամսվա ընթացքում:

ԱՏԳ-ի կայքի գործարկումից հետո (ԱՏԳ-ի աշխատանքների սկսմանը զուգահեռ) հայտատուները նույնպես կարող են համագործակցել Կազմակերպչի հետ ինտերակտիվ ռեժիմով՝ ստանալ տեղեկատվություններ ԱՏԳ-ի մասին, ուղարկել նյութեր ուսումնասիրության համար, ստանալ մեկնաբանություններ և այլն:

Համագործակցությունը ԱՏԳ շրջանակներում

ԱՏԳ շրջանակներում հարաբերությունների հիմնական մասնակիցները և նրանց գործառույթները

ԱՏԳ հարաբերությունների հիմնական մասնակիցները լայն իմաստով հանդիսանում են.

Աղ. 9 ԱՏԳ շրջանակներում հարաբերությունների հիմնական մասնակիցները և նրանց գործառույթները


Հարաբերությունների մասնակից	Հիմնական գործառույթները
<p>Պետությունը (ԱՏԳ ստեղծման մասնավոր նախաձեռնության դեպք)</p>	<ul style="list-style-type: none"> – ԱՏԳ-ի նկատմամբ պետական քաղաքականության սահմանումը, – ԱՏԳ ստեղծման հայտի ընդունումը և քննարկումը, – Առաջարկվող ԱՏԳ-ում «Կազմակերպչի» կարգավիճակի հայտի ընդունումը և քննարկումը, – ԱՏԳ ստեղծման և առաջարկվող ԱՏԳ-ում «Կազմակերպչի» կարգավիճակի տրամադրման վերաբերյալ որոշման ընդունումը, – Կառավարության անունից Էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված Կազմակերպչի հետ պայմանագրի ստորագրումը և դրա պայմանների կատարման վերաբերյալ հսկողության իրականացումը, – ԱՏԳ «Շահագործողի» կարգավիճակի վերաբերյալ հայտի ընդունումը (ԱՏԳ Կազմակերպչի եզրակացության ընդունումից հետո) հայտատուներից և դրանց քննարկումը (Այս գործառույթն իրականացնում է հատուկ միջգերատեսչական Հանձնաժողովը), – Ստացված հայտերի հիման վրա ԱՏԳ «Շահագործողի» կարգավիճակի տրամադրման մասին որոշման կայացումը, ԱՏԳ տարածքում գործունեության

	<p>թույլտվության մասին վկայականների տրամադրումը (շահագործողի կարգավիճակի տրամադրումը), ինչպես նաև հսկողության իրականացումը շահագործողների կողմից թույլատրող սերտիֆիկատով սահմանված պահանջների կատարման նկատմամբ:</p>
<p style="text-align: center;">ԱՏԳ Կազմակերպիչ</p>	<ul style="list-style-type: none"> – ԱՏԳ տարածքի կառուցապատումը, ԱՏԳ տարածքներին ներկայացված տեխնիկական պահանջների կատարման ապահովումը, – ԱՏԳ-ում աշխատանքի պայմանների վերաբերյալ պոտենցիալ շահագործողներին տեղեկատվության տրամադրումը, այդ թվում. <ul style="list-style-type: none"> • ԱՏԳ մասնագիտացման/ուղղվածության, • ԱՏԳ շահագործողներին ներկայացվող հիմնական պահանջների, • ԱՏԳ շահագործողների համար ծառայությունների ցանկի և արժեքի, • Վարձակալությամբ տրամադրվող տարածքների հնարավորության, • ԱՏԳ շահագործողի կարգավիճակի տրամադրման գործընթացի, – ԱՏԳ շահագործողների հետ պայմանագրերի ստորագրում, – ԱՏԳ շահագործողի կարգավիճակ ստանալու համար հայտատուների կողմից ներկայացվող բիզնես (ներդրումային) ծրագրերի նախնական վերլուծություն՝ կոնկրետ ԱՏԳ նպատակներին և խնդիրներին համապատասխանության տեսնկյունից, շահագործողի կարգավիճակ տրամադրելու հնարավորության և նպատակահարմարության վերաբերյալ եզրակացության տրամադրում, – ԱՏԳ տարածքում գտնվող շինությունների վարձակալության պայմանագրերի կնքում Կառավարության կողմից թույլտվություն ստացած շահագործողների հետ և

	<p>պայմանագրի պայմանների կատարման նկատմամբ հսկողություն,</p> <ul style="list-style-type: none"> - ԱՏԳ-ի համար անվտանգության ներքին կանոնների հաստատում, - ԱՏԳ-ում ձեռնարկատիրական գործունեությունը կանոնակարգող ներքին կանոնների սահմանում, որը չի հակասում ԱՏԳ վերաբերյալ ՀՀ օրենսդրությանը, - ԱՏԳ իրավական ռեժիմի պահպանման, ինչպես նաև շահագործողների կողմից ԱՏԳ-ում որպես շահագործող գործունեություն իրականացնելու թույլտվություն տրամադրելու ժամանակ պետության կողմից ներկայացվող պահանջների կատարման նկատմամբ հսկողության իրականացում, - ԱՏԳ ինժեներակոմունալ ենթակառուցվածքի տրամադրում և աջակցում, - ԱՏԳ զարգացման ծրագրերի և ռազմավարությունների մշակում և իրականացում, այդ թվում՝ ԱՏԳ աշխատանքի բարելավման և արդյունավետության վերաբերյալ Կառավարություն առաջարկների ներկայացում, - ԱՏԳ օպերատիվ կառավարում, - ԱՏԳ շահագործող ընկերությունների և պրոֆիլային(ճյուղային) պետական գերատեսչությունների և մարմինների միջև համագործակցության ապահովումը, - ԱՏԳ միջազգային ճանաչելիության իրականացում և շահագործողների ներգրավում (պետության հետ միասին), ինչպես նաև ԱՏԳ և նրա շահագործողների վարկանիշը ամրապնդող միջոցառումների իրականացում, - Ներդրումային կլիմայի բարելավման առաջարկությունների ներկայացում և ԱՏԳ աշխատանքների արդյունավետության բարձրացում; - ԱՏԳ գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում
--	---

	<p>իրավասու պետական մարմին,</p> <p>– Նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթների իրականացում:</p>
Շահագործողներ	Շահագործողի կարգավիճակի և ԱՏԳ ներքին կանոններին համապատասխան գործունեության իրականացումը:
ԱՏԳ ենթակառուցվածքի սեփականատերերը	ԱՏԳ Կազմակերպչին ենթակառուցվածքների տրամադրումը:
Պրոֆիլային տեխնոլոգիական ԲՈՒՀեր	ԱՏԳ շահագործողների համար պրոֆիլային կադրերի պատրաստում:
Ներդրողներ (վենչուրային և այլ ֆոնդեր, բանկեր, մասնավոր ներդրողներ և այլք)	Ներդրումների իրականացում շահագործող ընկերությունների գործունեությունում (այդ թվում start up-եր, նորարարական մշակումներ high tech ոլորտում և այլն)
ԱՏԳ տարածի այլ վարձակալներ	ԱՏԳ շահագործողներին օժանդակող սերվիսային ծառայությունների մատուցում (հանրային սննդի օբյեկտներ, խորհրդատվություն, իրավաբանական ծառայություններ, բանկերի մասնաճյուղեր և այլն) ՀՀ օրենսդրության և ԱՏԳ Կազմակերպչի ներքին կանոններին համապատասխան:

Ստորև ներկայացված է ԱՏԳ հարաբերությունների հիմնական մասնակիցների համագործակցության սխեման.



Բիզնես-ծրագրերով եզրակացությունների կապում, ենթակառուցվածքի արտոնություն, գործունեության սլայդները սահմանում, պայմանագրերի կնքում, պայմանագրերի և սլայդները կատարման նկատմամբ հսկողություն, ԱՏԳ գործունեության շուրջ հարցերով պետության հետ համագործակցում

Շահագործողի կարգավիճակի հաստատում՝ վկայականների հանձնում, հայկական կազմակերպությունների ծրագրերի և գիտահետազոտական փորձարարական արտոնական աշխատանքների ֆինանսավորում՝ համաֆինանսավորում, նրանց մշակումների կամերցոնալիզացիայի աշակցում

Պետության մասնակցությունը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքում ԱՏԳ ստեղծման և արդյունավետ գործունեության գործընթացում

Ինչպես անմիջականորեն ԱՏԳ ստեղծմանը, այնպես էլ նրա հետագա գործունեությանը պետության կողմից աջակցությունը հանդիսանում է ԱՏԳ հաջողության՝ համաշխարհային փորձով հիմնավորված, սկսնալուց կարևոր փաստ: Ընդ որում աջակցությունը չպետք է կրի տեղային կամ միանվագ բնույթ, այլ պետք է իրականացվի բարձր տեխնոլոգիայի զարգացմանն ուղղված պետության նպատակաուղղված գեներացված քաղաքականության շրջանակներում:

Այս իմաստով կարելի է առանձնացնել պետական աջակցության տեղային և գլոբալ խնդիրները:

Տեղային խնդիրներ

- Դիտարկել հեշտացված ընթացակարգով ԱՏԳ ռեզիդենտի կարգավիճակի տրամադրման հնարավորությունը «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ սեփական արտադրությանը:
- Դիտարկել հայտատուներին մեկ շաբաթվա ընթացքում շահագործողի կարգավիճակ տալու վերաբերյալ որոշման ընդունման հնարավորությունը:
- Ներդրումների իրականացում ԱՏԳ ենթակառուցվածքի ստեղծման և նրանց մասերի սարքավորներով համալրման, ինչպես նաև դրանց՝ լավ վիճակում պահելը, մասնավորապես.
 - Գլխավոր ավտոմայրուղիները ԱՏԳ տարածքի հետ կապող ճանապարհների նորոգում(վերակառուցում),
 - «Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ հետ համագործակցությամբ ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ տարածքում երկաթուղային գծի անցկացում (վերականգնում) լուծելով զուգահեռ խնդիրները (այդ թվում ապօրինի մասնավոր շինարարությունը):

Գլոբալ խնդիրներ և առաջարկներ

- Բարձր տեխնոլոգիաների ճյուղի և մասնագետների պրոֆեսիոնալ պատրաստման համակարգի զարգացման համար կադրերի հասանելիության ապահովում:.

Տվյալ խնդիրը հիմնային է ինչպես կարճաժամկետ , այնպես էլ՝ երկարաժամկետ պլաններում: Կրթական համակարգի կատարելագործմանն ուղղված միջոցառումները կօգնեն լուծելու հետագայում կադրերի հարցը: Բավարար քանակությամբ կադրերի և մասնագետների բացակայությունը կարող է լինել անդրազգային կորպորացիաներին ԱՏԳ ներգրավելու ճանապարհին գլխավոր խոչընդոտներից մեկը:

Հնդկաստանի հաջող փորձը, երբ երկիրը ակցենտը դրեց ծրագրավորման ասպարեզում բարձրագույն կրթության վրա, բազմակողմանիորեն զարգացնելով կրթության այդ ասպարեզը, համեմատաբար կարճ ժամկետում դառնալով աֆշորային ծրագրավորման համաշխարհային կենտրոն, այս առումով հատկանշական է:

Նոր կադրերի պատրաստման համար անհրաժեշտ է նախագծել ու իրականացնել պետության քաղաքականությունը հետևյալ հիմնական խնդիրների լուծմանն ուղղված, ներառող.

- Կրթական չափորոշիչների վերազինումը՝ հաշվի առնելով միջազգային պրակտիկան,
- Ուսուցիչների, այդ թվում առաջատար համալսարաններում, ծավալային վերապատրաստում,
- Համաշխարհային կարգին համապատասխանող նոր տիպի հայկական տեխնոլոգիական համալսարանի ստեղծումը (կարելի է դիտարկել Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան որպես բազա),
- Տեխնոլոգիական համալսարանի ԱՏԳ պրոֆիլային ռեզիդենտների հետ համագործակցության զարգացում. մասնավորապես նախատեսվում է, հաշվի առնելով այս կամ այն կարգի ԱՏԳ ռեզիդենտների պահանջները՝ ձևավորել տեխնոլոգիական համալսարանում մասնագետների պատրաստման պետական պատվեր, կազմակերպել ԱՏԳ կազմակերպություններում տեխնոլոգիական համալսարանի ուսանողների ստաժավորում և այլն:
- Տեղական հեռանկարային ուսումնասիրությունների և հիմնային աշխատությունների ֆինանսավորում,

- Հեռանկարային ուսանողների և մասնագետների՝ լավագույն արտասահմանյան տեխնոլոգիական համալսարաններում և գիտական կենտրոններում կրթության ֆինանսավորումը, հետագայում բավարար երկար ժամկետով (օր. 7 տարի) մասնագետների՝ Հայաստանում աշխատելու պայմանով:
- Կադրերի պատրաստման գործընթացում ակտիվորեն օգտագործել Սփյուռքը, հատկապես նրա այն ներկայացուցիչներին, որոնք աշխատում են բարձրտեխնոլոգիական կազմակերպությունների ղեկավարման պաշտոններում:

➤ Օրենսդրության կատարելագործում,

- Հաշվի առնելով այն, որ ստեղծվող ԱՏԳ-ներում ենթադրվում է արտադրելու մեծամասամբ նորարական և բարձր տեխնոլոգիական արտադրանք, ապա ռեզիդենտների կողմից տվյալ արտադրանքի արտահանման ժամանակ կարող են դժվարություններ առաջանալ կապված «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրմամբ,ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի հետ: Մասնավորապես, օրենքի կարգավորման տակ են ընկնում «...յուրաքանչյուր ինֆորմացիա, մտավոր աշխատանքի արդյունք, համակարգչային ծրագրեր, որոնք կիրառվում են քաղաքացիական Անպատակներով և իրենց յուրահատկության և հատկանիշների ուժով կարող են օգտագործվել նաև ռազական նպատակներով...» (այսինքն IT և R&D ոլորտի շատ ապրանքներ): Նպատակահարմար ենք գտնում համապատասխան օրենքում և նորմատիվ իրավական ակտերում հեշտացնելու ԱՏԳ ռեզիդենտների արտադրանքի համապատասխան արտահանման կարգը (այդ թվում, օրինակ, ԱՏԳ տարածքում ստեղծել երկակի նշանակության ապրանքների համապատասխան փորձագիտական կենտրոն),
- Մտավոր սեփականության պաշտպանության մասով,
- Ներդրողիներին պետական երաշխիքի տրամադրման մասով, մասնավորապես հետևյալ պայմանների ապահովումը.

- Ներդրողները ինքնուրույն են ձևավորում իրենց արտադրական ծրագրերը,
 - Պետությունը երաշխավորում է ներդրողներին կապիտալի անխափան ռեպատրիացիա,
 - Օրարերկրյա ներդրումներով առևտրային կազմակերպությունների նկատմամբ բավականին երկար ժամկետի ընթացքում չեն կիրառվում նրանց կարգավիճակը և գործունեության պայմանները վատթարացնող օրենսդրական ակտեր (պայմանների վատթարացման մորատորիում),
 - ԱՏԳ տարածքում չի թույլատրվում ներդրողների ունեցվածքի կամ ներդրումների նկատմամբ ազգայանցում, բռնագրավում կամ իրենց գործառույթով նմանատիպ միջոցառումներ:
- ԱՏԳ տարածքում իրագործվելիք նորարարական ծրագրերի ֆինանսավորման համար վենչուրային ներդրումային ֆոնդերի ստեղծումը խրախուսող միջոցառումների կիրառում, խթանում ,արտոնությունների տրամադրում:
 - ԱՏԳ ռեզիդենտների մասնագետ-աշխատակիցների սոցիալական հարկերի և տուրքերի մասով արտոնայլ հարկային ռեժիմի տրամադրման հնարավորության դիտարկում: Որպես տարբերակ կարելի է դիտարկել որոշակի ժամկետով հարկային արձակուրդ, կամ, օրինակ, կարելի է կիրառել հարկման ռեգրեսիվ սանդղակ (մասնագետների եկամուտները որոշակի գումարից բարձրի դեպքում ենթակա են հարկման ավելի ցածր տոկոսադրույքով): Դա կխթանի բարձր վարձատվող մասնագետների ներգրավումը: Տվյալ միջոցառումը առավել արդյունավետ կլինի հայկական բարձրտեխնոլոգիական կազմակերպությունների և նորարարական start-up-ների համար: Նման մոտեցում է կիրառվել, մասնավորապես Ռուսաստանում «Սկոլկովո» կենտրոնի ստեղծման ժամանակ,իսկ հետո տարածվել է ամբողջ բարձր տեխնոլոգիայի ոլորտի վրա:
- Պետական պատվերի տեղաբաշխում ԱՏԳ տեղական ռեզիդենտ-կազմակերպություններում:

- Գրանտերի տրամադրում գիտահետազոտական և փորձարարական ստրուկտորական ոլորտի ԱՏԳ-ի հայկական շահագործող-կազմակերպություններին :
- Վենչուրային շուկայի զարգացում և պետության մասնակցությունը վենչուրային ֆոնդերում, այդ թվում Համահայկական բանկի մեխանիզմների օգտագործմամբ:
- Հայկական ԱՏԳ շահագործող-կազմակերպություններին համաշխարհային մակարդակով արտոնագրերի և հավաստագրերի ստացման օժանդակություն:
- ԱՏԳ աշխատանքների արդյունավետության բարձրացման համար ԱՏԳ շահագործողների և Օպերատորի առաջարկությունների հիման վրա որոշումների կայացում:
- Պետական աջակցություն հայկական բարձրտեխնոլոգիական արտադրանքի միջազգային շուկա տեղափախման հարցում (միջազգային հավաստագրում, միջպետական մակարդակի PR կոմպանիաներ, ճյուղային ցուցահանդեսներին և համաժողովներին մասնակցություն և դրանց անցկացում):

Ելնելով պետության մասնակցության տվյալ կարևոր ձևերից՝ կարելի է հանգել նրան, որ պետությունը պետք է լինի ոչ միայն դիտորդ, այլ նաև իր վրա վերցնի գիտատար և բարձր տեխնոլոգիաների արտադրության և արտահանման զարգացման ծրագրերի հաջող իրականացման պատասխանատվության նշանակալից մասը:

Վերոգրյալ խնդիրների ծրագրավորված լուծումը լրացուցիչ խթան կձառայի Հայաստանում ԱՏԳ զարգացման և արդյունավետ աշխատանքի համար, թույլ կտա ձեռք բերել նորարարական և բարձրտեխնոլոգիական բիզնեսի համար նպաստավոր երկրի իմիջ:

Ստորև բերված են բարձր տեխնոլոգիաների արտահանման պետական աջակցության մեխանիզմների օրինակներ, այն երկրներում, որոնք առավել հաջողված են բարձր տեխնոլոգիական սեկտորի աջակցության գործում:

Աղ. 10 Բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման զարգացման պետական աջակցության մեխանիզմների կիրառումը որոշ երկրների օրինակով

№	Պետական աջակցության մեխանիզմ	Աշխարհում կիրառված պրակտիկա
1.	<p>Ազգային կազմակերպությունների՝ համաշխարհային շուկա տեղափոխման պետական աջակցություն</p>	<ul style="list-style-type: none"> - Իռլանդիա. Տեխնոլոգիաների արտահանման զարգացման աջակցության պետական գործակալությունը (Enterprise Ireland), գրանտների տեսքով մասնագիտական օգնություն է ցույց տալիս տեխնոլոգիայի ասպարեզում արտահանման ուղղվածություն ունեցող արտադրանքի կազմակերպիչ փոքր արտադրություններին՝ խորհրդատուների ներգրավման, շուկայի հետազոտման, մարկետինգային միջոցառումների անցկացման և համաշխարհային շուկայում բիզնեսի զարգացման մարտավարության մշակման համար: - Հնդկաստան. Պետության կողմից փոքր ու միջին կազմակերպությունների՝ էլեկտրոնիկայի և ծրագրային ապահովման արտահանման առաջընթացի հարցերով հնդկական Համաժողովի հավանությանն արժանացած միջազգային ցուցադրումներում մասնակցության համար եկամուտների 90%-ի համաֆինանսավորում: - Ֆինլանդիա. Պետության աջակցությամբ բարձրտեխնոլոգիական արտահանումը միավորող FinPro ասոցիացիան ֆիննական կազմակերպությունների արտադրանքի և ծառայությունների առաջխաղացման համար կազմակերպել է մի շարք նորարարական կենտրոններ ԱՄՆ-ում, Չինաստանում և Ռուսաստանում:
2.	<p>Հատուկ ռիսկային ֆոնդերի ստեղծում</p>	<ul style="list-style-type: none"> - Իռլանդիա. Իռլանդիայի Կառավարության կողմից 2008թ.-ին «խելացի տնտեսության» կառուցման հաստատված նախաձեռնության շրջանակներում, առանձնացվում է 500մլն.եվրո փոքր կազմակերպությունների կողմից հեռանկարային տեխնոլոգիական աշխատությունների ֆինասավորման կամ տեխնոլոգիական Start-up-ների ստեղծման 5 ռիսկային ֆոնդերի ձևավորման համար (75-150մլն.եվրո ծավալով):

№	Պետական աջակցության մեխանիզմ	Աշխարհում կիրառված պրակտիկա
3.	Ծրագրային ապահովում և IT լուծումներ արտահանող ազգային կազմակերպություններին մասնագիտացված բանկերի կողմից կրեդիտների և արտահանման գործառույթների երաշխիքի տրամադրում	<ul style="list-style-type: none"> - Ճապոնիա. Արտահանմանը ֆինանսական օգնություն է ցույց տալիս միջազգային համագործակցության Ճապոնական բանկը: Կրեդիտը տրամադրվում է տեխնիկա և տեխնոլոգիա արտահանող ճապոնական կազմակերպություններին 10 տարի մարման ժամկետով պայմանագրի արժեքի 85%-ի գումարով Ճապոնիայ էկոնոմիկայի, առևտրի և արտադրության նախարարության կողմից հատուկ ապահովագրություն ստանալուց հետո: - Չինաստան. Ծրագրային ապահովման արտահանման խթանման նպատակով Չինաստանի Արտահանման-ներմուծման բանկը ատոնյալ պայմաններով կրեդիտ է տրամադրում այն կազմակերպություններին, որոնց ԾԱ արտահանման ծավալը կազմում է տարեկան ավելի քան 1մլն.ԱՄՆ դոլար:
4.	Պետական կազմակերպությունների կողմից իրականացվող IT և բարձրտեխնոլոգիական արտահանման ապահովագրություն	<ul style="list-style-type: none"> - Ճապոնիա. Արտահանման և ներդրումների ապահովագրության գծով Ճապոնական գործակալություն: - Չինաստան. Արտահանման կրեդիտների ապահովագրության Չինական կորպորացիա: - Հարավային Կորեա. Կորեական արտահանման ապահովագրության կորպորացիա: - Բրազիլիա. Արտահանման կրեդիտների ապահովագրության Բրազիլական կազմակերպություն:
5.	Ծրագրային ապահովման և IT լուծումներ մշակող կազմակերպությունների՝ միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանության սերտիֆիկացման համաֆինանսավորում	<ul style="list-style-type: none"> - Հնդկաստան. Ֆինանսավորվում է փոքր ու միջին կազմակերպությունների կողմից ISO ստանդարտներով սերտիֆիկացման(բայց ոչ ավել քան 1.5հազար ԱՄՆ դոլար) ծախսերի 75%-ը: - Չինաստան. IT ասպարեզում փոքր ու միջին կազմակերպություններին պետության կողմից վճարվում են ISO և ՍՄՄ ստանդարտներով սերտիֆիկացման հետ կապված բոլոր ծախսերը:
6.	Բարձր տեխնոլոգիական սարքավորումների մատակարարներին գնորդ-պետության տարածքում ծրագրային ապահովման և	<ul style="list-style-type: none"> - Հնդկաստան. IT ասպարեզում արտասահմանյան պատվերների շուկայի մոտ 15%-ը կազմում են օֆսեթային գործարքներով պարտավորությունները: Ընդ որում գործող դիերկտիվների պահանջներին համապատասխան

№	Պետական աջակցության մեխանիզմ	Աշխարհում կիրառված պրակտիկա
	ԾԱ սպասարկման, ճարտարագիտական սերվիզների և այլնի տեղակայման ապահովման պարտականություն նախատեսող օֆսեթային ծրագրերի զարգացում	Հնդկաստան բարձրտեխնոլոգիաների մատակարարը (զինուժի, ավիացիոն տեխնիկայի և այլն) պետք է ազգային կազմակերպություններում տեղակայի այսպես կոչված «փոխհատուցման» ծառայությունների համար մատակարարման պայմանագրի գնի 30-50%-ի չափով պատվեր:

Սույն ծրագրում մեր կողմից ներկայացված առաջարկները, որոնք վերաբերում են ՀՀ կառավարության աջակցությանը, հաշվի են առնում վերը նշված տեխնոլոգիաների արտահանման առաջխաղացման այլ երկրների հաջող պրակտիկան:

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ-ի և «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի հիմքի վրա ԱՏԳ ստեղծման առավելությունները և շահերը

Ակնկալվող առավելությունները և շահերը ՀՀ համար

Երկրի համար «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում ԱՏԳ ստեղծման հիմնական ակնկալվող առավելությունները կլինեն.

- ✓ ուղիղ արտասահմանյան ներդրումների ներգրավումը,
- ✓ արտահանման մեծացումը,
- ✓ արտահանման և ՀՆԱ-ի կառուցվածքի դիվերսիֆիկացումը. բարձր տեխնոլոգիաների արտադրության, բարձրարժեք ծառայությունների և արտադրանքի ավելացումը,
- ✓ նոր աշխատատեղերի ստեղծումը և բնակչության զբաղվածության ավելացումը,
- ✓ կազմակերպման, ղեկավարման, ֆինանսների ասպարեզում համաշխարհային փորձի ուսումնասիրման և ներդրման հաշվին աշխատուժի որակավորման բարձրացումը,
- ✓ «ուղեղների արտահոսքի» խնդրի մասնակի լուծումը,
- ✓ առաջադեմ տեխնոլոգիաների ներգրավումը,
- ✓ նորարարության զարգացումը,
- ✓ նոր արտադրությունների կազմավորման հաշվին ՀՆԱ-ի լրացուցիչ աճի ապահովումը,
- ✓ պետության իմիջի բարձրացումը՝ որպես նորագույն մրցունակ արտադրություններ/ ծառայություններ «առաքողի»,
- ✓ լայնածավալ ռազմավարական նախագծի (ԱՏԳ ստեղծում) իրականացումը՝ առանց բյուջեից ուղիղ կապիտալ ֆինանսական ներդրումների (ԱՏԳ ստեղծման ներդրումները իրականացնում են Նախաձեռնողները),

Այստեղ հատուկ շեշտը պետք է դնել արտասահմանյան ներդրումների ներգրավման, արտահանման մեծացման և դրա կառուցվածքի դիվերսիֆիկացման վրա՝ որպես Հայաստանի Կառավարության տնտեսական զարգացման քաղաքականության հիմնական գերակայությունների:

Այլ երկրների ԱՏԳ ստեղծման հաջող փորձի օրինակներ

Հաջորդիվ՝ որոշ պետությունների օրինակով, ներկայացված է ԱՏԳ մեխանիզմների իրականացման տնտեսական արդյունքը ի թիվս՝ պետական աջակցության այլ միջոցառումների, ուղեկցող ենթակառուցվածքների ապահովման, գործարար կլիմայի հետագա բարելավման, տնտեսության կառուցվածքային վերափոխումների և բիզնեսի կարգավորման ոլորտում թափանցիկ պետական քաղաքականության:

Բանգլադեշ

Բանգլադեշում պատմականորեն արտադրվել են բարձրորակ կտորեղեն և ջութե ապրանքներ: Ջութը Բանգլադեշի գլխավոր արտահանվող ապրանքն է: Տասնամյակների ընթացքում (20-րդ դարի 50-60-ական թվականներին), ջութի համաշխարհային արտադրության գրեթե 80%-ը կենտրոնացված էր Բանգլադեշում: Սինթետիկ կտորների արտադրության զարգացման արդյունքում նախորդ դարի 70-ական թթ-ին ջութի արտադրությունն անկում ապրեց: Առևտրային հավասարակշռության ճեղքը հնարավոր եղավ ծածկել թեթև արդյունաբերության զարգացման հաշվին, որը համաշխարհային շուկաներում շատ արագ գտավ իր սպառողին:

Նախորդ հարյուրամյակի 80-ականների սկզբին կառավարությունը որոշեց զբաղվել արդյունաբերական-արտադրական տիպի ազատ տնտեսական գոտիների ստեղծման գաղափարի իրականացմամբ: Այդ պահի դրությամբ Բանգլադեշում կար ընդամենը 50 թեթևարդյունաբերական գործարան:

Արտասահմանյան ներդրողները (Կորեա, Հոնգկոնգ, Չինաստան, Թայվան) օգտվեցին Բանգլադեշի մրցակցային առավելություններից՝ աշխատանքի ցածր վարձատրությունից:


Արդյունքում, 2009-ին Բանգլադեշում շահագործվում է տեքստիլ արտադրության և վերամշակման 4500 գործարան, դրանք բերում են 75% արտահանման հասույթի (Բանգլադեշի Ազգային Բանկի տվյալներ), դրանցում զբաղված են գրեթե 2 մլն.աշխատողներ: ԱՏԳ-ն հանդիսանում է Բանգլադեշի դինամիկ զարգացող այդ ճյուղի կենտրոնը:

- 2009-ի համար օտարերկրայա ուղիղ ներդրումների(ՕՈՒՆ) ծավալը 1994թ-ից սկսած կազմել է 1 500 մլն. ԱՄՆ դոլար: Տվյալ արդյունքը վերջին տարիներին

խթանել է տեղական գործարարների կողմից լրացուցիչ կապիտալի ներդրումների գործընթացը:

- Բանզլադեշի տեքստիլ ապրանքների արտահանումը, չնայած համաշխարհային ճգնաժամին, համաշխարհային բանկի տվյալներով աճել է: Համաշխարհային բանկի և Բանզլադեշում ԱՏԳ-ի հարցով Պետական Գործակալության տվյալներով 2009թ-ին Բանզլադեշի ԱՏԳ-ում զբաղված է եղել 200 հազ. մարդ, դրանցում գեներացվում (առաջանում) է ազգային արտահանման և ներդրումների զգալի մասը:

Գրաֆիկ 1. Բանզլադեշի տնտեսությունում միջին տարեկան ՕՈՒՆ և արտահանման ծավալը



Աղբյուրը. Համաշխարհային Բանկ, RCF հաշվարկներ

Սինգապուր

Ազատ տնտեսական գոտու օգտագործմամբ արտահանման քաղաքականության վարումը առավել հաջողությունների է հասել Սինգապուրում: Սինգապուրի լիբերալ արտահանման և ներմուծման ռեժիմը թույլ է տալիս դիտարկելու այդ քաղաք-պետությունը՝ որպես միասնական արտահանման տարածք: Արտահանվող արտադրության կազմակերպման համար կառավարությունը կղզու մի շարք շրջաններ հայտարարեց որպես արդյունաբերական գոտիներ, այսինքն՝ ամբողջությամբ արտահանմանը նպատակաուղղված արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման համար ամբողջությամբ ապահովված տարածքներ: Պետությունը ֆինանսավորեց արդյունաբերական ենթակառուցվածքի համակարգի ստեղծումը, ներառյալ՝ ճանապարհները, էլեկտրաէներգիայի մատակարարումը, ջրամատակարարումը, կապի և հեռահաղորդակցման համակարգը և այլն: Վերջին 2 տասնամյակում

Սինգապուրի տնտեսությունում տեղի ունեցավ կառուցվածքային փոփոխություն դեպի բարձրտեխնոլոգիական ապրանքների արտադրության աճը:

Ազատ առևտրի և արդյունաբերական գոտիների ստեղծումը իրականացվում է հատուկ ծրագրի շրջանակներում, որի իրագործումը սկսվեց 1970թ-ին, երբ Սինգապուրի պառլամենտը օրենք ընդունեց «Տնտեսության զարգացման խթանման մասին»:

80-ական թթ-ի վերջին Սինգապուրում կազմավորվեց 25 արդյունաբերական շրջան (այդ թվում Դուրոնգում, Կրանջիում, Սունգեյ Կադուտում, Յու Տիում, Լոյանգում և այլն), որտեղ ստեղծվել է գրեթե 4 հազ. ձեռնարկություն՝ 183 հազ. զբաղեցված մարդկանց ընդհանուր թվով: Այդ կազմակերպություններում կապիտալ ներդրման ծավալը կազմում է ավելի քան 20 մլրդ. սինգապուրյան դոլար:

90-ական թթ.-ի սկզբին արդյունաբերական գոտիներին էր բաժին ընկնում Սինգապուրի վերամշակման արդյունաբերական արտադրանքի արտահանման գրեթե 80%-ը:


Անցումը գիտատար ճյուղերի զարգացման առաջնահերթությանը սկսվեց 70-ական թթ-ի վերջին: Խնդիր էր դրվել քաղաք-պետությունը վերածելու տեղեկատվական և բարձրտեխնոլոգիական արդյունաբերության բարձր ավելացված արժեքով ապրանքներ արտադրող ռեգիոնալ կենտրոնի: Հատուկ ուշադրություն է դարձվում բիոտեխնոլոգիային, էլեկտրոնիկային, արհեստական ինտելեկտի (բանականության) ստեղծմանը, լազերային տեխնոլոգիային, ռոբոտատեխնիկային, ինֆորմատիկայի և կապի շրջանում տեխնոլոգիաներին: Այդ խնդիրների շրջանակներում ստեղծվեցին գիտական պարկեր.

- Սինգապուրյան գիտական պարկը (SSP) հիմնադրվել է 1980թ-ին, ներկայումս ռեգիոնալ-կազմակերպությունների թիվը կազմում է 307 (ԻՏ և էլեկտրոնիկա), վենչուրային նախագծերով զբաղվող 2 կազմակերպություն, այն կողմնորոշված է ԱԱԿ-ների (անդրազգային կազմակերպություններ), ինչպես նաև նոր տեխնոլոգիաների փոխանցման և ներդրման վրա:
- Բազմաֆունկցիոնալ արդյունաբերական տեխնոպարկ One North (1N), ստեղծվել է 2005թ-ին: Ծրագրի ներդրումները կազմել են 15 մլրդ. դոլար, կողմնորոշված է մանր և միջին ձեռնարկությունների և նոր տեխնոլոգիաների ստեղծման վրա:

Համաշխարհային Բանկի տվյալների համաձայն՝ 1966-1990թթ-ի արդյունքներով Սինգապուրում տնտեսական աճի միջին մակարդակը կազմել է

8.5%, 1993թ-ին՝ 9.9%, 1994թ-ին՝10%, 1997թ-ին՝ 8.9%, 2002-2007թթ-ին՝ 6.6%: Գրաֆիկ 2-ը ցույց է տալիս Սինգապուրի արտահանման ծավալների աճը, այդ թվում բարձր տեխնոլոգիական ատրադրանքի:

Գրաֆիկ 2. Սինգապուրի տնտեսությունում ՕՌԻՆ և արտահանման ծավալը



Աղբյուրը. Համաշխարհային Բանկ, RCF հաշվարկներ

2-րդ գրաֆիկը ցույց է տալիս արդյունքը, որը ծրագիրը ունեցել է ՕՌԻՆ ծավալների վրա: Եթե 1970թ-ին օտարերկրյա ուղիղ ներդրումների ծավալը կազմել 93մլն., ապա 2010-ին այդ ցուցանիշը կազմել է ավելի քան 38 մլրդ.: Այդ շրջանում ՕՌԻՆ կուտակված ծավալը կազմել է ավելի քան 300մլրդ. ԱՄՆ դոլար (Համաշխարհային Բանկի տվյալները):

Մալազիա


«Ուղիղ ներդրումները խթանելու մասին» օրենքի ընդունումից հետո՝ 1986թ.-ին, Մալազիայում ստեղծվեց օտարերկրյա ներդրողներին ներգրավելու համալիր միջոցառումների ներդրման բազա: Տվյալ միջոցառումների շնորհիվ զարգացման ազդակ ստացած արդյունաբերության ճյուղերի ցանկը բավականին լայն է. գյուղատնտեսական մթերքների, քիմիայի, տեքստիլի, թղթի վերամշակում, էլեկտրոնիկայի արտադրություն: Օրենքը «Պիոներ» կամ «Բարելավված Պիոներ» (բարձր տեխնոլոգիական ճյուղերում աշխատող կազմակերպություններ) կարգավիճակ ստացած ֆիրմաների համար նախատեսում էր հարկային արտոնությունների աստիճանավորում :

Մալայզիայի ենթակառուցվածքը ուղղված է բարձր տեխնոլոգիական ճյուղերի զարգացմանը. կառավարությունը խոշոր միջոցներ է ներդնում դրանց զարգացման համար: Երկիրը հայտնի է մեծածավալ գիտական ծրագրերով (այսպես կոչված «Կիբերքաղաքներով»), այնպիսիք, ինչպիսին է «Մուլտիմեդիական գերմիջանցքը» (MSC ծրագիրը թողարկվել է 1996թ.-ին), որում հաղորդակցության կառուցվածքը կարող է մրցել լավագույն համաշխարհային

համանման կենտրոնների հետ: Ծրագիրը նպատակ ունի վերածելու Մալազիան IT-դաշտում առանցքային խաղացողի մինչև 2020 թվականը :

Այդպիսի միջոցառումների արդյունքը դարձավ արդյունաբերության վեամշակող ճյուղերի արտահանման աճը և բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանման աճը (Համաշխարհային Բանկի տվյալները): 2009թ.-ին Մալազիայի արտահանման ավելի քան քարորդ մասը կազմել է բարձր տեխնոլոգիական արտադրանքը:

Գրաֆիկ 3. ՕՌԻՆ-ի ծավալը Մալազիայի տնտեսությունում և բարձրտեխնոլոգիական արտադրանքի արտահանման ծավալը



Աղբյուրը. Համաշխարհային Բանկ, RCF հաշվարկներ

ՕՌԻՆ կտրուկ աճ տեղի ունեցավ 1987թ.-ին խթանող միջոցառումներ կիրառելուց հետո («ՈՒՂԻՂ ներդրումների խթանման մասին» օրենքի ընդունումից հետո): 2010թ.-ի համար ՕՌԻՆ ծավալը կազմել է ավելի քան 10մլրդ. դոլար, 1987թ.-ից սկսած ավելի քան 95մլրդ.դոլար (Համաշխարհային Բանկի տվյալներ):

Վիետնամ

Վիետնամում առաջին արդյունաբերական պարկը բացվել է 1991թ.-ին, այսօր դրանք 139-ն են: Ընդհանուր առմամբ դրանք զբաղեցնում են 300կմ² տարածք և կենտրոնացված են երկրի հյուսիսային և հարավային մասերում:

Վիետնամում ԱՏԳ ռեզիդենտների կողմից ստացվող արտոնությունները տարբեր գոտիներում տարբեր են: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել արտոնությունների ընդհանուր տեսակները. մեքենաների և սարքավորումների, հիմնական միջոցների, երկրում չարտադրվող որոշակի հումքի ներմուծման

տուրքի բացակայություն: Արտոնությունները ներառվում են նաև հողի վարձակալության սուբսիդիաներում:

Քանի որ տարբեր նահանգներ սեփական արտոնությունների ռեժիմ սահմանելու իրավունք ունեն, առկա է տարբեր նահանգների տեղական իշխանությունների միջև սուր մրցակցություն:


Վիետնամում ենթակառուցվածքի ոչ բարձր զարգացման մակարդակ է: 139 գոտուց 33-ն ունեն էլեկտրաէներգիայի մատակարարման խնդիրներ: Այդ պատճառով Վիետնամի կառավարությունը խթանում է արտասահմանյան ներդրողների հետ համատեղ արդյունաբերաենթակառուցվածքային կազմակերպությունների ստեղծմանը, որնոք տեղական ենթակառուցվածքի զարգացման իրավունք և պարտականություն ունեն:

Որպես դրական օրինակ հարկ է բերել Վիետնամ-Սինգապուրյան արդյունաբերական պարկը, որը ունի ջրային սեփական աղբյուրներ, թափոնների վերամշակման հզորություններ և սեփական էլեկտրակայան:

Էժան աշխատուժի և արտադրության մյուս գործոնների համակցումը վերջին ժամանակներս ձևավորել է Վիետնամի որպես այնպիսի համբավ ունեցող պետություն, որը շուտով կդառնա օտարերկրյա ուղիղ ներդրումների համաշխարհային կենտրոն:

Վիետնամի դեռևս թույլ զարգացած տնտեսության վրա ԱՏԳ-ի ազդեցությունը ահռելի է: Արտահանման և ՕՈՒՆ աճը ուղղակիորեն կապված է ազատ տնտեսական գոտիների ներդրման քաղաքականության հետ: 2006թ-ից սկսած ԱՏԳ-ից ապրանքների արտահանումը միջինում կազմում է ամբողջ արտահանման ծավալի 20%-ը:

Գրաֆիկ 4. ՕՈՒՆ-ի ծավալը Վիետնամի տնտեսությունում և արտահանման ծավալը



Աղբյուրը. Համաշխարհային Բանկ, RCF հաշվարկներ

Արդյունքը ավելի քանի 2433 օտարերկրյա ներդրողների ներգրավվումն է և ավելի քան 56 մլրդ. դոլար ՕՌԻՆ կուտակված ծավալը (ընդ որում ակտիվ աճ է նկատվում 1990թ-ից, երբ երկիրը սկսեց ակտիվորեն ներդնել ԱՏԳ քաղաքականությունը):

Հոնդուրաս

Հոնդուրասը սկսեց ակտիվորեն կիրառել ԱՏԳ քաղաքականությունը 20-րդ դարի 90-ականների սկզբից: Հոնդուրասի ազատ գոտիների հատվածը կազմված է Սան Պեդրո Սաուլ քաղաքի մոտ գտնվող հարաբերականորեն խոշոր խումբ կազմող թեթև արդյունաբերության արտադրողներից: 2008թ-ի վերջին այդ գոտիներում տեղակայված էր հիմնականում կտորեղեն և հագուստ արտադրող 342 ռեզիդենտ-կազմակերպություն: Կազմակերպությունների մեծամասնությունը պատկանում է օտարերկրացիների: 2004-2007թթ-ի ընթացքում Հոնդուրասի վերամշակման արդյունաբերությունում ՕՌԻՆ 64%-ը բաժին էր ընկնում կտորեղենի և հագուստի արտադրությանը:

Աղ. 11. ՕՌԻՆ Հոնդուրասի ազատ տնտեսական գոտիներում մլն. USD

Գործունեության տեսակ	2004	2005	2006	2007	տոկոսը ՕՌԻՆ ընդհանուր ծավալում, 2004-2007 թթ., միջինացված
Տեքստիլ	92,2	76,3	127,3	197,6	63,70%
Արտադրական ծառայություններ	20,27	22,9	32	20	12,30%
Կոմերցիա	-3,3	8	16,3	5,8	3,50%
Արգրարային արդյունաբերություն և ձկնորս:	7,7	7,8	8,2	4,3	3,60%
Ծխախոտային արտադրանք	22,4	5,3	-0,1	-3,6	3,10%
Էլեկտրոնային կոմպոնենտներ	28,7	65,3	2,3	-5,3	11,70%
Ընդամենը	167,97	185,6	186	218,8	


Աղբյուրը. Հոնդուրասի Կենտրոնական Բանկ, 2008թ.

ԱՏԳ շնորհիվ Հոնդուրասում տեղի ունեցավ արտահանման ծավալների կտրուկ աճ: 2007թ-ին ԱՏԳ-ից ապրանքների արտահանման ծավալը կազմեց 3.3 մլրդ. դոլար, ինչը կազմում է ընդհանուր ազգային արտահանման 50%-ը: 1993թ-ից սկսած այդ ցուցանիշը մեծացել է 10 անգամ, ինչը համապատասխանում է տարեկան 20% աճին:

Հոնդուրասի Ազգային Բանկի վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՏԳ արտահանման աճի տեմպերը շարունակվում են մեծանալ: Հոնդուրասի ԱՏԳ Ազգային Ասոցիացիայի (Maquila) տվյալներով, կտորեղենի և հագուստի ԱՄՆ արտահանման ծավալի մեծությամբ երկիրը 4-րդն է և զբաղեցնում է շուկայի 5.9%-ը:

Ազատ տնտեսական գոտիների ներդրման քաղաքականությունը օտարերկրյա ներդրումների կտրուկ հոսք բերեց:

Գրաֆիկ 5. ՕՈՒՆ-ի ծավալը Հոնդուրասի տնտեսությունում և արտահանման ծավալը



Աղբյուրը. Համաշխարհային Բանկ, RCF հաշվարկներ

Վերոնշյալ պետություններից յուրաքանչյուրի փորձը իր ձևով եզակի է, բայց արդյունքում ամենուր ԱՏԳ մեխանիզմների ներդրումը բերեց արտահանման ծավալների էական աճի (այդ թվում բարձրտեխնոլոգիական արտադրանքի՝ այն երկրներում, որտեղ իրականացվել է այդ ոլորտներում նպատակաուղղված քաղաքականություն), օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքի մեծացմանը, զբաղվածության աճին:

Հաջորդիվ աղյուսակում բերվում են ուսումնասիրված երկրներում և Հայաստանում ԱՏԳ ռեզիդենտներին տրամադրվող արտոնությունների կարճ համեմատական բնութագիրը:

Աղ. 12. Որոշ երկրներում տրամադրվող արտոնությունների կարճ համեմատական բնութագիրը

Երկիր	Շահութահարկի տոկոսադրույք	Այլ հարկային արտոնություններ	Արտոնությունների գործողության ժամկետը	Պատրաստի արտադրանքի արտահանման և ներմուծման տարբերք	Հումքի ներմուծման տարրեր
Մալազիա	0%	5 տարվա ընթացքում «Պիոների» կարգավիճակով շահագործողի եկամուտների 70% չեն հարկվում «Առաջատար Պիոներ» կարգավիճակով շահագործողի եկամուտների 100% չեն ենթարկվում հարկման (բարձր տեխնոլոգիաների արտադրության խթան)	Միջինը 5 տարի	Բացակայում են	Բացակայում են
Վիետնամ	10-15%	Սահմանված ժամանակահատվածում «հարկային արձակուրդներ»	Միջինում 2 տարի «հարկային արձակուրդներ»; արտահանման ուղղվածությամբ արտադրության գոտում 4 տարի «հարկային արձակուրդներ», բարձր տեխնոլոգիականում- 8 տարի	Բացակայում են	Բացակայում են, եթե հումքը չի արտադրվում Վիետնամում
Բանգլադեշ	0%	Սահմանված ժամանակահատվածում «հարկային արձակուրդներ» Օտարերկրյա սեփականության թույլտվություն; Օտարերկրյա ներդրումների վերին սահմանի բացակայություն; Կապիտալի և դիվիդենդների լրիվ ռեպատրիացիա; 100% Բանգլադեշի ռեզիդենտներին պատկանող բոլոր կազմակերպությունների համար բանկային հաշիվների տիրապետման թույլտվություն արտասահմանում	10 տարվա «հարկային արձակուրդներ» Դիվիդենդների հարկից ազատում Ֆիզիկական անձանց եկամուտների հարկից ազատում 3 տարով	Բացակայում են	Բացակայում են

Երկիր	Շահութահարկի տոկոսադրույք	Այլ հարկային արտոնություններ	Արտոնությունների գործողության ժամկետը	Պատրաստի արտադրանքի արտահանման և ներմուծման տուրքերը	Հումքի ներմուծման տուրքեր
Մինգապուր	0%	<p>Օրենսդրության համաձայն խոշոր կազմակերպությունները, որոնցում ներդրված է առնվազն 4 մլրդ. սինգ. դոլ. (710 մլն. ԱՄՆ դոլ.), ստանում են «պիոների» կարգավիճակ և 5 տարով ազատվում են հարկերից: Իսկ եթե դրանք արտադրում են արտահանվող արտադրանք, ապա արտոնությունները գործում են 10 տարի: Կազմակերպությունները, որոնք չունեն նման կարգավիճակ, բայց արտադրում են առնվազն 100 մլրդ. սինգ. դոլ. (71 մլրդ ԱՄՆ դոլ.) արժույթի արտադրանք, որից 20% արտահանվում է, նույնպես 5 տարով ազատվում են հարկերից:</p>	<p>Բոլոր կազմակերպությունները, որոնցում գործարարները ներդրել են ավելի քան 150 մլն. սինգ. դոլ. (106 մլն. ԱՄՆ դոլ. ավելի) և խոշոր ձեռնարկությունները 1 մլրդ. սինգ. դոլ. (710 մլն. ԱՄՆ դոլ.) օտարերկրյա ներդրումներով 15 տարով ազատվում են հարկերից (խոշոր ներդրումների խթան):</p>	<p>Ներմուծման տուրքերը բացակայում են, արտահանումը հարկվում է ըստ ապրանքների տարբեր խմբերի, իջեցված տոկոսադրույքով</p>	Բացակայում են
Հոնգոլաս	0%	<p>Իրացումից հարկերը – բացակայում են; Մաքուր ակտիվների հարկը – բացակայում է; Տեղական հարկերը – բացակայում են; Շահույթի ռեզիդենտի հարկը – բացակայում է; Կապիտալի ռեզիդենտի հարկը – բացակայում է; Տարադրամի փոխանակման սահմանափակումները -- բացակայում են:</p>	<p>Անժամկետ, առանց պայմանների</p>	Բացակայում են	Բացակայում են
Հայաստան	0%	<p>ԱԱՀ-ն բացակայում է; Տեղական հարկերը – բացակայում են; Կապիտալի, շահույթի, դիվիդենտների ռեզիդենտի հարկը – բացակայում է; Արժույթային սահմանափակումներ – բացակայում են; Անշարժ գույքի հարկը – բացակայում է:</p> <p>Ազատ (անմաքս) առևտրի գոտի Վրաստանի և ԱՊՀ երկրների մեծամասնության հետ</p>	<p>Անժամկետ, առանց պայմանների</p>	Բացակայում են	Բացակայում են

Ինչպես կարելի է տեսնել աղյուսակում, ուսումնասրվող երկրներից մեծամասնությունում արտոնությունները կրում են ժամանակավոր և/կամ պայմանական բնույթ, բացառությամբ Հոնդուրասի և Հայաստանի: Դա ձևավորման փուլում մեծ առավելություն է հայկական ԱՏԳ-ների համար: Մյուս պետություններում տրամադրվող արտոնությունների պայմանական բնույթը պայմանավորված է օտարերկրյա ներդրողների բարձր հետաքրքրությամբ (ձևավորման փուլում այդ պետություններից մեծամասնությունում ևս առավելությունները կրում էին բացարձակ բնույթ), համապատասխանաբար, այժմ այդ պետությունների կառավարություններն արդեն հնարավորություն ունեն մանկրելու և կիրառելու ներդրումների խթանման տարբեր մեխանիզմներ տնտեսության կոնկրետ այն նեղ որոլտներում, որոնք հետամնաց են կամ ունեն բարձր առաջնահերթություն: Երկարատև հեռանկարում՝ օտարերկրյա մեծաքանակ ներդրումների ծավալի հոսքի դեպքում, հայկական կառավարությունը նույնպես կարող է նմանատիպ մեխանիզմների օգտագործման հնարավորություն ունենալ:

Նշենք նաև Բանգլադեշում նախատեսված հարկային արտոնությունը, որով ԱՏԳ ռեզիդենտ-կազմակերպությունների աշխատակիցները 3 տարվա ընթացքում ազատվում են ֆիզիկական անձանց եկամուտների հարկումից, որը խթանում է նոր աշխատատեղերի ստեղծմանը և բարձր վարձատրվող աշխատակիցների ներգրավմանը: Ինչպես արդեն նշել ենք տվյալ փաստաթղթում, նմանատիպ (թեկուզ ժամանակավոր) արտոնությունների կիրառումը նպատակահարմար է, մասնավորապես, ազգային start-up-ների աշխատակիցների և նորարարական կազմակերպությունների (ԱՏԳ ռեզիդենտ) համար, որոնք կարող են բիզնեսի ձևավորման փուլում ներգրավել բարձր վարձատրվող մասնագետների:

Պոտենցիալ ռեզիդենտների և ներդրողների համար կանխատեսվող առավելություններն ու օգուտները

ԱՏԳ ռեզիդենտները/ներդրողները ստանում են հետևյալ արտոնությունները և պրեֆերենցիաները.

- Եկամուտների հարկման բացակայություն,
- ԱԱՀ բացակայություն,
- Մաքսատուրքերի բացակայություն (արտահանման տուրքեր-0%, ռեզիդենտների գործունեության համար հումքի և մետաղների ներմուծման տուրքեր-0%),
- Անշարժ գույքի հարկման բացակայություն,
- Արժույթային սահմանափակումների բացակայություն,

➤ **Կապիտալի, շահույթի և շահութաբաժնի ազատ ռեպատրիացիա(repatriation):**

Բացի այդ, հնարավոր ներդրողները և ԱՏԳ ռեզիդենտները ստանում են հետևյալ օգուտները և հնարավորությունները.

- Արտարանքի արտահանման արտոնյալ ռեժիմ. Հայաստանի Հանրապետությունը ԱՊՀ երկրներից մեծամասնության հետ կնքել է ազատ առևտրի մասին համաձայնագրեր:
- Նոր, լայնածավալ սպառման շուկաների զարգացում: Հայաստանը ունի հարմար աշխարհագրական դիրք այնպիսի մեծ սպառման շուկաների միջև, ինչպիսիք են Ռուսաստանը և ԱՊՀ-ն, Իրանը, Թուրքիան, Մերձավոր Արևելքը, Հնդկաստանը:
- Արտադրանքի մոտեցումը սպառողին (անդրազգային և այլ խոշոր կազմակերպություններ կարող են մոտեցնել իրենց արտադրանքը հիմնական սպառման շուկաներին):
- Ծախսերի նվազեցում՝ կապված արտահանման և ներմուծման մաքսատուրքերի բացակայության հետ:
- Որակյալ ենթակառուցվածքի մատչելիություն:
- Որակյալ տեղական աշխատանքային ռեսուրսներ:
- Տարածքների վարձակալման արտոնյալ պայմաններ:
- Առավել էժան աշխատուժի օգտագործում:
- Արտադրվող ապրանքների մրցակցային գին (նվազագույն ծախսումներ):
- Վարչական խոչընդոտների նվազեցում և հեշտացված ընթացակարգեր («մեկ պատուհանի» ծառայություն և մաքսային գործընթացների տեղում իրականացում):
- Ներդրումների վերադարձ բարձր աճով:
- Բիզնես-դաշինքներ (ԱՏԳ-ում գործընկեր կազմակերպությունների հետ):
- Տեղեկատվության փոխանակում (գիտելիքի փոխանակում և ձեռք բերում, հմտությունների և փորձի բարելավում, մրցակցության և կոոպերացիաների խթանում):
- Հեղինակություն:

Հնարավոր ռեզիդենտների համար ԱՏԳ գրավչության հիմնական խթանը կլինեն հարկային արտոնությունները և պրեֆերենցիաները : Ստորև մեր կողմից ներկայացված է

ԱՏԳ տարածքում աշխատանքի արդյունավետության ֆինանսական գնահատականը՝ արտահանվող ապրանք արտադրող կազմակերպության համար:

Հնարավոր ռեզիդենտի համար ԱՏԳ գրավչությունը

Գնահատման ժամանակ համեմատվում է կազմակերպության (արտահանվող ապրանք արտադրող) ԱՏԳ տարածքում գործունեության ֆինանսական գրավչությունը Հայաստանի սովորական հարկային-մքասային գոտում (ԱՏԳ տարածքից դուրս) աշխատանքի հետ:

Ընդ որում մեր կողմից ուսումնասիրվել են արտադրության երկու տարբերակ. առաջինում արտադրությունում բացառապես տեղական հումքի օգտագործումը, իսկ երկրորդում ներմուծված հումքի հարաբերական մասի օգտագործում, որի նկատմամբ կիրառվում է համապատասխան մաքսատուրք:

Տարբերակ 1. արտադրությունում բացառապես տեղական հումքի օգտագործում.

Հաշվարկելից արվել են հետևյալ ենթադրությունները.

1. Միավոր ապրանքի ինքարժեքը կազմում է նրա արժեքի 80%-ը,
2. Կազմակերպության կողմից ստացված շահույթը վերաներդրվում է, 1 կ. համաձայն ներդրված յուրաքանչյուր 1 պ.մ. հաջորդ տարում տալիս է արտարվող ապրանքի 1,25 միավոր աճ,
3. Կազմակերպությունը վաճառում է ապրանքը 1պ.մ. գնով (արտահանման ժամանակ ԱԱՀ-ն միշտ 0% է),
4. Մնացած պայմանները համարում ենք հավասար (միևնույն ինքնարժեքը, հաշվի չենք առնում այլ հնարավոր ազդեցությունները, ինֆլյացիան և այլն):

Այդպիսի ենթադրությունների դեպքում պարզեցված հաշվարկները և արդյունքները բերված են ստորև.

ԱՏԳ-ում գործունեություն	2012	2013	2014	2015	2016	2017
Արտահանման ծավալ (ԱՏԳ), միավոր ապր.	1000	1250	1563	1953	2441	3052
Միավոր ապր. գինը, պ.մ. (արտահանման ԱԱՀ-ն 0%)	1	1	1	1	1	1
Եկամուտ	1000	1250	1563	1953	2441	3052



Ինքնարժեք	800	1000	1250	1563	1953	2441
Հարկաման բազա	200	250	313	391	488	610
Եկամտահարկ (0%)	0	0	0	0	0	0
ԱՏԳ տարածքում հարկի վճարումից հետո շահույթը, պ.մ.	200	250	313	391	488	610

ԱՏԳ-ից դուրս գործունեություն	2012	2013	2014	2015	2016	2017
Արտահանման ծավալ (ոչ ԱՏԳ), միավոր ապր.	1000	1200	1440	1728	2074	2488
Միավոր ապր. գինը, պ.մ. (արտահանման ԱԱՀ-ն 0%)	1	1	1	1	1	1
Եկամուտ	1000	1200	1440	1728	2074	2488
Ինքնարժեք	800	960	1152	1382	1659	1991
Հարկաման բազա	200	240	288	346	415	498
Եկամտահարկ (20%)	40	48	58	69	83	100
Առանց արտոնության ռեժիմի հարկի վճարումից հետո շահույթը, պ.մ.	160	192	230	276	332	398

Շահումը ԱՏԳ-ում աշխատելուց (եկամտի տարբերություն).							
	պ.մ.	40,0	58,0	82,1	114,1	156,5	212,2
	%	25,0%	30,2%	35,6%	41,3%	47,2%	53,3%
Շահելու աճի տեմպը ԱՏԳ-ում աշխատելուց %		0%	45%	42%	39%	37%	36%

ԱՏԳ տարածքում գործունեության ֆինանսական արդյունքը (նույն ենթադրություններով ու հաշվարկներով) ստորև ցույց է տրված գրաֆիկի տեսքով.

Գրաֆիկ 6. ԱՏԳ ռեզիդենտի համար ֆինանսական արդյունքը (տեղական հումքի և նյութերի օգտագործում)



Աղբյուրը. RCF հաշվարկներ

Տարբերակ 2. Արտադրությունում ներմուծված հումքի/նյութերի օգտագործումը.

Հաշվարկելից արվել են հետևյալ ենթադրությունները.

1. Միավոր ապրանքի ինքարժեքը կազմում է դրա արժեքի 80%-ը,
2. Ինքնարժեքում հումքի և նյութերի մասը կազմում է 50%,
3. Օգտագործվող հումքի և նյութերի ծավալում ներմուծված բաղադրիչների մասը կազմում է 70%,
4. Կազմակերպության կողմից ստացված շահույթը վերաներդրվում է; համապատասխանաբար 1 կ. համաձայն ներդրված յուրաքանչյուր 1 պ.մ. հաջորդ տարում տալիս է արտարվող ապրանքի 1,25 միավոր աճ,
5. Կազմակերպությունը վաճառում է ապրանքը 1 պ.մ. գնով (արտահանման ժամանակ ԱԱՀ-ն միշտ 0% է),
6. Ներմուծված հումքը և նյութերը ենթակա են հարաբերական 10% մաքսատուրքի,
7. Մնացած պայմանները համարում ենք հավասար (միևնույն ինքնարժեքը, հաշվի չենք առնում այլ հնարավոր ազդեցությունները, ինֆլյացիան և այլն):



Այդպիսի ենթադրությունների դեպքում պարզված հաշվարկները և արդյունքները բերված են ստորև.

US\$-ում գործունեություն	2012	2013	2014	2015	2016	2017
Արտահանման ծավալ (US\$), միավոր ապր.	1000	1250	1563	1953	2441	3052
Միավոր ապր. գինը, պ.մ. (արտահանման ԱԱՀ-ն 0%)	1	1	1	1	1	1

Եկամուտ	1000	1250	1563	1953	2441	3052	
Ինքնարժեք	800	1000	1250	1563	1953	2441	
Ներմուծվող հումքի և նյութերի համար մրասատուրքերի վճարման լր.ծախսեր(10%)	0	0	0	0	0	0	
Հարկաման բազա	200	250	313	391	488	610	
Եկամտահարկ (0%)	0	0	0	0	0	0	
ԱՏԳ տարածքում հարկի վճարումից հետո շահույթը,պ.մ.	200	250	313	391	488	610	
ԱՏԳ-ից դուրս գործունեություն	2012	2013	2014	2015	2016	2017	
Արտահանման ծավալ (ոչ ԱՏԳ), միավոր ապր.	1000	1172	1374	1610	1887	2211	
Միավոր ապր. գինը, պ.մ. (արտահանման ԱԱՀ-ն 0%)	1	1	1	1	1	1	
Եկամուտ	1000	1172	1374	1610	1887	2211	
Ինքնարժեք	800	938	1099	1288	1509	1769	
Ներմուծվող հումքի և նյութերի համար մրասատուրքերի վճարման լր.ծախսեր(10%)	28	33	38	45	53	62	
Հարկաման բազա	172	202	236	277	325	380	
Եկամտահարկ (20%)	34	40	47	55	65	76	
Առանց արտոնության ռեժիմի հարկի վճարումից հետո շահույթը,պ.մ.	138	161	189	222	260	304	
Շահումը ԱՏԳ-ում աշխատելուց (եկամտի տարբերություն):							
	պ.մ.	62,4	88,7	123,5	169,1	228,7	306,1
	%	45,3%	55,0%	65,3%	76,3%	88,1%	100,6%
Շահելու աճի տեմպը ԱՏԳ-ում աշխատելուց %		0%	42%	39%	37%	35%	34%

ԱՏԳ տարածքում գործունեության ֆինանսական արդյունը (նույն ենթադրություններով ու հաշվարկներով) ստորև ցույց է տրված գրաֆիկի տեսքով.

Գրաֆիկ 7. ԱՏԳ ռեզիդենտի համար ֆինանսական արդյունքը (ներմուծված հումքի և նյութերի օգտագործում)



Աղբյուրը. RCF հաշվարկներ

Ներկայացված հաշվարկներից պարզ է, որ նույնիսկ արտադրությունում բացառապես տեղական հումքի օգտագործման դեպքում, պայմանական արտադրողի շահույթի տարբերությունը ԱՏԳ շրջանակներում գործունեություն իրականացնելու և ԱՏԳ տարածքից դուրս գործունեություն իրականացնելու դեպքում, կարող է լինել աշխատանքի առաջին տարում 25%-ից մինչև վեցերորդ տարում 53% (հաշվի առնելով արված ենթադրությունները):

ԱՏԳ ստեղծման ակնկալվող արդյունավետությունը «ՌԱՕ ՄԱՐՍ»ՓԲԸ-ի և «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ -ի համար

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում ԱՏԳ-ի ստեղծումը ձեռնարկությունների համար կլինի զարգացման որակապես նոր էտապ: ԱՏԳ ստեղծումը նոր հնարավորություններ կբացի և զգալի դրական արդյունք ցույց կտա, մասնավորապես.

- Հնարավորություն կտա սեփական արտադրությունը ներառելու ԱՏԳ -ում և օգտվելու ԱՏԳ բոլոր ներկայացվող արտոնություններից և առավելություններից:
- Հնարավորություն կտա զարգացնելու առկա ձեռնարկությունները և ստեղծելու նորերը, ապրանքների/ծառայությունների գների հարցում դառնալու առավել մրցունակ, լուծելու սպառման շուկայի հարցը և մեծացնելու եկամուտները:
- Հնարավորություն կտա վարձակալության տրվող տարածքներից ստանալու առավելագույն արդյունք, էականորեն մեծացնելու տվյալ հողվածներով ձեռնարկության եկամուտները:
- Հնարավորություն կտա բարերավելու ենթակառուցվածքը և նյութատեխնիկական բազան:
- Հնարավորություն կտա գիտական մշակումների և հետազոտությունների կոմերցիալիզացմանը, նոր փոքր գիտատար ֆիրմաների ստեղծմանը (spin-off կազմակերպություններ):

- Կապահովի high-tech-ի ասպարեզում բրենդի (ՄԱՐՍ և ԵՐՄՄԳՀԻ) ստեղծմանը, ինչպես նաև այդ բրենդի լայն համաշխարհային ճանաչողությանը՝ վերջինիս օգտագործմանն ուղեկցող հնարավորություններով:

Ծրագրի SWOT վերլուծություն

Ստորև բերվում է Ծրագրի կրճատ SWOT վերլուծությունը.

<p>Ուժեղ կողմեր՝</p> <p>ԱՏԳ-ում գործող արտոնությունների և պրեֆերենցիաների էական ծավալը (հարկերի և տուրքերի զրոյական տոկոսադրույքներ (բացառությամբ՝ սոցիալականի),</p> <p>ԱՏԳ-ում գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքը,</p> <p>Հարուստ գիտատեխնիկական ժառանգությունը,</p> <p>Ցածր վարձատրվող և որակավորված աշխատանքային ռեսուրսների առկայությունը,</p> <p>Որոշակի բնական ռեսուրսների առկայությունը (մասնավորապես՝ պղինձ, թանկարժեք և հազվագյուտ մետաղներ),</p> <p>Ձեռնտու աշխարհագրական դիրքը (տրանզիտային պոտենցիալ, մոտիկություն իրացման խոշոր շուկաներին),</p> <p>Քաղաքական կայունություն,</p> <p>Գիտատար և բարձր տեխնոլոգիաների արդյույանբերության զարգացմանը նպատակամղված պետական աջակցություն,</p> <p>Կոմերցիոն հեռանկարներ ունեցող գիտական գաղափարների և մշակումների մեծ պաշար:</p>	<p>Թույլ կողմեր՝</p> <p>Բարձր տեխնոլոգիաների և նորարարությունների ֆինանսական աջակցության չզարգացած համակարգը (փոխառությամբ ֆինանսավորում, ուղիղ և վենչուրային ներդրումներ և այլն),</p> <p>Ազգային բիզնեսի համար միջազգային շուկաներ դուրս գալու բարդությունը,</p> <p>Որակավորված մենեջերների պակաս, բարձր տեխնոլոգիաների և տեխնոլոգիաների տրանսֆերտի/ փոխանցման ոլորտում բարձրակարգ մասնագետների սահմանափակ քանակություն,</p> <p>Ներկայիս տրանսպորտային սահմանափակումները,</p> <p>Հայրենական և արտասահմանյան գիտահետազոտական և փորձարարական ստրուկտուրական աշխատանքների պոտենցիալ սպառողների հետ թույլ կապերը,</p> <p>Նոր տեխնոլոգիական կադրերի պատրաստման հետամնաց համակարգ,</p> <p>Փոքր ներքին սպառողական շուկա:</p>
<p>Ռիսկեր՝</p> <p>Գիտական և տեխնոլոգիական կադրերի ծերացում, կրթության որակի</p>	<p>Հնարավորություններ՝</p> <p>Ներքին և համաշխարհային շուկաներում բարձր տեխնոլոգիաների</p>

<p>անկում, Ուղեղների արտահոսք, կադրային սովի առաջացում, Նորարական զարգացման ոլորտում զարգացող երկրների միջև մրցակցության ուժեղացումը, Խոշոր միջազգային կազմակերպությունների ներգրավման բարդությունը, Անկայունությունը տարածաշրջանում և այլ ֆորս-մաժորային հանգամանքներ:</p>	<p>ոլորտի ապրանքների և ծառայությունների պահանջարկի աճը, Նորարարական և գիտատար տեխնոլոգիաների պահանջարկի բավարարումը անդրազգային կազմակերպությունների կողմից, Սկիզբի ներդրումային ռեզերվի օգտագործում, Երկրի ղեկավարության ամուր դիրքորոշումը ինովացիոն ինֆրաստրուկտուրայի/ ենթակառուցվածքի զարգացման հարցում, Տեխնոլոգիաների տրանսֆերտի շնորհիվ աշխատանքի արտադրողունակության էական բարձրացումը, Առաջնորդությունը հեռանկարային բարձր տեխնոլոգիական ճյուղերի շարքում ի հաշիվ մրցակցային առավելությունների, Բարձր տեխնոլոգիաների իրացման շուկաների աճը՝ ի հաշիվ ինտեգրացիոն գործընթացների (ազատ առևտրի գոտի ԱՊՀ-ում), Մտավոր ռեսուրսների ներգրավման համար պայմանների ստեղծումը, այդ թվում՝ ի հաշիվ հայրենադարձության Տեղի որակավորված մասնագետների համար բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծումը:</p>
---	---

Ռիսկերի կրճատման հիմնական ուղիները

1. *Գիտական և տեխնոլոգիական կադրերի ծերացում, կրթության որակի անկում:* Սա առավել քան կարևոր ռիսկերից մեկն է: Տվյալ ռիսկի հաղթահարման համար հիմնական ջանքերը պետք է գործադրեն պետությունը և հենց տեխնիկական ԲՈՒՀ-երը: Պետական ճարտարագիտական համալսարանի բազայի արմատական բարելավումը (նոր ստանդարտների և կրթական ժամանակակից մակարդակի ներդրմամբ) ունակ է ապահովելու գիտելիքների փոխանցումը և նոր պահանջված մասնագիտացումների ձեռքբերումը: ԱՏԳ շահագործողներին կադրերով ապահովելու համար անհրաժեշտ է պետության համագործակցությունը ԱՏԳ շահագործողների

հետ սկսած մասնագետների քանակի և կրթության ուղղվածության պետական պատվերի ձևավորման մակարդակից: Ինչպես նաև անհրաժեշտ է մշակել և իրականացնել որակավորված մասնագետների հայրենադարձության ծրագիր:

2. *Ուղեղների արտահոսք, կադրային սովի առաջացում:* ԱՏԳ ստեղծումը և դրանց զբաղեցումը պրոֆիլային շահագործողներով կնպաստի ուղեղների արտահոսքի գործընթացի թուլացմանը՝ հնարավորություն տալով ստեղծել բարձր վարձատրվող աշխատատեղեր:
3. *Ինովացիոն զարգացման ոլորտում զարգացող երկրների միջև մրցակցության ուժեղացումը:* Անհրաժեշտ է համաշխարհային բարձր տեխնոլոգիաների ճյուղի նոր միտումների և այլ երկրներում օգտագործվող ներդրողների և տեխնոլոգիաների ներգրավման մեխանիզմների շարունակական մոնիտորինգ: Արտոնությունների և պրեֆերենցիաների մեխանիզմների մշտական բարելավումը(կատարելագործումը) բոլոր մակարդակներում որոշումների ընդունման ճկունության և արագության ապահովմամբ, երկրի մրցակցային առավելությունների առավելագույն օգտագործման հետ միասին կարող են պարարտ հող ստեղծել նույնիսկ խիստ մրցակցային պայմաններում:
4. Անդրազգային կազմակերպությունների ներգրավման բարդությունը: Խոշոր միջազգային կազմակերպությունների ներգրավման համար կմշակվի մարկետինգային ռազմավարություն: Հատուկ գործակալությունների, սփյուռքի և ոչ պաշտոնական կապերի օգտագործմամբ կանցկացվեն PR ակցիաներ: Այս գործընթացում նաև կարևոր է աջակցությունը պետական մակարդակում (լրացուցիչ պրեֆերենցիաների տրամադրում, ներդրումային երաշխիքների ապահովում և այլն):

Հիմնական եզրահանգումներ

Ներկայումս ինչպես առաջատար, այնպես էլ զարգացող երկրների առանցքային խնդիրն է հանդիսանում տնտեսության մրցունակության բարձրացումը:

«Կառավարության տնտեսական զարգացման ռազմավարության առաջնահերթային ուղղությունների շարքին դասվում են՝

- ✓ Օտարերկրյա ներդրումների ներգրավումը,
- ✓ Հայկական արտադրանքի մրցունակության բարձրացումը համաշխարհային շուկայում,
- ✓ Արտահանման ավելացումը և դրա համակարգի դիվերսիֆիկացումը (բարձրտեխնոլոգիական և գիտատար արտադրանքի արտահանման մասնաբաժնի ավելացում),
- ✓ Գիտատար արտադրության զարգացում:

ԱՏԳ գործունեության փորձն աշխարհում վկայում է այն մասին, որ այս մեխանիզմը հանդիսանում է վերոնշյալ խնդիրների լուծման ամենագործուն միջոցը:

Միջազգային կորպորացիաներն իրենց գործունեության համար արտոնյալ պայմանների փնտրտուքում ազատ տնտեսական գոտիները դիտում են որպես բարենպաստ տարածքներ, որտեղ հնարավոր է մեծ շահույթ ստանալ:

Խոշորագույն անդրազգային կորպորացիաները սեփական արտադրության կազմակերպումը ԱՏԳ-ում համարում են իրենց էկսպանսիայի կարևորագույն ուղղություն տեղական շուկաներում և ներկայումս տարբեր ԱՏԳ-ների միջոցով անցնում է համաշխարհային ապրանքաշրջանառության ավելի քան երեսուն տոկոսը:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև ի կատարումն ՀՀ և ՌԴ միջև կնքված միջկառավարական համաձայնագրերի, ղեկավարվելով «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքով, օգտագործելով «ՍԻՏՐՈՆԻԿՍ» ԲԲԸ-ի ղեկավարման տակ գտնվող «ՌԱՕ ՄԱՐՍ» և «ԵրՄՄԳՀ» ՓԲԸ-ների բազայի ներուժը, ինչպես նաև «ՍԻՏՐՈՆԻԿՍ» ԲԲԸ-ի որպես Արևմտյան Եվրոպայի խոշորագույն բարձրտեխնոլոգիական և նորարարական ու ինֆորմացիոն-կոմունիկացիոն տեխնոլոգիաների ռուսական շուկայում առաջատար կազմակերպության կարողություններն ու փորձը՝ «Սիտրոնիկս Արմենիա» ՓԲԸ-ն, հանդես գալով որպես ԱՏԳ Կազմակերպիչ, մշակել է Հայաստանում «ՌԱՕ ՄԱՐՍ» և «ԵրՄՄԳՀ» ՓԲԸ-ների տարածքում երկու ԱՏԳ-ների ստեղծման այս Ծրագիրը՝ արդյունաբերա-արտադրական և տեխնիկա-կիրառական տիպի, բարձր/գիտատար տեխնոլոգիաների և արտադրանքի (high tech), նորարարությունների և R&D գլոբալ ուղղվածությամբ:

Ծրագրի իրականացումը, ինչպես ակնկալվում է, կօգնի պետությանը լուծելու հետևյալ խնդիրները՝

- օտարերկրյա ներդրումների ներգրավման,
- արտահանման ավելացման,
- բարձր և գիտատար տեխնոլոգիաների արտահանման մասնաբաժնի ավելացման,
- նոր աշխատատեղերի ստեղծման,
- չօգտագործվող արտադրական հզորությունների ներգրավման,
- Հայաստանի գիտական և ինժեներական ներուժի մաքսիմալ օգտագործման,
- բնակչության եկամուտների ավելացման,
- որակավորված աշխատուժի ավելացման՝ կազմակերպման, կառավարման, ֆինանսների ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրության և ներդրման հաշվին,
- Հայաստանում նորարարության և նորարարական տնտեսության զարգացման հիմքի ձևավորման,
- տնտեսության մրցունակության բարձրացման:

Ծրագրի հաջող իրականացման համար ծայրահեղ կարևոր է Կազմակերպչի և ՀՀ կառավարության համագործակցությունը, ինչպես նաև պետության մշտական մասնակցությունը և աջակցությունը:

Պետության գիտատար և բարձրտեխնոլոգիական արտադրությունը զարգացնելու, մրցունակ նորարարական տնտեսություն ստեղծելու ամուր մտադրությունը, ինչպես նաև կազմակերպչի՝ Ծրագրի իրականացման համար գզալի ինտելեկտուալ, ֆինանսական և այլ ռեսուրսներ ներդնելու պատրաստակամությունը, կնպաստեն ՀՀ զարգացման երկարատև նպատակների իրականացմանը, «ՌԱՕ ՄԱՐՍ» և «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ների տարածքում ԱՏԳ-ի ստեղծման և զարգացման Ծրագրի բարեհաջող իրականացմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպչի կողմից ներկայացվող
ազատ տնտեսական գոտում գործունեության իրականացման արդյունքների վերաբերյալ

01. .20 թ. - 01. .20 թ.
(հաշվետու ժամանակաշրջանը)

Ազատ տնտեսական գոտու անվանումը _____

Ազատ տնտեսական գոտու գործառնական տեսակը

Կազմակերպչի անվանումը _____

Կազմակերպչի հիմնադրվելու թվականը _____

Պետական գրանցման համարը _____

Պետական գրանցման ամսաթիվը _____

Գտնվելու վայրը _____

Կոնտակտային տվյալները _____

Կազմակերպության գործադիր մարմնի
ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրությունը

Հաշվետվություն

ազատ տնտեսական գոտու կազմակերպչի գործունեության վերաբերյալ

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Պլանավորված	Փաստացի
1.	<p>Կազմակերպչի կողմից մատուցվող ծառայությունների (այդ թվում, էլեկտրոնային) անվանումը (թվարկել բոլոր ծառայությունները)</p> <ul style="list-style-type: none"> • 		
2.	<p>Կազմակերպչի կողմից մատուցվող ծառայության սակագին (թվարկել բոլոր ծառայությունների սակագները, ՀՀ դրամ*)</p> <ul style="list-style-type: none"> • 		
3.	<p>Կազմակերպչի կողմից հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ներդրումների չափը (ՀՀ դրամ) և ուղղվածությունը</p> <ul style="list-style-type: none"> • Ներդրումներ հիմնական կապիտալում (այդ թվում՝ սեփական միջոցներից, այլ միջոցներից՝ ըստ աղբյուրների) • Կապիտալ ծախսեր • Ընթացիկ ծախսեր 		
4.	<p>Կազմակերպչի շահույթը հաշվետու ժամանակաշրջանում (ՀՀ դրամ)</p>		
5.	<p>Մարքեթինգային միջոցառումների համար իրականացված ծախսեր՝ ըստ ուղղությունների (ՀՀ դրամ)</p>		
6.	<p>Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպչի կողմից որպես շահագործող ներգրավված բրենդերը</p>		
7.	<p>Կազմակերպչի կողմից ստեղծված աշխատատեղերի քանակ</p>		
8.	<p>Միջին աշխատավարձի չափը (ՀՀ դրամ) կազմակերպչի</p>		

	կողմից ստեղծված աշխատատեղերի համար՝ ըստ գործունեության տեսակների		
9.	Ազատ տնտեսական գոտու շահագործողների թիվը, զբաղեցրած տարածքի չափը և ժամկետները		
10.	Ազատ տնտեսական գոտու շահագործող չհանդիսացող կազմակերպությունների ցանկը և գործունեության տեսակը (թվարկել)		

* Ցուցանիշը արտարժույթով կատարվելու դեպքում հաշվարկել ՀՀ դրամի ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող տարեկան միջին փոխարժեքով

Հաշվետվություն

հաշվետու ժամանակաշրջանում ազատ տնտեսական գոտում շահագործողի գործունեության վերաբերյալ

NN ը/4	Շահագործողի անվանումը	Շահագործողի գործունեության տեսակը	Շահագործողի կողմից գբաղեցրած տարածքի չափը	Շահագործողի կողմից կատարված ներդրումների ծավալը (դրամ)	Շահագործողի արտահանման ծավալը (դրամ)՝ ըստ ապրանքատեսակների (համաձայն ԱՏԳԱԱ դասակարգի) և արտահանման ուղղությունների	Ընդհանուր իրացումից ստացված հասույթը, (դրամ)	Հայաստանի տարածքում իրացման ծավալը, (դրամ)	Շահագործողի շահույթը հաշվետու ժամանակաշրջանում, (դրամ)	Շահագործողի կողմից ստեղծված աշխատատեղերի քանակը	Միջին աշխատավարձի չափը (դրամ)՝ շահագործողի կողմից ստեղծված աշխատատեղերի համար՝ ըստ գործունեության տեսակների
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.										
2.										
3.										

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱՐԻԵԼՅԱՆ



